

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆԼԵԶՎԻՐԵՆՍԻՏԵՏԻՏ
ИНСТИТУТ ЯЗЫКА И МЕНИ Р. АЧАРЯНА
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

ԼԵԶՈՒ

ԵՎ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

•

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ

LANGUAGE AND LINGUISTICS

2 (19)

2018



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտը:
Լույս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:

Գլխավոր խմբագիր Համբարձումյան Վ. Գ.

Խմբագրական խորհուրդ

Աբաջյան Ա. Հ., Աբրահամյան Կ. Շ., Ավետիսյան Յու. Ս., Բարդակչյան Գ. (ԱՄՆ),
Բարլեզիզյան Ա. Կ., Բրուտյան Լ. Գ., Գալստյան Ա. Ս. (գլխավոր խմբագրի
տեղակալ), Թրագուտ Յ. (Ավստրիա), Խաչատրյան Ա. Հ. (Շվեդիա), Խաչատրյան Գ.
Կ., Կատվալյան Վ. Լ., Կորտլանդտ Ֆ. (Նիդերլանդներ), Հովհաննիսյան Լ. Շ.,
Հովսեփյան Լ. Ս., Սոհամմադի Ս. Ս. (Իրան), Պետրոսյան Վ. Զ., Սարգսյան Ա. Ե.,
Սարգսյան Ս. Ա. (պատասխանատու քարտուղար), Սաքայան Դ. Գ. (Կանադա),
Սիմոնյան Ն. Ս. (գլխավոր խմբագրի տեղակալ), Տեր-Մերկերյան Ռ. (Ֆրանսիա),
Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա):

Главный редактор Амбарцумян В. Г.

Редакционная коллегия

Абаджян А. Г., Абрамян К. Ш., Аветисян Ю. С., Бардакчян Г. (США), Барлезизян А. К.,
Брутян Л. Г., Галстян А. С. (заместитель главного редактора), Катвалян В. Л.,
Мохаммади М. М. (ИРИ), Кортландт Ф. (Нидерланды), Оганесян Л. Ш., Петросян В. З.,
Сакаян Д. Г. (Канада), Саргсян А. Е., Саргсян М. А. (ответственный секретарь),
Симонян Н. М. (заместитель главного редактора), Тер-Меркерян Р. (Франция),
Тонапетян-Демопулос А. (Франция), Трагут Я. (Австрия), Хачатрян А. А. (Швеция),
Хачатрян Г. К.

Chief Editor Vazgen Hambardzumyan

Editorial Board

Abajyan A. H., Abrahamyan K. Sh., Avetisyan Yu. S., Bardakchyan G. (USA), Barlezizyan
A. K., Brutyan L. G., Galstyan A. S. (deputy chiefeditor), Khachatryan A. H. (Sweden),
Knachatryan G. K., Hovhannisyan L. Sh., Katvalyan V. L., Kortlandt F. (Netherlands),
Mohammadi M. M. (Iran), Petrosyan V. Z., Sargsyan A.E., Sargsyan M. A. (editorial
secretary), Sakayan D. G. (Canada), Simonyan N. M. (deputy chiefeditor), Ter-Merkeryan R.
(France), Donabn dian-Demopoulos A. (France), Tragut J. (Austria).

ISSN 1829-0183

© «Լեզու և լեզվաբանություն»

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2018

**ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ. ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Բանասիր. գիտ. թեկնածու Գ. Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Քչերին է վիճակվել դասվել հայագիտության մեծերի շարքում, համաշխարհային ճանաչում ու համբավ ձեռք բերել և իր ժողովրդի հետ հավերժ ապրել: Այդ մեծերից է Հրաչյա Հակոբի Աճառյանը: Ծնվել է 1876 թ. մարտի 8-ին Կոստանդնուպոլսում: Ավարտել է տեղի Կեդրոնական վարժարանը, ապա 1895 թ. մեկնել է Փարիզ՝ սովորելու Սորբոնի համալսարանում: 1898 թ. եկել է Անդրկովկաս և նվիրվել մանկավարժական ու գիտական գործունեությանը: Որպես ուսուցիչ աշխատել է Էջմիածնում, Շուշիում, Նոր Բայազետում: Երբ հիմնադրվել է ԵՊՀ-ը, նրան հրավիրել են որպես հայագիտական, լեզվաբանական և արևելագիտական առարկաների դասախոս: 1943 թ., երբ հիմնադրվել է Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիան, Հ. Աճառյանը ընդգրկվել է ակադեմիայի հիմնադիր անդամների կազմում: Նա նաև Փարիզի լեզվաբանական միության անդամ էր, Չեխոսլովակիայի Արևելյան գիտությունների ինստիտուտի թղթակից անդամ:

Հ. Աճառյանը գիտության այն երախտավորներից է, որոնց հիմնարար աշխատությունները հայագիտության և լեզուների համեմատական քննության բազմազան ոլորտներում ելակետ և ուղենիշ են եղել ու դեռ պետք է ուղենիշ լինեն հայ լեզվաբանների ու բանասերների այսօրվա ու հաջորդ սերունդների համար: Գիտնականի կյանքը հարթ չի ընթացել. կրել է եղեռնի հետևանքներն ու աստանդական կյանքի դժվարությունները, ճաշակել է ծանր աշխատանքով հաց վաստակելու «դառնությունն ու քաղցրությունը» և ի վերջո հանգրվանել մայր հայրենիքում ու իր ամբողջ կյանքը նվիրել հայրենի գիտության զարգացմանն ու առաջընթացին: Եվ զարմանալի չէ, որ իր բազմաբեղուն կյանքի ընթացքում նա վաստակել է գիտական կոչումներ, վայելել իր աշակերտների ու գործընկերների անկեղծ հիացմունքն ու սերը: Ֆիզիկապես թույլ, փոքր տարի-

քում մի աչքից զրկված, հայ ուսուցչի ճակատագրի բերումով քաղաքից քաղաք շրջագայած և միայն գիտությանը զինվորագրված հայ գիտնականը, որի ջանասիրությունը, տոկունությունն ու բարեխղճությունը մշտապես զարմացրել են բոլորին, այսօր հանգչում է Երևանի հայ մշակույթի գործիչների պանթեոնում: Գրանիտե սրբատաշ գերեզմանի վրա արձանագրված է ընդամենը մեկ բառ՝ Աճառյան: Անշուշտ, ոչ մի շիրմաքար չի կարող համեմատվել այն հսկա ու առհավետ կենդանի հուշակոթողի հետ, որը կերտել է նա 60-ամյա տքնաջան աշխատանքով: Այդ կոթողը հայագիտությունն է, պատվանդանը՝ 250-ից ավելի գիտական աշխատանքները, որոնց ձեռագրերի էջերի թիվը հասնում է 32 հազարի, և այս բոլորը, ակադեմիկոս Զահուկյանի բնութագրմամբ՝ «մասնագիտական ամենաբարձր որակումով, ամենաթափնդիր ճշգրտությամբ, վիրտուոզության հասնող նրբությամբ և պարզ ու հստակ շարադրելու մեծ վարպետությամբ»¹: Թե՛ օտար և թե՛ հայ նշանավոր գիտնականները Աճառյանի կատարածը մեծագույն սխրանք են համարում, իսկ կյանքը՝ բացառիկ լեգենդ ու հրաշք: Ավետիք Իսահակյանը գրում է. «Աճառյանի կատարածը մեծագույն սխրանք է. քանի դեռ երկրի երեսին ապրում է գեթ մեկ հայ, կհիշվի մեծատաղանդ լեզվաբան Հրաչյա Աճառյանը»²:

Իրոք, հայերենագիտության մեջ չկա որևէ բնագավառ, որտեղ Աճառյանն իր հիմնարար ներդրումը չունենա և իր վճռական խոսքն ասած չլինի: Նա *հայոց լեզվի պատմության, հայ բարբառագիտության, հայոց լեզվի փորձառական հնչյունաբանության գիտաճյուղերի հիմնադիրն է*: Հ. Աճառյանի ընդհանուր լեզվաբանական հայացքներն արտացոլված են նրա «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» և «Հայոց լեզվի պատմություն» աշխատություններում: Լինելով Ա. Մեյեի աշակերտը՝ Հ. Աճառյանը լեզվաբանության մեջ սոցիոլոգիական կամ հանրալեզվաբանական ուղղության փարիզյան դպրոցի ներկայացուցիչ էր, համեմատական լեզվաբանության մեջ ներկայացնում էր դրա դասական մակարդակը, լեզվի պատմական զարգացման ընթացքի մեկնաբանության մեջ կողմնակից էր էվոլյուցիոնիստական տեսությանը:

¹ *Խ. Բաղիկյան*, Հ. Աճառյան մարդը և գիտնականը, Ե., 2005, էջ 395:

² Նույն տեղում, էջ 399:

Դեռ երիտասարդ տարիներին ծրագրել էր ստեղծել մի աշխատություն՝ նվիրված ինչպես ընդհանուր լեզվաբանությանը, այնպես էլ հնդեվրոպական լեզուների ու հայերենի համեմատական և պատմական քերականությանը: Իր տեսակի մեջ եզակի *«Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուներ»* բազմահատոր աշխատությունը նվիրված է հայերենի պատմահամեմատական, մասամբ նաև տիպաբանական քննությանը: Հայերենի քերականության յուրաքանչյուր առանձնահատկություն հեղինակը քննում է նախ՝ ընդհանուր լեզվաբանական տեսակետից՝ պարզելու տվյալ երևույթի դրսևորումներն աշխարհի լեզուներում, այնուհետև՝ այդ նույն երևույթը ավելի հանգամանորեն ներկայացնում է հնդեվրոպական լեզուներում: Այդ նկարագրությունը կազմում է աշխատության համեմատական քերականության բաժինը, ապա Աճառյանն անցնում է հայերենին՝ քննելով հայերենում այդ երևույթի ընդհանրություններն ու տարբերությունները հնդեվրոպական մյուս լեզուների համեմատությամբ, և վերջապես ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է հայերենի լեզվանյութը տարածաժամանակային համապարփակ ընդգրկումով՝ անդրադառնալով դրա գրաբարյան, միջին հայերենյան, աշխարհաբարյան և բարբառային դրսևորումներին, այսպիսով ամբողջացնելով երևույթի եռակողմ նկարագրությունը՝ *ընդհանուր լեզվաբանական, պատմահամեմատական և բուն հայերենագիտական մոտեցումներով*: Այս գործը հնարավոր չէ շրջանցել հայերենին նվիրված քիչ թե շատ ամբողջական ուսումնասիրություն ձեռնարկելիս:

Հ. Աճառյանի գիտական աշխատությունների մեջ ուրույն տեղ ունի *«Հայոց լեզվի պատմությունը»*՝ երկու հատորով՝ 963 տպագիր էջ (1940, 1951), որոնցում հեղինակն ուսումնասիրում է հայոց լեզվի ծագման, հնդեվրոպական լեզուների ընտանիքում նրա գրաված դիրքի հարցերը, տալիս է հայերենի բառապաշարի ծագումնաբանական դասակարգումը՝ բաժանելով այդ բառապաշարը բնիկ՝ հնդեվրոպական ծագման, հնագույն և նոր փոխառությունների, նաև անհայտ ծագման բառերի: Ճիշտ է՝ Աճառյանից առաջ եվրոպացի (Հ. Պետերման, Հ. Հյուբշման, Ա. Մեյե, Հ. Պեդերսեն, Յ. Կարստ և ուրիշներ) և հայ (Ա. Բագրատունի, Ա. Այտընյան, Ք. Պատկանյան, Ղ. Հովնանյան, Հ. Տաշյան և այլք) մի շարք գիտնականներ զբաղվել են հայերենի ցեղակցության, նրա հնդեվրոպա-

կան բառապաշարի և քերականական կառուցվածքի տարբեր հարցերով, բայց հայոց լեզվի պատմության հանգուցային հարցերի լուծումը վիճակված էր Աճառյանին: Ինչպես վկայում է Հ. Բարսեղյանը, «Հ. Աճառյանը հայոց լեզվի պատմությունը ստեղծում է վերոհիշյալ հեղինակների գիտական աղբյուրների ու սրանց նվաճումների ընդհանրացմամբ, հայոց լեզվի տարբեր փուլերի ու հատվածների սեփական տքնաջան քննությամբ՝ իր ողջ գիտական բեղմնավոր ժառանգության մեջ»³: Աճառյանի այս աշխատանքը բարձր է գնահատվել դեռևս 30-ական թթ. և ձեռագիր վիճակում 1934-ին արժանացել է Երուսաղեմի պատրիարքարանի «Եղիշե Դուրյան» առաջին մրցանակի:

Նշված մենագրության մեջ հեղինակը ներկայացնում է նաև գրական հայերենի պատմական զարգացումը՝ առանձնացնելով հին, միջին և նոր կամ ժամանակակից շրջաններ, տալիս է դրանցից յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունների նկարագրությունը և լեզվական փոփոխությունների ընթացքն ու զարգացման միտումները: Մասնավորապես խոսակցական ու գրական հայերենի տարանջատման և հետգրաբարյան շրջանի հետագա զարգացմամբ մի քանի տասնյակ բարբառների և գրական արևմտահայերենի ու արևելահայերենի գոյացման բնականոն ընթացքի մասին Աճառյանի եզրակացություններն իրենց գիտական հավաստիությունը, վերահաստատումն ու հետագա զարգացումն են գտնում Գ. Ջահուկյանի աշխատություններում, հատկապես հայերենի պատմության շրջանաբաժանման՝ նրա առաջադրած տեսության մեջ, տեսություն, որով հայերենագիտությունը ավելի քան հինգ տասնամյակ առաջնորդվում է իր գիտական քննությունների և որոնումների ասպարեզում:

«Հայոց լեզվի պատմության» երկրորդ հատորի նախավերջին գլուխը, որը նվիրված է գրապայքարին, այսօր էլ արդիական հնչեղություն ունի՝ մեր ազգային լեզվի երկու տարբերակների՝ արևելահայերենի և արևմտահայերենի միավորման փորձերի տեսանկյունից: Կյանքի վերջին 30 տարում ապրելով Հայաստանում և դասավանդելով Երևանի պետական համալսարանում՝ մեծ գիտնականը ընկալել է, որ ազգային լեզուն անխզելիորեն կապված է տվյալ

³ Հ. Բարսեղյան, Հրաչյա Աճառյանը հայոց լեզվի պատմության հետազոտող // «Բանբեր Երևանի համալսարանի», 1976, 3, էջ 37:

ազգի հայրենիքի հետ, որտեղ այն ունի պետական լեզվի կարգավիճակ և միասնական է Հայաստանի Հանրապետության ու սփյուռքի ողջ հայության համար: Անվանի լեզվաբանների տեսակետն է, որ Հ. Աճառյանի աշխատությունների գլուխգործոցը կամ թագն ու պսակը «*Հայերեն արմատական բառարանն*» է: Իսկ ինչո՞ւ ոչ, ասենք՝ «Լիակատար քերականությունը», «Հայոց լեզվի պատմության» երկհատորյակը, «Հայոց անձնանունների բառարանի» հինգ հատորները, «Հայերենի գավառական բառարանը», բարբառագիտական հետազոտությունները, «Հայոց գրերը» աշխատությունը, որոնք, իրավամբ, դարակազմիկ աշխատանքներ են և հեղինակի համար ուրույն տեղ են ապահովում համաշխարհային լեզվաբանության մեջ:

Աճառյանը «Արմատականի» հիմքերը դրել է դեռևս աշակերտական տարիներին՝ Սամաթիայի վարժարանում սովորելիս, և իր կյանքի 40 տարիների ընթացքում անընդհատ համալրել, հարստացրել, ճշգրտել ու մշակել և ամբողջական արդյունքը ամփոփել է սովոր հատորներից բաղկացած մի ծավալուն աշխատության մեջ, որն անվանել է «Հայերեն արմատական բառարան»: Վեց հատորը (1926-1932) բազմացված է ապակետիպով, որի բնագիրն ամբողջովին ինքնագիր է, 7-րդ հատորը՝ որպես հավելված տպագիր է (1935թ.): Արմատական բառարանի առաջին երեք հատորները լույս է ընծայել Երևանի պետական համալսարանը, իսկ մյուսները՝ Մելքոնյան ֆոնդը: Ապակետիպով լույս տեսած վերջին հատորի ավարտին հեղինակը նշել է իր ծանր աշխատանքի ավարտման ոչ միայն տարին, ամիսը և օրը, այլև ժամը. «1932, դեկտեմբեր 21, ժամը երեկոյան 10 (ամբողջը՝ 8344 էջ)»:

«Ծովածավալ մի աշխատություն,- գրում է Է. Աղայանը,- որին նայելն անգամ պատկառանք է ներշնչում»⁴: Աշխատանքը պարունակում է ավելի քան 11 000 արմատների նկարագրությունը ըստ ծագման, բառակազմական հարստության, այսինքն՝ յուրաքանչյուր արմատից ածանցված և բարդված բառերի առկայության, տարբերություններով և բարբառային տարբերակներով, դրանց ստուգաբանության պատմությամբ և այլ հատկանիշներով: Այդ արմատներից նա ստուգաբանել է 5062-ը, որոնցից 927-ը բնիկ հայկական են, հնդեվրոպական ծագում ունեն, 2221 բառ Աճառյանը անվավեր է

⁴ Է. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Ե., 1962, էջ 185:

համարում, 3680-ը մեկնված չեն: Այդ արմատների ստույգ լինելն ու ճշգրտությունը Աճառյանը կատարել է իր ուսուցիչներ պրոֆեսորներ Հյուբշմանի և Անտուան Մեյեի կարծիքները նկատի ունենալով: Ընդ որում Մեյեին հրավիրել էր Հայաստան: Մեյեն շատ գոհ էր մնացել Հայաստանից, հայ ժողովրդից, հատկապես Շուշիից և էջմիածնի մատենադարանից ու Հոգևոր ճեմարանից: Բարձր գնահատելով իր սանի տքնաջան աշխատանքի արդյունքը՝ Մեյեն նշում է, որ «ոչ մի լեզվի համար չկա այսքան ճոխ, այսքան կատարյալ ստուգաբանական բառարան», իսկ էդ. Ադայանը «Արմատական բառարանը» համարում է հայկական բառաքնության հանրագիտարան⁵:

Բանասիրական և ստուգաբանական բնույթ ունի նաև «Հայոց անձնանունների բառարանը» (հհ. 1-5), որտեղ ներկայացվում են V-XV դդ. հայ մատենագրության մեջ արձանագրված անձնանունները ստուգաբանական քննությամբ և այդ անունները կրող պատմական անձանց մասին համառոտ տեղեկություններով: Պատահական չէ, որ է. Ադայանը «Հայոց անձնանունների բառարանը» դիտում է որպես Արմատական բառարանի լրացումը, նշում, որ Անձնանունների բառարանը նույն նշանակությունն ունի հայոց պատմության համար, ինչ որ Հայկազյան բառարանը հայոց լեզվի համար⁶: Բառարանի 4 հատորները հրատարակվել են 1942-1948թթ., իսկ 5-րդը՝ հեղինակի մահից հետո՝ 1962-ին (էջերի թիվը՝ 3138):

Հայտնի է, որ անձնանուններից բացի մեծանուն գիտնականը զբաղվել է նաև տեղանունների բառարանի կազմությամբ, սակայն ամբողջացրել է միայն անձնանունների բառարանը: Տեղանունների հավաքման գործը, ցավոք, անավարտ է մնացել, հասցրել էր քարտագրել միայն 1500 տեղանուն:

Աճառյանի բառագիտական-բառարանագրական գործունեությունը նշված բառարաններով չի սպառվում: Կարևոր է նրա դեկլարությամբ և մասնակցությամբ կազմված «Ռուս-հայերեն շինարարական տերմինների բառարանը», որն ընդգրկում է մեծ քանակությամբ նոր բառեր և բառակապակցություններ (Ե., 1928թ.): Մ. Աբեղյանի և Գր. Ղափանցյանի հետ մասնակցել է նաև «Երկաթուղային տերմինների բառարանի» ստեղծման աշխատանքներին:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ 190-191:

Աճառյանը հեղինակել է նաև գրաբար-բարբառային և առանձին բարբառային բառարաններ, որոնք կցված են հայ բարբառներին նվիրված նրա աշխատություններին:

Բարբառագիտությունը եղել է Աճառյանի գիտական գործունեության անկապտելի մասը՝ սկսած աշակերտական տարիներից մինչև կյանքի վերջին օրերը: Մեծ հայագետի բարբառագիտական գործունեությունը ծավալվել է երեք հիմնական ուղղություններով՝ բառերի հավաքում, հայերեն բոլոր բարբառների տեղի, դիրքի և հիմնական հատկանիշների որոշում, բարբառային միավորների նկարագրություն՝ ծավալուն մենագրությունների ձևով: Նա կազմում է հայերենի բարբառագիտական քարտեզը, տալիս հայ բարբառների ձևաբանական իր դասակարգումը և փորձառական եղանակով քննում բարբառների հնչյունաբանությունը: Բարբառների քննության հնչյունական առանցքը համարում է պատմական և փոխազդեցական հնչյունափոխության երևույթները: Իսկ իր հայտնաբերած «հնչյունական օրենքը» Աճառյանը համարում է իր բոլոր բարբառագիտական աշխատանքների պսակը: Այդ օրենքը վերաբերում է *ա*-ի քմայնացմանը, որի մասին գրում է իր «Վանի բարբառը» գրքում (օրենքի հայտնագործումը՝ 1911թ.):

Աճառյանի շնորհիվ հայ բարբառագիտությունը առանձնացվում է որպես ինքնուրույն գիտակարգ: Նրա բարբառագիտական առաջին աշխատանքներն են «Քննություն Ասլանբեկի բարբառի» (տպ.՝ 1898 թ., «Բազմավեպ» հանդես), 1899-ին՝ «Քննություն Մուշավալի բարբառի»՝ կրկին (տպ.՝ 1899 թ., «Բազմավեպ»), «Արարատ» «Քննություն Ղարաբաղի բարբառի» (տպ.՝ 1899 թ., «Արարատ» ամսագիր): Այս վերջինը հրատարակվում է նաև 1902թ. Մեյեի ամփոփումով: Այնուհետև լույս են տեսնում Աճառյանի բարբառագիտական մյուս աշխատությունները՝ «Ուսումնասիրություններ հայկական գաւառաբանութեան» (1898), «Հայերէնի փոխառեալ բառերը եւ կոչ մը գաւառացի բանահաւաքներուն» (1898), «Ուսումնասիրություններ հայկական բարբառախօսութեան» (1901), «Բարբառախօսութեան օգուտները եւ մատենախօսական «Եւդոկիոյ գաւառաբարբառ»-ին(1901):

Բարբառներում օտար փոխառությունների համար Աճառյանը կազմել է երկու բառարան, որոնք մինչև օրս, կարելի է ասել՝ եզակի են իրենց տեսակի մեջ: Առաջինը «Թուրքերենէ փոխառեալ բառեր

հայերենի մեջ» (1902) աշխատությունն է, որ պարունակում է թուրքերենի միջոցով հայերենին անցած 4000-ից ավել օտար բառեր, որոնք կան Կ. Պոլսի, մասամբ նաև Նոր Նախիջևանի, Վանի, Ղարաբաղի բարբառներում, իսկ մյուսը՝ «Եւրոպական փոխառեալ բառեր հայերենի մէջ», որ հրատարակվել է նախ «Հանդէս ամսօրեայ»-ի 1947-1950թթ. համարներում, թեպետ հեղինակն այն ավարտել էր 1921-ին, սակայն առանձին գրքով լույս է տեսնում 1951թ. Վիեննայում:

1909թ. Աճառյանը Ֆրանսերեն հրատարակում է «Հայ բարբառների դասակարգումը», որի հայերեն վերամշակված տարբերակը լույս է տեսնում 1911-ին: Այդ աշխատանքը ներկայացվել է Սորբոնի համալսարանին որպես դոկտորական ատենախոսություն: Գրքին կցված էր նաև հայ բարբառների քարտեզը: Կուզեինք մեջբերել Կարստի և Մեյեի կարծիքները: «Գիրքը, հակառակ իր ծավալին, կոչված է հիմնադիր լինել նոր հայ բարբառների գիտության,-գրում է Կարստը,- և երբ, ինչպես հույս ունինք, շուտով հայ բարբառագիտության ընդարձակ դաշտը կփայլի իր կատարյալ ծաղկման մեջ, փոքր չի լինի բնավ Աճառյանի՝ ձևով համեստ, բայց ճանապարհ բաց անող այս աշխատության արժանիքը»⁷: Մեյեի գնահատականը Աճառյանին բարձրացնում է համաշխարհային մակարդակի. «Պրոֆ. Աճառյանը,- գրում է Մեյեն,- միակ անձն է աշխարհում, որ կարող էր գրել այսպիսի գիրք: Նա, անշուշտ, միակն է, որ ծանոթ է նյութի եզականապես ցրված մատենագիտության հետ, ապահովապես նա միակն է, որ ունի անձնական դիտողությանց այն պաշարը, որի հետքը ամեն բոլոր երևում է այս դասավորության մեջ»⁸: 1913թ. Թիֆլիսում լույս է տեսնում «Հայերեն գաւառական բառարանը» Էմինյան ազգագրական ժողովածուի Թ հատորում՝ մեկ ներդիր քարտեզով: Սա մեծանուն գիտնականի հետազոտած 31 բարբառների և 70 ենթաբարբառների համահավաք աշխատանքն է, որտեղ քննել է իր ուսումնասիրած բարբառներից տարբեր ժամանակներում հավաքած շուրջ 30 հազար բառ: Այդ տվյալները գործածված են նաև «Լիակատար քերականություն» և «Հայոց լեզվի պատմություն» աշխատություններում: Խ. Բաղիկյանը նշում է, որ պարզ թվաբանական հաշվարկներով Աճառյանի հրատարակած միայն

⁷ Խ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 270:

⁸ Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա-Նոր Նախիջևան, 1911, էջ XI:

բարբառագիտությանը նվիրված գրքերի էջերի թիվը անցնում է 6500-ը: «Եթե սրանց ավելացնենք տարբեր պարբերականների էջերում սփռված «Հայկական» և փոխառյալ բարբառային բառերին նվիրված էջերի թիվը,-գրում է Խ. Բաղիկյանը,- կստացվի մի այնպիսի պատկեր, որ եթե երեք գիտնական ամբողջ կյանքում զբաղվեին միայն հայ բարբառների ուսումնասիրությամբ, դժվար թե կարողանային այդքան գործ անել»⁹:

Կարելի է ասել, որ իր բարբառագիտական հետազոտություններով Աճառյանը մշակում է բարբառների ուսումնասիրության և նկարագրության մի ուրույն համակարգ, որի սկզբունքները հիմք են հանդիսանում իրենից հետո հայերենի բարբառներով զբաղվող լեզվաբանների գիտական ուսումնասիրությունների համար (Ա. Ղարիբյան, Է. Աղայան, Հովհ. Մուրադյան և այլք): Իսկ ակադ. Գ. Ջահուկյանը միանգամայն նոր խոսք է ասում բարբառագիտության մեջ՝ առաջարկելով բարբառների բազմահատկանիշ դասակարգում:

Ինչպես լեզվաբանական բազմաթիվ հարցեր, այնպես էլ *հայոց գրերի ստեղծումը* հետաքրքրել են Աճառյանին դեռևս ուսուցչական տարիներից:

Հայոց գրերին և Մաշտոցին նվիրված է հսկայական գրականություն, որի մեջ առանձնանում են Հ. Աճառյանի ուսումնասիրությունները: Այս գիրքը բաղկացուցիչ մասն է համանուն այն աշխատության, որը դեռ ձեռագիր վիճակում 1905թ. արժանացել էր Լազարյան ճեմարանի մրցանակին: Հիշյալ աշխատանքը, ինչպես ծանուցում է հեղինակը, բաղկացած է եղել 3 մասից: Առաջինը «Ս.Մեսրոպի ու գրերու գյուտի պատմության աղբյուրներն անոնց զննությունը» վերնագրով 1907թ. տպագրվել է Փարիզի «Բանասեր» հանդեսում՝ որպես հավելված և արտատպվել առանձին գրքույկով: Երրորդ մասը հատվածաբար տպագրվել է «Հանդես ամսօրյայում» սկսած 1910թ., իսկ 1928թ. Վիեննայում լույս է տեսնում առանձին գրքով՝ «Հայոց գրերը» խորագրով: Երկրորդ մասը հեղինակի կենդանության օրոք անտիպ էր: Սա էլ, հողվածաշարի ձևով, սակայն ոչ լրիվ, տպագրվել է «Էջմիածին» պարբերականում (1958-1962թթ.): Աճառյանի «Հայոց գրերը» ամբողջական աշխատությունը Է. Աղայանի խմբագրությամբ հրատարակել է Երևանի պետական հա-

⁹ Խ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 263:

մալսարանը 1984թ.: Գիրքը բաղկացած է 3 մասից, 685 տպագիր 16 էջից և ունի 4 ներդիր ցուցակ: «Աճառյանի այս հետազոտությունը լավագույնը և ամբողջականն է մինչև այժմ հրատարակված այն բոլոր ուսումնասիրություններից, որոնք նվիրված են Մեսրոպ Մաշտոցի կենսագրությանը, հայ գրերի գյուտին, հայ գրերի պատմությանը և աղբյուրների քննությանը», -գրում է Աղայանը¹⁰:

Մեսրոպ Մաշտոցի կենսագրությանը նվիրված է գրքի մոտ հինգ վեցերորդ մասը (էջ 69-400): Սա ըստ ամենայնի գիտական կենսագրություն է հարակից բազմաթիվ հարցերի ընդգրկումով և ամենահանգամանալիցն է մինչև այժմ եղածների համեմատությամբ: Հեղինակն օգտագործել է այս ուղղությամբ բանասիրության ձեռք բերած նվաճումները, անդրադարձել է հարցերի, որոնք մասնագետների հետազոտություններում կա՛մ ճիշտ լուծում չեն ստացել, կա՛մ էլ որոշ դեպքերում ժամանակին պատշաճ ուշադրության չեն արժանացել: Աշխատության երեք քառորդը նվիրված է հայոց այբուբենի ստեղծմանը: Հանգամանորեն քննելով պատմիչների վկայությունները հայոց տառերի ստեղծման շարժառիթների, ընթացքի, տառերի թվի, անջատական և կցական այբուբենների տարբերության, հայերենի անջատական լինելու առանձնահատկությունների, ձայնավորների դերի, տարբեր այբուբեններից Մաշտոցի օգտվելու և այլ հարակից հարցերի մասին՝ Աճառյանն անդրադառնում է հայոց գրերի համեմատությանը օտար այբուբենների հետ: Այս բաժնում ի հայտ է գալիս հեղինակի բացառիկ իրազեկությունը հնագույն բոլոր տառերի ոչ միայն արտաքին ձևի, այլև տվյալ լեզվում նրա ունեցած հնչյունական դերի, տարբեր ժողովուրդների գրի արվեստի առանձնահատկություններին: Նվազ արժեքավոր չեն նաև «Հայոց գրերը» գրքի վերջին գլուխները՝ «Մեսրոպեան գրերու դասաւորութիւնը», «Գրերու անունները», «Մեսրոպեան գրերու հնչումը կամ արժեքը», «Մեսրոպեան գրերու տեսակները եւ զարգացումը»: Այս բոլոր հարցերը գիտնականը քննում է նույն սկզբունքով, ինչպես նախորդ գլուխներում, այսինքն՝ տարբեր լեզուների համեմատությամբ, ներքին օրինաչափության բացահայտումով: Իրոք, հանճարեղ Մաշտոցը իր ազգի համար ստեղծել է մի զորեղ զենք, որով հայ ժողովուրդը ոչ միայն հարատևել է, այլև մտել աշխարհի բարձր մշակույթ ունեցող ժողովուրդների շարքն ու ան-

¹⁰ Է. Աղայան, Լեզվաբանական հետազոտություններ, Ե., 2003, էջ 361:

մահացել, իսկ Աճառյանի այդ մեծարժեք հետազոտությունը այսօր էլ առատ նյութ է տալիս հայ գրերի ծագումն ուսումնասիրողներին:

Հ. Աճառյանի գրչին են պատկանում *բանասիրական, գրականագիտական, տեքստաբանական բնույթի հետազոտություններ*: Մեծ գիտնականին հետաքրքրել են նաև հայոց պատմության, գրականության, հայ բանահյուսության հարցերը: Դեռևս Թավրիզում աշխատելու տարիներին (1901թ.) Լազարյան ճեմարանը մրցույթ էր հայտարարել «*Հայ գաղութների պատմություն*» աշխատության վերաբերյալ (Ժամկետը 2 տարի էր): Աճառյանի նման աշխատասեր ու պրպտող գիտնականի համար սկսվում է հետազոտության մեկ այլ բնագավառ: Նա սկսում է հավաքել հայ գաղութների վերաբերյալ եղած բոլոր տեղեկությունները, հուշագրությունները, ձեռագրերի հիշատակարանները, շիրմաքարերի ու եկեղեցիների պատերի ու դռների վրա եղած գրառումներն ու արձանագրությունները: Այս ամենը նա համալրում է իր ճամփորդությունների ժամանակ հավաքած նոր տեղեկություններով, լսած գրույցներով ու ավանդություններով: Այնուհետև համակարգում, դասակարգում և գրում է իր նմանը չունեցող «*Հայ գաղթականության պատմություն*» հսկայածավալ մի աշխատություն, որտեղ հանգամանորեն ներկայացնում է իր ուսումնասիրած 58 հայ գաղթօջախների պատմությունը, հայերի ներդրումներն այդ երկրների քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական, առևտրի և այլ բնագավառներում: *Այս պատմական և ազգագրական* չափազանց կարևոր աշխատանքը, ցավոք, մեծ գիտնականը տպագրված չտեսավ: Այն հրատարակվել է 2002թ. հեղինակի անունը կրող համալսարանի ռեկտոր Ավագ Խաչատրյանի ջանքերով: Տարիների ընթացքում մաշված, խոնացած ու տեղ-տեղ անընթեռնելի դարձած ձեռագիրը հոգատարությամբ տպագրության է պատրաստել հայագետի դուստր Քնարիկ Աճառյանը: Այն խմբագրել են ճանաչված գիտնականներ պատմաբան, ԳԱԱ ակադ. Հ. Ավետիսյանը և լեզվաբան, բ.գ.դ. Հովհ. Բարսեղյանը: Նշենք նաև, որ այս հսկայածավալ աշխատությունը (766 էջ) 1908-ին արժանանում է Լազարյան ճեմարանի մրցանակին: Երբ հեղինակը շարադրում էր այս աշխատանքը, հայ գաղթօջախների մասին գրեթե ոչ մի ամբողջական հետազոտություն չկար: Փաստորեն Աճառյանն առաջինն է զբաղվել հայոց գաղթականության ամբողջական պատմության ստեղծման հարցերով՝ ստեղծելով մի հա-

մապարփակ աշխատանք, որն այսօր էլ չի կորցրել իր կարևորությունը և ունի սկզբնաղբյուրի արժեք:

Մեծ գիտնականի ժառանգության անկապտելի մասն է նաև նրա հարուստ նամականին, էլ չենք խոսում թարգմանությունների մասին:

Հ. Աճառյանի հետազոտության մեթոդներն ու սկզբունքները մեծ ազդեցություն են թողել արդի հայ լեզվաբանության մտքի զարգացման վրա: Այսօր էլ հայերենի պատմահամեմատական ուսումնասիրությունների ոլորտում, հայ բարբառագիտությանն ու հայոց լեզվի պատմությանը նվիրված հարցերի քննության ժամանակ մշտապես դիմում ենք նրա աշխատանքներին՝ որպես ամենավստահելի մեկնակետի: Հ. Աճառյանի աշխատությունների հիմնական արժանիքներից մեկը քննվող նյութի առատության հետ դրա հավաստիության բարձր աստիճանն է:

Հ. Աճառյանի գիտական գործունեությունը, վաստակը գնահատվել է շատերի կողմից, նրանից մեծապես օտվել են հայ լեզվաբանների ու բանասերների շատ սերունդներ, որպես ամենահեղինակավոր գիտնականի՝ հղումներ և մեջբերումներ են արել նրա գործերից, ավելին, հոդվածներ, հետազոտություններ, նաև ատենախոսություններ են նվիրվել նրա գիտական գործունեության այս կամ այն բնագավառին՝ մանրամասն ու խոր վերլուծություններով ամբողջացնելով նրա կերպարը:

Ինչպիսի՞ն է Աճառյանի կերպարը: Հայ լեզվաբանների համար Հ. Աճառյանի *կերպարն ունի խորհրդանշական արժեք*: Նա խորհրդանշել է գիտական անաչառության և անվերապահ նվիրումի գործունեության ի՛ր ընտրած բնագավառին: Նա խորհրդանշել է անսահման աշխատասիրության ու քննախույզ մտքի: Ի դեմս Հ. Աճառյանի՝ մենք տեսնում ենք ազնիվ մարդու ու ազնիվ գիտնականի, որ չնայած կրած դժվարություններին ու դժբախտություններին, նույնիսկ բանտարկությանը՝ իր համոզմունքների մեջ տոկուն է ու անզիջում:

Ավ. Բսահակյանը հուշերից մեկում պատմում է, որ հաճախ էր հանդիպում Աճառյանին: Եվ մի հանդիպման ժամանակ ասում է. «Հրաչյա, այսքան բան մենակ ինչպե՞ս ես արել, մի ամբողջ ինստիտուտ այդքան բան չէր կարող անել»:

-Ավետիք, այդ բոլորը հեչ, ինչ որ արել եմ մինչև հիմա, բոլորը հեչ, բանը սա՛ է, սա՛: Ու ցույց է տվել մի բարակ տետր. բանաստեղծություններ էին: Աճառյանը մեծ սեր ուներ նաև բանաստեղծության նկատմամբ:

-Ի՞նչ հանճարեղ բան ես գրել, որ Արմատական բառարանը և մյուս բոլոր բաները հեչ են, -հարցնում է Վարպետը:

Աճառյանը մի քանիսը սկսում է կարդալ:

Վարպետը լսում է ու ասում. «Հրաչյա, ի՛նչ պարապ բաներով ես զբաղված»:

Վիրավորված Աճառյանը պատասխանում է.

-Դու ամբողջ կյանքումդ ես պարապ բաներով զբաղվել, Ավետիք: Սիրեցի, յարս տարան, ես չէ՞քո գրածը, է, ու՛մ յարը չեն տարել, որ...

Բայց դե Աճառյանը չէր նեղանում և հանգստի ժամանակ շարունակում էր գրել, այդպես են պատմում նրա կենսագիրները¹¹:

Պաշտամունքի աստիճան նվիրվելով հայոց լեզվին, նրա տքնաջան մշակը լինելով՝ Աճառյանը մինչև վերջ էլ չկարողացավ ընդունել արեղյանական նոր ուղղագրությունը:

Նա ապրեց յոթանասուն տարի, ապրեց զարմանալով ու զարմացնելով, մանկան պես պարզ ու անխարդախ, իմաստունի պես լրջմիտ ու պարտաճանաչ: Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, ամենայն իրավամբ կարող ենք ասել՝ քանի ապրում է մարդկությունը, կապրի լեզուն ուսումնասիրող գիտությունը, քանի ապրում է լեզվաբանությունը, կապրի հայերենագիտությունը, քանի ապրում է հայերենագիտությունը, կապրի Հրաչյա Աճառյանը¹²:

Մեծանուն հայագետի գիտական վաստակի գնահատանքի տուրք է նաև այն, որ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը կոչվում է նրա անունով:

Г. М. Мхитарян, Р. Ачарян: жизнь и научная деятельность. - Статья посвящается жизни и научной деятельности великого армянского ученого Р. Ачаряна. Его фундаментальные труды являются исходными и вехой в области арменологии и сравнительного изучения языков не только для нынешних, но и для будущих поколений армянских лингвистов и филологов. Как упомянул академик Г. Джаукян, достоверно можно отметить следующее – пока существует лингвистика,

¹¹ *ԻՄ. Բաղիկյան*, նշվ. աշխ., էջ 210:

¹² Նույն տեղում, էջ 256:

будет существовать и арменоведение, пока существует арменоведение, Г. Ачарян будет жить вечно.

G. M. Mkhitarian, H. Acharyan: Life and Activity.- The article is dedicated to the life and scientific activities of the great Armenian scientist G. Acharyan. His fundamental works are the starting point and milestone in the field of Armenology and comparative study of languages, not only for current, but also for future generations of Armenian linguists and philologists. As it was mentioned by academician G. Jahukyan, the following can be noted authentically: as long as linguistics exists, Armenology will exist, as long as Armenology exists, G. Acharyan will live forever.

Հ Ո Ղ Վ Ա Ր Ն Ե Ր. C T A T Ъ H. A R T I C L E S

ՖՐԱՆՍԵՐԵՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒ ԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Կ. ԲԱՐԼԵՉԻՉՅԱՆ

Մեր օրերում, երբ թարգմանչական գործունեությունն ամբողջ աշխարհում նոր թափ ու ծավալ է ստանում, թարգմանաբանությանն առնչվող խնդիրների քննությունը գնալով ավելի ու ավելի է կարևորվում:

Յուրաքանչյուր լեզվի դարձվածաբանություն լեզվամշակութային ուրույն ու անկրկնելի երևույթ է, ուր արտացոլվում են մի կողմից՝ տվյալ լեզվական հանրության ազգային լեզվամտածողությունն ու աշխարհընկալումը, նրան յուրահատուկ պատկերանշանային համակարգը, մյուս կողմից՝ նրա մշակույթի հոգևոր ու նյութական արժեքները, աշխարհայացքը, հոգեբանությունը, պատմական կենսափորձն ու կենցաղը, բարոյական կանոնները, հավատալիքներն ու սնահավատությունները, սովորույթներն ու ավանդույթները: Ուստի միանգամայն պարզ է դառնում, որ դարձվածաբանությունն առանձնակի տեղ է զբաղեցնում լեզվի բառային համակարգում:

Ի՞նչ կլինեն լեզուն առանց դարձվածքների: Պատասխանն ավելի քան աներկբա է. այն կվերածվեր հուզարտահայտչականությունից գուրկ անգույն ու ճապաղ մի բառակույտի:

Դարձվածքների իմացությունը տվյալ լեզվին տիրապետելու կարևորագույն չափանիշներից է: Մա անժխտելի մի իրողություն է ինչպես լեզվաբանի, այնպես էլ մանկավարժի, և մանավանդ՝ թարգմանչի համար, քանի որ վերջինս մշտապես ստիպված է «մրցել» բնագրի դարձվածքների հետ՝ թարգմանության լեզվում որոնելով դրանց համարժեքները: Այստեղ խնդիրներն իսկապես դժվարին են: Պետք է հաղորդել դարձվածքի իմաստը, պահպանել նրա պատկերավորությունը, ոճական երանգն ու արտահայտչականությունը՝ աշխատելով այս ամենով հանդերձ մնալ դարձվածաբանության


շրջանակներում, մի բան, որ հաճախ անհնար է լինում լիովին իրագործել:

Քիչ չեն դեպքերը, երբ դարձվածքը շփոթվում է ազատ բառակապակցության հետ, թարգմանվում տառացիորեն և տեքստի խեղաթյուրման պատճառ դառնում:

Վերջապես, ոչ մի բառարան չի կարող ընդգրկել տվյալ լեզվի ողջ դարձվածապաշարը կամ ներկայացնել դարձվածաբանական միավորների թարգմանության բոլոր հնարավոր տարբերակները: Ահա թե ինչու մասնագետ թարգմանիչն ու հմուտ մանկավարժը պարտավոր են ոչ միայն խորապես տիրապետել երկու լեզուներին, այլև քաջատեղյակ լինել համամարդկային մշակութային արժեքներին, համընդհանուր քաղաքակրթության նվաճումներին, պատմությանը, դասական ու ժամանակակից գրականությանը, դիցաբանությանը, Աստվածաշնչին, կրոնին, արվեստին, և այլն:

Դարձվածքների թարգմանությունը կարելի է քննել տարբեր տեսանկյուններով և ծավալով՝ ըստ տեսակների, ոճական երանգների, արտահայտչականության ուժի, պատկերանշանային առանձնահատկությունների, և այլն:

Մեր նպատակն է ներկայացնել ֆրանսերեն դարձվածքների հայերեն թարգմանության հնարավոր տարբերակների մի ընդհանրական դասակարգում, որը կամփոփի լեզվական համապատաս-



խանություններն ու տարբերությունները՝ անկախ դարձվածքների տարատեսակներից ու դրանց թարգմանությանն առնչվող մանրամասներից, և այս առումով կիրառելի կլինի ոչ միայն ֆրանսերեն-հայերեն, այլև ցանկացած զույգ լեզուների համար:

Ուսումնասիրված լեզվանյութը, ինչպես նաև «Դարձվածքների և արտահայտությունների ֆրանսերեն-հայերեն բառարան» կազմելու ընթացքում մեր դիտարկումները, նկատառումներն ու մտորումները հիմք են ծառայել կազմելու հետևյալ ամփոփիչ գծապատկերը.

Ինչպես երևում է առաջարկվող դասակարգումից, առանձնա՛նում են թարգմանությունների երեք հիմնական շերտեր՝ *համարժեքներ*, *խոսքաշարային տարբերակներ* և *նկարագրական թարգմանություններ*:

1. *Համարժեքներ*, այսինքն՝ կայուն նույնարժեք համապատասխանություններ: Այս դեպքում տվյալ դարձվածքը կամ նրա որևէ նշանակությունը իր անփոփոխ թարգմանությունն ունի մյուս լեզվում, երբ դարձվածային տարբերակների գոյությունը, հետևապես և ընտրության հնարավորությունը բացառված է, և խոսքաշարը որևէ դեր չի խաղում: Օր.՝ *il n'est pire eau que l'eau qui dort* – մարմանդ ջրից վախեցիր, *ne dormir que d'un œil* – մի աչքը քուն, մյուսն արթուն լինել, և այլն:

Ընդ որում *համարժեքը* կարող է լինել *ամբողջական* և *մասնակի*:

Համարժեքն *ամբողջական* է, եթե վերարտադրում է բազմիմաստ դարձվածքի բոլոր նշանակությունները: Սա հազվադեպ երևույթ է և հիմնականում ի հայտ է գալիս պատճենման կամ երկու լեզուներում նույնական դարձվածքների առկայության դեպքում, որոնց գոյությունը պայմանավորված է մարդկային լեզվամտածողության ընդհանրությամբ:

Տա՛նք ամբողջական համարժեքի մի օրինակ. *ne tenir qu'à un cheveu* – *մազից կախված լինել*.

ա) Խիստ վտանգավոր, օրհասական վիճակում լինել. *Le sort du peuple arménien ne tenait qu'à un cheveu* – Հայ ժողովրդի ճակատագիրը մազից էր կախված:

բ) չիրագործվելու, անհաջողության մատնվելու եզրին լինել. *La réalisation du projet ne tenait qu'à un cheveu* – Ծրագրի իրագործումը

մազից էր կախված:

գ) որևէ աննշան նախապայմանից կախում ունենալ. *Son succès ne tenait qu'à un cheveu* – Նրա հաջողությունը մազից էր կախված:

Ինչպես երևում է օրինակներից, հայերենի «մազից կախված լինել» համարժեքը վերարտադրում է համապատասխան ֆրանսերեն միավորի բոլոր նշանակությունները և խոսքաշարից անկախ, հավասարապես ու անփոփոխ գործածվում ամենուրեք, որի պատճառով համարվում է *ամբողջական*:

Համարժեքը *մասնակի* է, եթե վերարտադրում է ֆրանսերեն բազմիմաստ դարձվածքի նշանակություններից մեկը միայն: Օր.՝ *laisser dans l'abandon*.

ա) բարձիթողի անել. *Il avait laissé les affaires dans l'abandon et il était parti pour Paris* – Նա գործերը բարձիթողի էր արել ու մեկնել Փարիզ:

բ) թողնել բախտի քմահաճույքին. *Il avait laissé ses parents dans l'abandon* – Նա ծնողներին թողել էր բախտի քմահաճույքին:

Այսպիսով, «բարձիթողի անել» և «թողնել բախտի քմահաճույքին» թարգմանությունները *մասնակի* համարժեքներ են, քանի որ յուրաքանչյուրը վերարտադրում է ֆրանսերեն միավորի նշանակություններից մեկը միայն:

Բացի ամբողջական կամ մասնակի լինելուց, համարժեքը կարող է լինել նաև *բացարձակ* և *հարաբերական*:

Համարժեքը *բացարձակ* է, եթե համապատասխանում է մյուս լեզվի դարձվածքին թե՛ իմաստային և թե՛ ոճական տեսակետից, ընդ որում, հիմքում կարող է ունենալ միևնույն կամ բոլորովին այլ պատկեր, բայց լինել նույնքան արտահայտիչ, որքան բնագրի համապատասխան միավորը: Նշենք, որ պատմությունից, դիցաբանությունից, Աստվածաշնչից ծագած դարձվածքները սովորաբար տարբեր լեզուներում պահպանում են նույն պատկերային հիմքը, քանի որ պատճենումներ են: Ամենից ավելի այդ պատկերը փոխվում է ընդհանուր գրական ու մանավանդ ժողովրդախոսակցական և բարբառային ոճերին պատկանող դարձվածքներում, որոնք ազգային լեզվի ինքնատիպ արտահայտություններ են: Օր.՝ ա) *bouc émissaire* (*գրք.*) – քաղության նոխազ (*գրք.*), բ) *après moi le déluge* (*գրք.*) – ինձնից հետո (թեկուզ) ջրհեղեղ (*գրք.*), գ) *rougir jusqu'au blanc des yeux* (*ընդհ. գրակ.*) (բառացի՝ կարմրել մինչև աչքերի սպիտակուցը)

– կարմրել մինչև ականջների ծայրը (*ընդհ. գրակ.*), դ) c'est du beau! (*խսկց. հեզն.*) (բառացի՝ գեղեցիկ է, հիանալի է) – աչքս (աչքներս) լույս (*հեզն.*), ե) se balancer de qch (*զոհկ.*) (բառացի՝ ճոճվել, օրորվել) – թքած ունենալ (*զոհկ.*) և այլն:

Բոլոր օրինակներում ունենք բացարձակ համարժեքներ, քանի որ տրված թարգմանությունները համապատասխանում են ֆրանսերեն միավորներին թե՛ իմաստային, թե՛ ոճական առումով: Միաժամանակ, անկախ այն բանից, թե փոխաբերական ինչ պատկերի վրա են դրանք կառուցված, այդ համարժեքները նույնքան արտահայտչական են, որքան ֆրանսերեն միավորները: Առաջին երկու օրինակներում փոխաբերական պատկերը նույնն է, քանի որ պատճենումներ են, իսկ հաջորդ երեք օրինակներում՝ բոլորովին տարբեր:

Համարժեքը *հարաբերական* է, եթե թարգմանությունը վերարտադրում է դարձվածքի իմաստը, բայց ոչ նրա ոճական առանձնահատկությունները, այսինքն չի արտացոլում ելակետային (թարգմանվող) լեզվի դարձվածքի՝ բառապաշարի այս կամ այն շերտին պատկանելը. ընդհանուր գրական, գրքային, խոսակցական (իր ենթաոճերով՝ ընդհանուր միատարր, մտերմիկ, հասարակաբան, գոեհիկ, ժարգոնային), բարբառային, ծածկաբանությունների, ռամկաբանությունների և այլն, կամ չի արտացոլում դարձվածքի հուզարտահայտչական երանգը: Այսպես, ֆրանսերենի *ça boulotte* դարձվածքը պատկանում է ժողովրդախոսակցական ոճին և հայերեն թարգմանվում է *կամաց-կամաց, գործը տեղից շարժվում է* ձևերով, որոնք ժողովրդախոսակցական արտահայտություններ չեն, իսկ *faire une belle campagne*, որ բառացի նշանակում է «գեղեցիկ արշավանք կազմակերպել», թարգմանվում է *գուր տեղը ջանքեր գործադրել* համարժեքով, որը չի արտահայտում ֆրանսերեն միավորի հեզնական երանգը: Ինչպես տեսնում ենք, երկու օրինակներում էլ հայերեն թարգմանությունները հարաբերական են, քանի որ դրանցում ինչ-որ բան «կորչում» է, որի պատճառով հայերեն տարբերակները գործառական տեսակետից թերի են մնում: Հմմտ. նաև՝ c'est à encadrer *հեզն.* (բառացի՝ շրջանակելու, շրջանակի մեջ դնելու բան է) – ծիծաղելի՝ ծիծաղաշարժ՝ ծաղրաշարժ մի բան է. il y a de l'eau dans le gaz *խսկց.* (բառացի՝ ջրի մեջ գազ կա) – մթնոլորտը շի-

կանում է, վերահաս վեճի՝ վիճաբանության նշաններ են երևում, և այլն:

Այսուհանդերձ, հարաբերական համարժեքների գործածությունը հաճախ անխուսափելի է դառնում, քանի որ յուրաքանչյուր լեզվի դարձվածաբանություն ունի ազգային ուրույն կնիք, և միշտ չէ, որ հնարավոր է բացարձակ համարժեքներ գտնել:

2. Թարգմանությունների երկրորդ շերտն են կազմում *խոսքաշարային տարբերակները*: Անվանումն արդեն իսկ հուշում է այն մասին, որ օտար միավորի դիմաց գոյություն ունեն տարբերակներ, որոնք իմաստային կամ ոճական երանգներով նույնը չեն: Ուստի, եթե կան տարբերակներ, կա նաև ընտրության հնարավորություն և պահանջ: Իսկ ընտրությունը, բնականաբար, պայմանավորված է խոսքաշարով: Ֆրանսերենի խոսակցական ոճին պատկանող *avoir le cafard* դարձվածքը նշանակում է *վհատվել, տրտմել, թախծել, տխրել, հուսալքվել, մոայլ՝ մեղամաղձոտ տրամադրության մեջ լինել*, և նրա դիմաց հայերենում կան իմաստային կամ ոճական գանազան նրբերանգներով օժտված մի ամբողջ շարք դարձվածային հոմանիշներ՝ *սիրտը կտորվել, սիրտը կտոր-կտոր լինել, գլուխը կախ անել, վիզը ծռել, ունքերը կիտել, նոթերը կիտել, թնաթափ լինել, ուսերը կախ գցել, թները թուլանալ* և այլն, որոնցից յուրաքանչյուրի գործածությունը թելադրվում է որոշակի խոսքաշարով: Օր. *Il regardait le champ de bataille. Il avait le cafard* - Նա դիտում էր ռազմի դաշտը: Սիրտը կտոր-կտոր էր լինում:

Այս օրինակում վերոհիշյալ հոմանիշ տարբերակներից ոչ մեկը չի կարող լիարժեքորեն փոխարինել «սիրտը կտոր-կտոր լինել» դարձվածքին:

3. Երրորդ շերտը *նկարագրական թարգմանություններն* են, որոնց կարելի է դիմել այն դեպքերում միայն, երբ հայերենում չկա որևէ, թեկուզ մոտավոր, դարձվածային համարժեք: Այսպես՝ *brûler les planches* (բառացի՝ բեմն այրել) դարձվածքը թարգմանվում է «ավյունով՝ մեծ ոգևորությամբ խաղալ, կրակոտ խաղով վարակել հանդիսատեսին» նկարագրական արտահայտություններով: *Հմմտ. նաև՝ être à la page* (բառացի՝ էջի վրա լինել) – նորաձև լինել, ժամանակին համընթաց շարժվել, *avoir son pain cuit* (բառացի՝ հացը եփված թխված լինել) – վաղվա մասին չմտածել, ապահովված լինել, խնայողություններ՝ հոգեպահուստ ունենալ, և այլն:

Ասվածն ամփոփելու և պարզելու համար, թե դարձվածք թարգմանելիս որն է գլխավոր խնդիրը, պետք է կրկին անդրադառնանք այն հարցին, թե ինչ իմաստ ենք դնում գլխավոր, ելակետային համարվող «բացարձակ» եզրի մեջ՝ կիրառելով այն դարձվածաբանական միավորների վերաբերյալ: Բացարձակ ենք համարում այն թարգմանությունը, որը համարժեք է բնագրին թե՛ իմաստային և թե՛ ոճական-արտահայտչական առումով: Նշանակում է՝ ամբողջական-բացարձակ և մասնակի-բացարձակ համարժեքները, ինչպես նաև խոսքաշարային-բացարձակ տարբերակները (տե՛ս գծապատկերը) այն եղանակներն են, որ ապահովում են լիարժեք թարգմանությունը: Հարաբերական համարժեքներն ու նկարագրական թարգմանությունները, ընդհակառակը, խրախուսելի չեն, քանի որ լեզվական միջոցների համագործությունը գնահատվում է ոչ թե ձևական, այլ գործառական չափանիշներով: Թարգմանիչը դիմում է տարբեր գիտակարգերի օգնությանը, սակայն նրա աշխատանքի հիմքը վերջին հաշվով մնում է տեքստը, իսկ տեքստի նկատմամբ ունեցած լեզվաբանական մոտեցումը՝ գործառական համարժեքությունը:

Վերջապես, անհրաժեշտ ենք համարում նշել թարգմանության վերոհիշյալ երեք հիմնական շերտերի միջև առկա մի կարևոր տարբերություն: Համարժեքները պատկանում են լեզվի ոլորտին, իսկ խոսքաշարային տարբերակներն ու նկարագրական թարգմանությունները՝ խոսքի, քանի որ առաջին շերտի միավորներն աչքի են ընկնում իրենց կայունությամբ և խոսքային միջավայրից անկախ գործածությամբ, իսկ վերջին երկուսի միավորները՝ ընդհակառակը:

Գրականություն

1. *Բաղիկյան Խ. Գ.*, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986:
2. *Բարլեզիզյան Ա. Կ.*, Դարձվածքների և արտահայտությունների ֆրանսերեն-հայերեն բառարան, Ե., 2018:
3. *Բեդիրյան Պ. Ս.*, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973:
4. *Բեդիրյան Պ. Ս.*, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011:
5. *Սուքիասյան Ա. Ս., Գալստյան Ս. Ա.*, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:
6. *Назарян А. Г.* Фразеология современного французского языка, Москва, 1987.
7. *Ashraf M., Miannay D.* Dictionnaire des expressions idiomatiques françaises, Paris, 1995.
8. *Rey A., Chantreau S.* Dictionnaire des expressions et locutions, Le Robert, Paris, 1997.
9. Французско-русский фразеологический словарь, Сост. В. Г. Гак и др., Москва, 1963.

А. К. Барлезиян, Особенности перевода французских фразеологических единиц на армянский язык. В настоящей статье предлагается обобщающая классификация переводов французских фразеологизмов на армянский язык, согласно которой выделяются три основных случая: 1. эквиваленты, которые подразделяются на полные, частичные, абсолютные и относительные, 2. контекстуально обусловленные варианты, и 3. описательные переводческие соответствия. Предлагаемая классификация касается не только армяно-французских переводческих соответствий и в силу своего универсального характера может быть применена для любой пары языков.

A. K. Barlezizyan, About the Armenian Translation of the French Idioms. The article presents a general classification of Armenian translated French idioms, based on which three main varieties of translation are pointed out: a) equivalents, that can be complete, partial, absolute and relative, b) contextual versions and c) descriptive translations. The presented classification is actual not only for French – Armenian, but for any other pair of languages.

**«ԻՆՉՊԵ՞Ս ԵՔ (ԵՍ)». ՈՐՊԻՍՈՒ ԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԻՈՍՈՂԱԿԱՆ
ԱԿՏԸ ՄԻՋՄՇԱԿՈՒ ԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Բանասիր. գիտ. դոկտոր Լ. Գ. ԲՐՈՒՅՅԱՆ

Արդի փուլի լեզվի մասին գիտությունը՝ մարդակենտրոն լեզվաբանությունը, հնարավորություն է տալիս նոր լույսի ներքո լուսաբանել և ավելի խորությամբ ուսումնասիրել կարծես թե արդեն ակնհայտ և վաղուց ուսումնասիրված փաստերն ու երևույթները: Այսօր տարաբնույթ շփումների բուռն ընդլայնումն ու ակտիվացումը ամենատարբեր մշակույթների ներկայացուցիչների միջև հանգեցրել է հետաքրքրության կտրուկ աճի ընդհանրապես հաղորդակցման և, մասնավորապես, միջմշակութային հաղորդակցման նկատմամբ: Վերոնշյալի լույսի ներքո ուրվագծվում է արդյունավետ միջանձնային և միջմշակութային հաղորդակցման տարբեր կողմերը հետազոտելու *հրատապությունը* և *կարևորությունը*, խոսողական տարաբնույթ ակտերի հաղորդակցային գործաբանական կողմերը առավել խորությամբ վերհանելու, ինչպես նաև նոր լույսի ներքո խոսքային վարվելակարգի տարբեր ձևերի ուսումնասիրության հրամայականը:

Հոդվածի *նպատակն* է վերլուծել խոսքային վարվելակարգի մի մասնավոր ձև՝ որպիսության մասին խոսողական ակտը, այն է «Ինչպե՞ս եք (ես)» հարցը, դրա գործածությունը և մշակութային տարբերություններով ու գործաբանական գործոններով պայմանավորված մեկնաբանություններն ու պատասխանները: Սույն խոսողական ակտի քննությունը հաղորդակցային լեզվաբանության, գործաբանական լեզվաբանության, լեզվամշակութաբանության, վերջապես՝ միջմշակութային հաղորդակցման տեսության հայեցակետերից վերհանում է, ի թիվս նմանությունների, զգալի տարբերություններ, որոնց գիտակցումը կարող է նպաստել միջմշակութային թերընկալումներն ու բախումները նվազագույնի հասցնելուն:

Խոսքային վարվելակարգի հայտնի մասնագետ Ն.Ի. Ֆորմանովսկայան, ով հաղորդակցման կարծրատիպային բանաձևերը համարում է յուրաքանչյուր մարդուն այդքան անհրաժեշտ «սոցիալական շոյանքներ», գրում է. «Մենք ամեն օր և բազմիցս օգտագործում ենք խոսքային վարվելակարգի արտահայտություններ. դիմում

ենք մարդկանց, ողջունում ենք նրանց, հրաժեշտ ենք տալիս, շնորհակալություն հայտնում, ներողություն ենք խնդրում, շնորհավորում ենք տոնի առթիվ, հաջողություններ մաղթում և այլն, և այլն: Մենք կարեկցում և ցավակցում ենք, հավանություն ենք տալիս և հաճոյախոսում, ինչ-որ բան ենք խորհուրդ տալիս, ինչ-որ մեկին հրավիրում, մի բանի մասին խնդրում և այդ ամենն այնպես ենք անում, որ հաշվի են առնվում շփման պաշտոնական կամ ոչ պաշտոնական միջավայրը, ինչպես նաև մեր սեփական դերակատարությունը գրուցակցի դերի վերաբերյալ, և շփման կոնկրետ իրավիճակը, և ազգային սովորույթներն ու բարքերը: ...Ողջունելու, որպիսությունը հարցնելու, շնորհակալություն հայտնելու, ներողություն խնդրելու, շնորհավորելու և մաղթանքներ ասելու բոլոր ձևերի միակ նպատակը «շոյելն» է:

- Ողջույն, ինչպե՞ս են գործերդ:
- Ամեն ինչ կարգին է: Իսկ քո՞ մոտ:
- Ինձ մոտ էլ ոչինչ: Դե, հաջո՞ղ:
- Հաջո՞ղ – ահա և փոխանակեցինք «շոյանքները»:

Բանն այն է, որ խոսքային վարվելակարգը իրականացվում է անմիջական շփման իրավիճակում, երբ «այստեղ» (հանդիպման կետում) և «հիմա» (հանդիպման պահին) «ես» և «դու» բացեփաց փոխանակում ենք «շոյանքները»¹:

Խոսքային վարվելակարգի կարծրատիպային բանաձևերը, որ նախ և առաջ բարյացակամության, գրուցակցի նկատմամբ բարեհաճ վերաբերմունքի նշաններ են, կրում են վառ արտահայտված ազգային-մշակութային յուրահատկություններ: Ինչպես նշում է Ն.Ի. Ֆորմանովսկայան, «խոսքային վարվելակարգի ազգային յուրահատկությունը յուրաքանչյուր երկրում չափազանց վառ է, քանի որ լեզվի անկրկնելի առանձնահատկություններին գումարվում են ծեսերի, սովորույթների, վարքագծում ընդունված և չընդունված ամեն ինչի, սոցիալական վարվելակարգում թույլատրվածի և արգելվածի առանձնահատկությունները: Երբեմն ամենաանսպասելի կերպով են արտահայտվում խոսողների խոսքային վարքի ազգային-մշակութային առանձնահատկությունները»²: Կովկասյան ժողովուրդների մոտ, օրինակ, գոյություն ունեն հստակորեն տարբերակ-

¹ Н. И. Формановская, Речевой этикет и культура общения, М., 1989, էջ 47-48, 52.

² Նույն տեղում, էջ 152:

ված ողջույնի, հրաժեշտի, կարեկցանքի, դիմումի և այլնի ձևեր, որոնք ծառայում են բարյացակամություն, հարգանք և կարեկցանք արտահայտելու, դիմելու համար: Դրանցից մի մասը որոշ չափով տարբերվում է ռուսերենի համապատասխան խոսքային բանաձևերից³:

Սովորաբար առաջին հարցը, որ մարդիկ տալիս են միմյանց ողջունելուց հետո, լինում է «Գործերդ ինչպե՞ս են (ո՞նց են)», «Ինչպե՞ս եք»: Կարծես կարծրատիպային հարցեր են, որ պահանջում են նույնպիսի կարծրատիպային պատասխաններ: Մակայն, ինչպես վկայում է միջմշակութային հաղորդակցման փորձը, արդեն այդ՝ խոսքային փոխգործունեության սկզբնական փուլում հաճախ առաջանում են լուրջ խնդիրներ, մշակութային բախումներ: Դրանցից խուսափելու կամ առնվազն դրանք նվազագույնին հասցնելու համար անհրաժեշտ է իմանալ, թե տարբեր մշակույթներում ինչպես է ընդունված պատասխանել նման դեպքերում: Այսպես, անգլերենը, «համաձայն մշակույթի պահանջներին, ազգային բնավորությանն ու հոգեկերտվածքին, ընդունում է գործնականում միայն մեկ պատասխան՝ «*Fine, thank you* [Շնորհակալություն, լավ]»՝ «անգամ եթե խոսողն անհուսորեն դժբախտ է կամ մահամերձ: *How are you?*»-ն շփման դատարկ ձև է, որը չի ենթադրում իրական հետաքրքրություն գրուցակցի անձի նկատմամբ, դա ընդամենը շփման հրավերի ձևական ընդունումն է»⁴: Նման ոչինչ չնշանակող հարցերի ու պատասխանների ձևական փոխանակումից հետո անգլիացիներն անմիջապես անցնում են բուն գրույցին: Անգլերենի այս պատասխաններում «սեփական գործերից գրուցակցին հեռու պահելու, սեփական խընդիրներով նրան չծանրաբեռնելու, անձնական կյանքի ու սեփական խնդիրների մասին չտարածվելու ձգտումն է: Ուստի *fine, thank you*՝ անգամ մահվան մահճում»⁵: Նույնն է ամերիկյան մշակույթում, որում, վերոնշյալից գատ, չափազանց կարևոր է համարվում հաջողակության գաղափարը, հետևաբար ցանկացած իրավիճակում ամերիկացիների շուրթերից չենք լսի որևէ այլ պատասխան, բացի «*Fine*» կամ «*OK*»-ից: Ամերիկացին պետք է լինի (ավելի ճիշտ՝ ցույց տա), որ

³ Տե՛ս *Р.Б. Сабаткоев, Речевой этикет как важное средство воспитания культуры общения // Материалы IX Конгресса МАПРЯЛ, Братислава. Доклады и сообщения российских ученых, М., 1999, էջ 472:*

⁴ *С. Г. Тер-Минасова, Язык и межкультурная коммуникация, М., 2008, էջ 227.*

⁵ *С. Г. Тер-Минасова, Война и мир языков и культур, М., 2008, էջ 171.*

հաջողակ է, խնդիրներ չունի, կյանքից գոհ է:

Միանգամայն այլ խոսքային վարվելակերպ են դրսևորում նման իրավիճակում ռուսները, ինչը պայմանավորված է նրանց ազգային բնավորությամբ, հոգեկերտվածքով: «Ռուսական մշակույթում հակառակն է. եթե մարդը հետաքրքրվում է, ինչպե՞ս «չպատմես գործերիդ մասին...»⁶: Շփման ընթացքում ամենատարածված հարցին «Ինչպե՞ս եք», որպես կանոն, ռուսը «սկսում է շարադրել հանգամանալի, հաճախ ծավալուն պատասխան՝ նկարագրելով իր առողջությունը, ընտանեկան հանգամանքները, հաջողություններն ու տհաճություններն աշխատավայրում...»⁷: Ռուսը, ինչպես կատակով ասում են անգլիացիները, «սկսում է պատմել, որ նրա կինը հիվանդացել է, իսկ անպիտան տղան սկսել է վատ սովորել»⁸. Ինչպես արդարացիորեն նշում է Ս. Գ. Տեր-Մինասովան, «ռուսական մշակույթում ընդունված է տալ «ազնիվ» պատասխան՝ նկարագրելով իրական վիճակը... Չգիտես ինչու տարածված են բողոք-պատասխանները՝ առողջությունից, դեկավարությունից, ընտանեկան հանգամանքներից: Ի պատասխան *ինչպե՞ս եք* ձևական առօրեական հարցին Ռուսաստանում կարելի է լսել տխուր ավարտուն վիպակներ.

Գլուխս պայթում է, տառապում եմ արյան ճնշումից, Կոլկան վատ է սովորում, չգիտեմ ինչ անեմ, դասատուները բողոքում են:

Սա ի՞նչ կյանք է: Առավոտից գիշեր աշխատում եմ, մարդու երես չեմ տեսնում:

Մի կերպ քարշ ենք գալիս:

Ոչինչ, բայց մայրս անդադար հիվանդ է, հայրս էլ իրեն լավ չի զգում:

Վերջին ժամանակներս սեփական կյանքը «փնտվելու» միտումն այնքան է ուժեղացել, որ «*Գերագանց*», «*Բոլորից լավ*» և նման կայտառ լավատեսական պատասխաններն ընկալվում են զարմանքով և հաճախ անվստահությամբ՝ որպես հեզմանք կամ հակիմաստություն...»⁹:

Կան նաև այլ պատճառներ, թե ինչու ռուսները «*Ինչպե՞ս եք*» հարցին չեն պատասխանում «*Լավ*» կամ առավել ևս «*Շատ լավ*» և այլն: Ս.Գ. Տեր-Մինասովան այդ կապակցությամբ գրում է. «...Գլուխ

⁶ Նույն տեղում:

⁷ Ս. Գ. Թեր-Մինասովա, Язык и межкультурная коммуникация, էջ 227.

⁸ Ս. Գ. Կարա-Մурза, Манипуляция сознанием, М., 2001, էջ 18.

⁹ Ս. Գ. Թեր-Մինասովա, Война и мир языков и культур, էջ 171.

գովել, թե «*շատ լավ եմ*», պետք չէ. կարելի է հարուցել նախանձ, կարող են աչքով տալ, և հետո մարդկայնորեն սխալ է՝ իսկ եթե զրուցակցի կյանքում ամեն բան վա՞տ է: Գերադասելի է մի փոքր մոայլ գույներ ավելացնել ու կարեկցանք հարուցել¹⁰»: Հմմտ. այս կապակցությամբ հայտնի ռուս հասարակական գործիչ Իրինա Խակամադայի հարցազրույցից մի հատված, որը նա տվել է «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի (2009 թ., 5. 11) լրագրողին.

Խակամադա. ...երբ ձեզ հարցնում են, ինչպե՞ս եք, պատասխանեք, թե ամեն ինչ վատ է: Թեպետ իրականում հնարավոր է, որ ամեն ինչ ձեր կյանքում հրաշալի է: Պետք չէ ի ցույց դնել սեփական հաջողությունները: Դա շատերին գրգռում է:

Լրագրող. Իսկ ես կարդացել եմ այլ հոգեբանական մեթոդներ, համաձայն որոնց, հակառակը, խորհուրդ է տրվում ասել, որ ձեզ մոտ ամեն ինչ գերազանց է:

Խակամադա. Դրանք ամերիկյան սկզբունքներ են, Ռուսաստանում դրանք չեն աշխատում: Մեր մարդիկ նախանձ են, հաջողությունը իրար չեն ներում:

Ռուսների մոտ հանդիպում է նաև միջինացված պատասխան՝ «*Ничего*», որը նշանակում է «ո՛չ լավ, ո՛չ վատ»: Բայց եթե խորանք նման պատասխանի մեջ, արդյո՞ք դա չի նշանակում, որ առհասարակ ոչինչ չկա, ոչինչ տեղի չի ունենում: Ահա թե ինչ է գրում Ն. Ի. Ֆորմանովսկայան ռուսական մշակույթում «*Как дела?*» հարցի մեկնաբանության կապակցությամբ. «Խոսքային վարվելակարգում «շոյելու» սոցիալական էությունը չտեսնելը կնշանակի սխալ մեկնաբանել հանդիպած ծանոթի *Как дела? Как здоровье?* հարցը: Չէ՞ որ այդ դեպքում ոչ ոք չի ակնկալում ի պատասխան լսել գործերի ու առողջության վիճակի մանրամասն շարադրանքը»¹¹: «Մինչդեռ, – շարունակում է հեղինակը, – նման մեղադրանքներ են հնչում. եթե չի ցանկանում լսել մանրամասներ առողջությանս մասին, հապա ինչու՞ է հարցնում: Դա վիրավորում է և Ե. Եվտուշենկոյին: Ահա մի հատված նրա «Քաղաքականությունը բոլորի արտոնությունն է» հոդվածից. «Որքա՞ն ժամանակ ենք մենք կորցնում հիմար ժամանակի վրա, որը լոկ մարդկային շփման պատրանք է ստեղծում: Փորձեք ձևական «Ինչպե՞ս եք» հարցին լուրջ պատասխան տալ, պատ-

¹⁰ Նույն տեղում:

¹¹ *Н. И. Формановская*, նշվ. աշխ., էջ 53:

մել, թե ինչպես եք անքուն գիշերներ անցկացնում, ինչպիսի բար-
դություններ կան ընտանիքում, ինչպես եք կորցրել հավատը ձեր և
կյանքի նկատմամբ, և ձեր գրուցակիցը ձեզնից, կարծես գծից, սար-
սափից կընկրկի»¹².

Ռուսների ու օտարերկրացիների, հատկապես անգլալեզու
մշակույթների կրողների միջև հաճախ մշակութային բախումներ են
առաջանում գրուցակցի գործերին վերաբերող հարցի տարբեր պա-
տասխանների հետ կապված: Ս.Գ. Տեր-Մինասովայի խոսքով՝
«օտարերկրացիները տարակուսում են, թե ինչու են ռուսները ծա-
վալուն պատասխաններ տալիս, ռուսները վիրավորվում են օտար-
երկրացիների քամահրանքից»¹³: Ստորև միջմշակութային նման
բախման օրինակ. «Մոսկովյան «Մովբեմեննիկ» թատրոնի հանրա-
հայտ ռեժիսոր Գ. Վոլչեկը պատմում էր, որ Ամերիկայում գտնվելիս
յուրահատուկ փորձ է անցկացրել: «*How are you?*» հարցին անմի-
ջապես վրա է բերել՝ «Ամուսինս ինքնասպան է եղել»: Ի պատաս-
խան լսել է ընդունված «Շատ ուրախ եմ» պատասխանը: Այստեղ
կարևոր է ոչ այնքան պատմության հավաստիությունը, որքան վի-
րավորանքը արտասահմանում բազմիցս ճամփորդած, կիրթ ու
կարդացած հանրահայտ մարդու, որը, այդուհանդերձ, իրավիճակն
ընկալում է համաձայն ռուսական ավանդույթների յուրահատկու-
թյունների»¹⁴:

Բերենք մշակութային բախման ևս մեկ օրինակ, որի մասին
պատմում է «Ռուսական այլումինի» ընկերությունում աշխատող մի
կին. «Վերջերս ես գրուցում էի իմ նոր գործընկերներից մեկի, երի-
տասարդ մի ռուս կնոջ հետ, որի ղեկավարը ավստրալիացի է: Աշ-
խատակցուհին գանգատվում էր. «Նա ամեն օր ինձ հարցնում է,
ինչպես են գործերս, և երևակայությունս այլևս չի հերիքում ամեն
անգամ նոր պատասխան տալու»: Ս.Գ. Տեր-Մինասովան այս կերպ
է մեկնաբանում. «Ավստրալիացի ղեկավարը, տալով սովորական
հարց-ողջույնը, ամենայն հավանականությամբ, չէր էլ պատրաստ-
վում լսել իր ենթակայի խնդիրները»¹⁵.

Վերլուծվող հարցին պատասխանելիս ռուսներին մոտ վար-

¹² Նույն տեղում:

¹³ *С. Г. Тер-Минасова, Язык и межкультурная коммуникация*, էջ 227.

¹⁴ *А. В. Павловская, Как иметь дело с русскими. Путеводитель по России для деловых людей*,
Москва, 2003, էջ 19-20.

¹⁵ *С. Г. Тер-Минасова, Война и мир языков и культур*, էջ 171-172.

քաղի՞ծ են ցուցաբերում չեխերը: Որպես օրինակ բերենք Կ. Չապեկի ակնարկների գրքից մի հատված՝ դրա հերոսների խոսքային վարքագծի Ն.Ի. Ֆորմանովսկայայի մեկնաբանությամբ:

- Բարով տեսանք, ո՞նց եք:
- Շատ վատ, ոչ մի լավ բան չկա:
- Էլ մի ասեք: Ի՞նչ է եղել:
- Է՛հ, գիտեք, դարդերս շատ են...
- Ախր դուք ի՞նչ գիտեք դարդն ինչ է: Երա՛նի ձեր չափ դարդ ունենայի:
- Դե, սիրելիս, իմ մաշկի մեջ որ մտնեիք, կհասկանայիք ինչն ինչոց է... – Իսկ ձեր գործերն ինչպե՞ս են:
- Ի՞նչ ասեմ, այնքան էլ լավ չեն:
- Իսկ առողջությու՞նը:
- Ոչինչ: Տա՞նն ինչ կա:
- Ոչինչ, ճկրում ենք:
- Դե լավ, բարով մնաք:
- Հարգանքներիս հավաստիքը:

«Տպավորություն չի՞ ստեղծվում արդյոք, – գրում է հետազոտողը, – թե գրուցակիցների գործերը լավ չեն ընթանում: Սակայն, շարադրելով նման երկխոսությունը, Կ. Չապեկը ասում է, որ եթե ընթերցողը հասկանա, թե իրար հանդիպող մարդկանց մոտ ամեն ինչ այդքան էլ լավ չէ և որ առողջությունն էն չէ, ապա նա կսխալվի: Պարզապես չեխը մեկին հանդիպելիս ըստ ընդունված կարգի, սովորության հակված չէ ասելու, որ իր կյանքում ամեն ինչ լավ է ընթանում, նա ավելի շուտ նախընտրում է դժգոհել: Սակայն նա դժգոհում է առույգ ձայնով՝ կարծես թե գլուխ է գովում, որ հոգսեր ունի, հպարտանում է իր դժվարություններով և տխրելու շատ առիթներով, քանի որ նրա ընկալմամբ առանց դժվարությունների կարող է ապրել միայն անբան մարդը: Այնինչ լուրջ մարդու գլխում հոգսեր են միայն: Իսկ եթե մտերիմը «Ինչպե՞ս են գործերդ» հարցին պատասխանի, որ նրա համար ամեն ինչ լավ է, ապա անմիջապես ադոտ կասկած կառաջացնի. նա ինչ-որ բան է թաքցնում»: Ն. Ի. Ֆորմանովսկայան իրավամբ ամփոփում է. «Ահա՛ որքան հետաքրքիր են խոսքային վարվելակարգի գործածության ազգային առանձնահատկությունները»¹⁶:

¹⁶ Н. И. Формановская, *նշվ. աշխ.*, էջ 153:

Աղիգները գործերի մասին տարբեր ձևերով են հարցնում՝ կախված տարվա եղանակից: Աշնանն, օրինակ, հարցնում են. «Յուդո՞ւ տ է արդյոք անասունը», «Լա՞վ էք աշունն անցկացնում», գարնանը. «Հաջո՞ղ էք գարունը դիմավորում», իսկ ձմռանը. «Ինչպե՞ս էք ձմեռն անցկացնում»¹⁷: Եթե ռուսները հարցնում են. «Ինչպե՞ս է առողջությունդ», ապա հին եգիպտացիները գտնում էին, որ կարճատև հանդիպման ընթացքում ժամանակ չկա, ոչ էլ իմաստ կա առողջությունը մանրամասնորեն նկարագրելու: Նրանք հարցը ստույգ էին դնում. «Ինչպե՞ս էք քրտնում»: Ինչպես կարելի է տեսնել, խոսքային վարվելակարգի ամենաբազմազան կարծրատիպային ձևերը մարդկանց բարքերն են արտացոլում:

Այժմ դիտարկենք, թե ինչպես են հայերը իրենց դրսևորում նման իրավիճակում: Հայերս, թե՛ ազգային բնավորության առանձնահատկություններով և թե՛ ընդհանուր առմամբ կյանքի դժվար պայմաններով պայմանավորված (մանավանդ՝ վերջին տասնամյակներում), սիրում ենք կյանքից դժգոհել, խոսել մեր խնդիրների մասին: Այդ է պատճառը, որ ի պատասխան որպիսության մասին հարցերին (որոնց թվում է այդ իմաստով շատ բնութագրող «Ի՞նչ կա-չկա» հարցը, որը չունի համարժեքներ այլ լեզուներում), սովորաբար հնչում է բողոքների մի ամբողջ շարան. բողոքներ կյանքից, բախտից, փողի բացակայությունից և այլն: Կա մ հնչում է «Ոչինչ» պատասխանը (որի մասին խոսվել է վերը), կա՛մ էլ հաճախ «Կանք, էլի»: Վերջին պատասխանը կարելի է դիտարկել որպես խտացված տեքստ, որով զրուցակցին հակիրճ կերպով հայտնվում է, որ հասցեատերը լուրջ չի ֆիզիկական գոյությունն է պահպանում, և որ այս կյանքում իրեն քիչ բան է ուրախացնում: Վերջին տասնամյակներում անգամ որպիսության մասին բուն հարցը ոչ կոռեկտ է համարվում, քանի որ ենթադրվում է, որ հայերի մեծ մասն ապրում է իրար նման վատ և տխուր: Այդ է պատճառը, որ հաճախ հնչող պատասխաններից է «Բոլորի պես»-ը, որը հասկացվում է «Բոլորի պես վատ»: «Լավ», «Շատ լավ» պատասխաններն այդ հարցին անգամ պարկեշտ չէ և հաճախ ընկալվում է որպես խրոխտանք: Ռ.Ռ. Գրձելյանը մատնանշում է և խոսակցական լեզվում հնարավոր (սակայն, ավելացնենք, գործնականում այսօր բացակայող) «Բողկի պես» պատասխանը, որը նշանակում է «Գերազանց»: Հեղինակի

¹⁷ Տե՛ս նույն տեղում:

խոսքերով, «նման հարանշանակությունը ծագել է, ամենայն հավանականությամբ, «ամուր, տոուզ» հատկանիշի հիման վրա, ինչը գնահատվում է բողկի մեջ որպես նրա լավ որակի նշան»¹⁸: Սակայն, ինչպես ցույց են տալիս կենդանի խոսույթի նպատակաուղղված դիտարկումները, երիտասարդ հայերի խոսքում գերակշռում են լավատեսական, հակիրճ պատասխանները, որոնք համապատասխանում են ռուսերեն «Լավ», «Շատ լավ», ավելի ստույգ՝ «Fine», «OK» ձևերին, և դա վկայում է մշակույթների ինտեգրման, և առաջին հերթին՝ ամերիկանացման մասին: Հարկ է ավելացնել, որ վերջերս մեր երկրում տեղի ունեցած շրջադարձային իրադարձություններով պայմանավորված, այսօր ավելի շատ են հնչում լավատեսական պատասխանները:

Այսպիսով, ինչպես ցույց տվեց քննությունը, հաղորդակցման գործընթացի սկզբնական փուլի անգամ այդպիսի, առաջին հայացքից կարծես թե կարծրատիպային հաղորդակցման բանաձևը, որը միտված է անհակամարտ, խաղաղ շփման հիմք ստեղծելուն, ինչպիսին է «Ինչպե՞ս են գործերը» հարցը, կարող է տարակերպ մեկնաբանություններ ունենալ հաղորդակիցների կողմից՝ պայմանավորված բազմաթիվ գործաբանական գործոններով (տարիքային և այլ հանրամշակութային գործոններով, այլ մշակույթների ազդեցությամբ և այլն) ինչպես մեկ լեզվամշակույթի սահմաններում, այնպես էլ տարբեր մշակույթներում (կախված ընդունված հանրամշակութային նորմերից):

Л.Г. Брутян. “Как дела?”: речевой акт осведомления о делах в контексте межкультурной коммуникации. В статье анализируется один из типов речевого акта, а именно, речевой акт осведомления о делах в контексте межкультурной коммуникации. Показывается, что вопрос “Как дела?” может иметь разные интерпретации как в рамках одной, так и, тем более, в разных культурах, что важно знать во избежание межкультурного непонимания и даже конфликтов.

Lilit G. Brutian. “How are you?”: the speech act of inquiries about affairs in the context of intercultural communication. In the paper, one of the types of speech acts, namely, the speech act of inquiries about affairs is analysed in the context of intercultural communication. It is shown that the question “How are you?” can have different interpretations within one and the same culture, as well as in different cultures, which is necessary to know to avoid intercultural misunderstanding and even conflicts.

¹⁸ *Р.Р. Грдзелян, Слово в ореоле смысла, Ереван, 2007, էջ 78.*

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒ ՄԼԵՐ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Մեր նախորդ մի հոդվածում անդրադարձել էինք միջին հայերենի շրջանում կատարված արաբական մեծաթիվ փոխառությունների հնչյունական, հատկապես բաղաձայնական համակարգի դրսևորումներին՝ երևան հանելով նրանց մի շարք օրինաչափությունները հայերենի պատմական զարգացման այդ շրջանում գործառած բաղաձայնական համակարգերի հետ, ինչպես նաև ցուցաբերած առանձնահատկությունները¹:

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, արաբերենից այս շրջանում կատարված փոխառությունները հետաքրքիր յուրահատկություններ են դրսևորում ոչ միայն հնչյունաբանական մակարդակում, այլև ձևախմբաստային քննության համատեքստում, որին ստորև կանդրադառնանք:

Խոսքիմասային պատկանելության առումով արաբական փոխառությունների միջինհայերենյան բառաշերտում ևս (ինչպես դա բնորոշ էր փոխառված բառերի՝ մեր կողմից դիտարկված բարբառային բառաշերտին) ամենամեծ բառախումբը գոյականն է: Արաբերեն փոխառություններին նվիրված մեր ուսումնասիրություններում² անդրադարձել ենք այն հարցին և պարզաբանել, թե ինչու արաբերեն փոխառությունները, մեծաթիվ լինելով հանդերձ, ենթարկվում են հայերենի թեքման համակարգի օրինաչափություններին. հայերեն բարբառների արաբերեն փոխառությունները, օրի-

¹ Արաբերենից փոխառված բառերը կազմում են միջին հայերենի շրջանում կատարված փոխառությունների մեծ մասը. ըստ Հ. Աճառյանի «Արմատական բառարանի»՝ դրանց թիվը 702 է (հեղինակն իր մեկ այլ աշխատանքում նշում է, որ «թեև ցանկը ստվար է, բայց ոչ՝ ամբողջական». տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., 2013, էջ 213, իսկ Յ. Կարստի «Միջին հայերենի բառարան» աշխատության մեջ, որը գրվել է ավելի ուշ, քան Հ. Աճառյանի «Արմատական բառարանը», մատենագրական նոր նյութերի համալրմամբ դրանց թիվը հասել է 1100 բառի. տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա., Ե., 1972, էջ 199): Ս. Միքայելյան, Միջին հայերենի շրջանում կատարված արաբական փոխառությունների բաղաձայնական համակարգը // «Լեզու և լեզվաբանություն», 1, 2017, էջ 37-48:

² Ս. Միքայելյան, Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունների ձևախմբաստային քննություն // «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ», Ե., 2014, էջ 121-123:

նակ, կրում են տվյալ բարբառի կամ խոսվածքի հոլովման և խոնարհման համակարգի օրինաչափությունները: Նշենք միայն, որ դա բացատրվում է փոխաստու և փոխառու լեզուների՝ տարբեր լեզվաընտանիքներին պատկանելու, տարբեր լեզվակառուցվածք ունենալու և այդպիսով քերականական ձևեր փոխառելու և կիրառելու անհնարինությամբ: Հայերենի՝ խնդրո առարկա շրջանի փոխառությունները նույնպես գործառել են այս սկզբունքով՝ ենթարկվելով խոսքիմասային՝ միջին հայերենի թեքման համակարգին բնորոշ օրինաչափություններին:

Գոյականի դեպքում առավել ուշագրավ են թվի և հոլովի կարգերի արտահայտման ձևերը: Միջին հայերենում թվի քերականական կարգը դրսևորվում է եզակի/հոգնակի իմաստային հակադրությամբ: Որպես միջինհայերենյան առանձնահատկություն՝ նշվում է երկակի թվի որոշ արտահայտությունների առկայությունն այս շրջանում, մասնավորապես՝ *-վի* ձևությամբ կազմությունների գործառումը³: Դա, սակայն, հստակ ձևավորված արտահայտություն չունի, իմաստային սահմանազատում չի ստանում, ուստի չի առանձնացվում (հիմնականում կիրառվում է մարմնի զույգ անդամներ նշանակող բառերի հետ): Հոգնակերտ ձևությունները, իրենց հերթին, բազմաթիվ են (դրանց թիվն անցնում է երկու տասնյակից), թեև գործառության ծանրաբեռնվածության տեսանկյունից՝ անհավասար բաշխված⁴: Արաբերենում երկակի թիվը հստակորեն իրացվում է *ṣni-* ձևությամբ կիրառմամբ, որը, բնականաբար, փոխառյալ բառերում, գործածված չէ: Այսպիսով՝ որպես հոգնակի թվի ցուցիչներ՝ փոխառյալ բառերին կցվում են միջինհայերենյան հոգնակերտ որոշ ձևություններ, հիմնականում՝ *-նի*, *-անի*, միավանկ բառերի դեպքում՝ *-եր*, անձի առման դեպքում՝ *-ք*: Այսպես՝ *մելիք* «իշխան» (արաբ.՝ *malék*⁵) - *մելիքնի*, *կլայ* «բերդ, ամրոց» (qal#a) - *կլանի*, *կապայ* «զգեստի տեսակ» (qabṣ) - *կապանի*, *մնիրայ* «մզկիթի աշտարակ» (minṣra) - *մինարանի*, *տարպայ* «անգամ» (darba) - *տարպայնի*, *հալիճ*

³ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Բ, Ե., 1975, էջ 35:

⁴ Առավել մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 36-63:

⁵ Փոխառյալ բառերի գրառման համար գործածվել է Baskerville MT for Brill 02 տառադարձի համակարգը (տե՛ս www.brill.com), իսկ նրանց համարժեք ձևերի ու իմաստների՝ հայերեն նշված աշխատություններում տրված տարբերակները մեր կողմից համեմատվել են "Al-Qṣmās al-jadīd", Ե., 1985 (արաբերեն) և X. Баранов, Большой арабско-русский словарь, т. 1, 2, М., 2002 բառարաններում ներկայացված տարբերակների հետ: Արաբերեն բառերի՝ վերոնշյալ աղբյուրներում ներկայացված տառադարձումը ճշգրտվել և միօրինակացվել է:

«անուշահոտ համեմ» (hawš'ij) - *հալիճանի, մուլք* «հարստություն, սեփականություն» (mulk) - *մլքեր, պուրճ* «բուրգ, աշտարակ» (burj) - *պրճեր, կուռայ* «դուրան կարդացող, հոգևորական» (qurrša) - *կուռայք*⁶ և այլն:

Միջինհայերենյան շրջանի արաբերեն փոխառությունները ենթարկվում են այս շրջանին բնորոշ հոլովման համակարգի ընդհանուր օրինաչափություններին: Առավել շատ են *ի* արտաքին հոլովմանը պատկանող բառերը, հատկապես, որոնք ունեն *-այ* վերջավորությունը. օրինակ՝ *խուխայ* «ամբոխ, աղմուկ» - 𐭪𐭭𐭮𐭭 («կոիվ, խռովություն»): *խուխայ* - *խուխայի* - (*q*)*խուխա* - *խուխե* - *խուխով*: Նույն կերպ են հոլովվում *մնիքայ* «մզկիթի աշտարակ» (minšra), *հինայ* «բուսատեսակ և նրա ներկը» (hinonš), *կուռայ* «դուրան կարդացող, հոգևորական» (qurrša), *բակլայ* «բակլա կոշված ընդեղենը» (baqla), *քուշնայ* «ուտելու ընդեղեն» (kušn©) և այլն:

Ի տարբերություն գոյականների, որ փոխառությունները հարյուրների են հասնում, ածականները չեն գերազանցում մեկ-երկու տասնյակը. դրանք հիմնականում որակական ածականներ են՝ *ալանի* «հայտնի, հրապարակավ» (#alané), *մուխաստրայ* «փորձաքափոր, վտանգավոր» (muxšāara), *մաշղուլ* «զբաղված» (mašġāl) և այլն: Դրանց շարքում ուշագրավ են պարսկերենի *bi* բացասական մասնիկով և արաբերեն գոյականներով կազմված *բէխասպար* «անտեղյակ» (արաբ.՝ xabar «տեղեկություն, լուր»), *բէսիֆաթ* «աներես, տձև» (šifa «1.կերպ, ձև, 2. դեմք»), *բէվաֆայ* «անհավատարիմ, անվստահելի» (wafš «հավատարմություն, վստահություն») բառերը:

Արաբերեն փոխառությունների միջինհայերենյան բառաշերտում, դատելով մեզ հասած աղբյուրներից, գրեթե չկան թվականական ձևեր: Թերևս որպես բացառություն կարելի է համարել *ռուպ/րուպ* «քառորդ, չորրորդ մասը» (rub#), *թուենիթ* «րուպեի վաթսուներորդ մասը՝ 1/60» (ʔšnēat), *թուելիդ* «առաջինի վաթսուներորդ մասը» (ʔšliʔat «երրորդ») կոտորակային թվականների առկայությունը միջին հայերեն գրավոր հուշարձաններում:

Դերանունները առհասարակ լեզուներում սակավ են փոխառվում: Այդ առումով թերևս զարմանալի չէ, որ միջին հայերենի շրջանի արաբերեն փոխառություններում, որքանով կարողացանք պար-

⁶ Գործածված է միայն հոգևակի թվով:

զել⁷, դերանվանական միակ փոխառված ձևը *ֆուլան* «այսինչ, ոմն» (fulṣn) անորոշ դերանունն է:

Գոյականից հետո փոխառությունների խոսքիմասային մյուս մեծ խումբը, թեև անհամեմատ ավելի քիչ (ըստ մեր հաշվումների՝ մի քանի տասնյակ) կազմում են բայերը: Հարկ է նշել, սակայն, որ դրանք ոչ թե արաբերեն բայեր են, այլ արաբերենից փոխառված բառերի և միջինհայերենյան բայակազմական ձևերի միջոցով ստեղծված նորակազմություններ: Դրանք իրենց կառուցվածքով մեծ մասամբ պարզ են և ձևավորվել են հիմնականում արաբերենի գոյական (հիմնական ձևությ) + միջին հայերենի անորոշ դերբայի -ել, -իլ վերջավորություն (երկրորդական ձևությ) կադապարով. *ալկել* «անասունին կեր տալ, սնուցել» (արաբ.՝ #alēq «տավարի կեր, որ դնում են տոպրակի մեջ»), *խսարել* «պաշարել» (Ēisṣr «պաշարում»), *հիլայել* «ամբաստանել» (Ēila «նենգություն, խարդախություն»), *մլքել* «տիրել» (mulk «հարստություն, սեփականություն»), *մունետկել* «աճուրդի դնել, հայտարարել» (munṣdē «մի բան բարձրաձայն հայտարարող անձ»), *շպել* «պաղլեղով թրջել» (šabb «պաղլեղ»), *մահմիզել* «խթանով զարնել» (mihmaz/mihmšz «խթան»), *խումրիլ* (իմա՝ *խումարիլ*) «հարբել» (xumṣr «հարբեցությանը հաջորդող թմրությունը»), *խալտիլ* // *դալտիլ* «սխալվել» (Ḥalaṯ «սխալ, թերություն»), *ֆլեհիլ* «աճել, զարգանալ (ծառը)» (falṣē «հաջողություն ունենալը, բարգավաճելը»): Կազմությամբ հարադիր բայերը միջին հայերենի շրջանի՝ արաբերենից փոխառված բառաշերտում շատ չեն: Դրանցից են՝ *ալափ* (առնել) // *ալափ* (տալ) «կողոպտել, թալանել» (#alaf «անասուններին տրված կեր կամ խոտ»), *ի ժղուլ լինել* «զբաղվել» (āuḥl «զբաղմունք»):

Արաբերեն փոխառությունների միջինհայերենյան բառապաշարում չենք հանդիպում սպասարկու խոսքի մասերի, որոնք արաբական լեզվամտածողության խոսքիմասային դասակարգմամբ ընդգրկվում են երրորդ՝ *մասնիկ* (Ēarf) խմբի մեջ:

Ինչ վերաբերում է դրանց բառակազմական առանձնահատկություններին, ապա նկատենք, որ այդ շրջանի՝ արաբերենից փոխառված բառերի մի շերտ, գործառության առումով առավել կենսունակ գտնվելով և հիմնական բառապաշարի մեջ մտնելով, փոխառու լեզվի բառերի նմանությամբ բառակազմական կառույցներ է

⁷ Հ. Սճադյան, Հայերեն արամատական բառարան, հ. Դ, էջ 622:

ձևավորել⁸: Մասնավորապես, մատենագրության մեջ արձանագրված են բառածանցման, բառաբարդման՝ միջին հայերենին բնորոշ եղանակներով ստեղծված մի շարք նորակազմություններ, որոնց մի մասը գործառույթ է անգամ արդի գրական հայերենում և բարբառներում: Այսպես՝ առավել կենսունակ, նախահար *ան-* և վերջահար *-արար*, *-ութիւն*, *-իկ*, *-ակ*, *-ուտ*, *-ոտ*, *-անք*, *-ի* ածանցներով և արաբերենից փոխառալ բաղադրիչով են կազմված *անդաւի* «դատից, պահանջից ազատ» (*da#wa* «դատ, պահանջ»), *անխալապայ* «առանց կովի» (*Çalaba* «բռնություն, տիրապետություն»), *անդալատ* «անսխալ» (*Çalaâ* «սխալ, թերություն, սխալմունք»), *անուշուր* «տասանորդից ազատ» (*#uâr* «տասանորդի տուրք»), *խալապարար* «կովարար» (*Çalaba* «բռնություն, տիրապետություն»), *աճապարար* «ձեռնածու» (*#ajab* «զարմանալիք»), *շպարար* «ներկարար» (*âabb* «պաղլեղ»), *խումարութիւն* «հարբեցության թմրությունը» (*xumšr* «հարբեցությանը հաջորդող թմրությունը, 2. զարթոյում»), *մելիքութիւն* «իշխանություն» (*malêk* «տեր, իշխան»), *ռափկութիւն* «հավասար բաժիններով կազմված ընկերական կոչունք, հանգանակ» (*rafêq* «ընկեր»), *ռամզարկութիւն* «հողով հմայելը» (*raml* «ավազով հմայություն»), *մունետիկ* «մի բան բարձրաձայն հայտարարող անձ» (*munšdê*), *հարամիկ* (*Èaramê* «ավազակ»), *կոլոտիկ* (*qulšâ/qalaâ* «գաճաճ (մարդ. նաև շուն կամ կատու)»), *սալակ* «փոքր կողով» (*salla* «մեջը հաց և այլն դնելու կողով»), *հալֆայուտ* «հալֆա խոտով լցված հոդ» (*Èalfš* // *Èalaf* «սեզերի տեսակին պատկանող խոտ»), *հիլիոնուտ* «ծնեբեկով լի տարածք» (*halîân* «ծնեբեկ»), *նաֆասուտ* «շնչարգելություն ունեցող» (*nafas* «շունչ»), *ժղանք* «մանր-մունր գիտելիք, զբոսանք» (*âuÇl* «զբաղմունք»), *հաճի* «ուխտավոր» (*hšjê* «ուխտավոր»), *հարամի* «ավազակ» (*Èaramê*) և այլն⁹:

Բառաստեղծման մյուս՝ բառաբարդման եղանակով կազմված, միջին հայերենի շրջանին վերագրվող մատենագրության մեջ գործածված բառերից ուշագրավ են *հայերենի հիմնական ձևույթ + արաբերենից փոխառյալ հիմնական ձևույթ* կամ հակառակ համա-

⁸ Միջին հայերենի շրջանում կատարված արաբերեն փոխառությունները և նրանց ստուգաբանություններն առանձնացրել ենք ըստ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» (հհ. Ա.-Դ., Ե., 1971-1979), Ռ. Ղազարյանի, Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանի», Ե., 2009: Տե՛ս նաև Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2. «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Բ:

⁹ Հմտ. «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, էջ 254-256:

դրմամբ ձևավորված կադապարներով առանց հոդակապի կամ հոդակապով կազմված բարդ բառերը¹⁰: Դրանցից են՝ *խաչալամ* // *խաչալէմ* «խաչադրոշ, խաչվառ» (#alam «դրոշ, դրոշակ», հատկապէս՝ «դրոշակի ծայրն անցուած լուսնաձև կամ թաթանման նշանը»), *իշխուպայգ* «մեծ մոլոշ կամ տուղտ» (xubbšz «մոլոշ»), *շէրասաց* «բանաստեղծ, երգիչ» (ä#r «երգ, բանաստեղծություն»), *ռամտես* «գրբաց» (raml «ավագով հմայություն», բուն իմաստն է՝ «ավագ»), *սալազուգ* «կողով հյուսող, զուգող» (salla «մեջը հաց և այլն դնելու կողով») և այլն: Միջին հայերենի *ա* հոդակապով կազմված բառերից են՝ *զեհետաժողով* «մոլլաների հավաք» (zšhid «1.ժուժկալ, ճգնավոր, 2.կրոնավոր»), *կապալառու* «կաշառք վերցնող անձ» (qabšla «պարտքով վերցնելու գործողությունը և պարտամուրհակը»), *կապալատու* «կաշառք տվող անձ» (qabšla «պարտքով վերցնելու գործողությունը և պարտամուրհակը»), *նալակտուր* «պայտի կտոր» (na#l «պայտ»), *նաղաշագործ* «նկարիչ» (naqqšà «զարդանկարիչ»), *նաղաշքար* (naqqšà «զարդանկարիչ»), *զանգակապուրճ* «զանգակատուն» (burj «բուրգ»), *մլքատէր* «սեփականատեր, ունեցվածքի տեր» (mulk «հարստություն, ունեցվածք»), *մարգարտամավիճ* «մարգարտյա ալիքներով» (mawj «ալիք, կոհակ») բարդ բառերը: Նման կազմությունների մեջ ուշագրավ է նաև *ջիտաքար* բառը, իմաստն է՝ «պարտիզաքար, լազկարդ քարը»: Միջնադարյան բժշկության մեջ կիրառվող քարը այս շրջանի բժշկապետերի կողմից գործածված է նաև *ջիուտ քար* (Մխիթար Հերացի), *ջիտի քար* (Ամիրդովլաթ Ամասիացի) տարբերակներով: Արաբերեն juhâd նշանակում է «հրեա»: Միջինհայերենյան տարբերակները արաբերեն Ėajar-al-juhâd կամ Ėajar-al-yuhâd հատկացուցչային կապակցությունների նմանությամբ են կազմվել, որոնք բառացի նշանակում են «հրեայի քար»¹¹: Այստեղ տեղի է ունեցել *մասնակի* բառապատճենում. բարդ բառի բաղադրիչներից մեկը թարգմանաբար է վերցվել, իսկ մյուսը պարզապես փոխառվել է: Սա, իր կազմությամբ, թերևս եզակի օրինակ է:

Այսպիսով, պարզվում է, որ միջին հայերենի շրջանում արաբերենից կատարված փոխառությունները, օտարամուտ բառեր

¹⁰ Բարդությունների տեսակները տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, էջ 253-254:

¹¹ Այսպես է կոչվում Հրեաստանի մեջ առատորեն գտնվելու պատճառով (տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, էջ 128):

լինելով հանդերձ, ըստ էության քերականական և բառակազմական յուրահատկություններ չեն ցուցաբերում և իրենց կիրառության սահմաններում ենթարկվում են փոխառու լեզվի կառուցվածքի օրինաչափություններին:

С. А. Микаелян – Морфологические и словообразовательные особенности среднеармянских арабских заимствований. В статье рассматриваются морфологические и словообразовательные особенности среднеармянских арабских заимствований. Как показывает исследование, несмотря на то, что заимствования многочисленны, грамматические и словообразовательные особенности, по сути, не выявляют и по мере их употребления подчиняются закономерностям заимствующего языка.

S. A. Mikayelyan – The morphological and word-formative manifestations of Arabic borrowings of Middle Armenian period. The article examines the morphological and word-formative manifestations of Arabic borrowings of Middle Armenian period. The study shows that the borrowed words, with their large number in the language, do not necessarily have grammatical and word-formative features, and are subject to the structural rules of the language borrower within the scope of their usage.

ԲԱՆԱԿԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ. ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ. DISCUSSIONS.

ՍՏՈՒ ԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒ ՄԼԵՐ

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Գ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

1. Հայ. *ալաբուլա* < հալաջ, hala bula

Այս բառն ունի §Հայոց լեզվի բարբառային բառարանը¹, §խայտաբղետ², (*փխբ.*) §տարօրինակ, կասկածելի՝ իմաստներով, սակայն չի հանդիպում Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի բառարաններում³. հմմտ. հայ. (խսկց.-բրբռ.) Աչքին *ալաբուլա* է երևում (Տմի տեսակ տարօրինակ է՝ սովորական չէ և այլն)՝ արտահայտությունը:

Կարելի է կարծել, որ բառը հայերենում փոխառություն է թյուրքական լեզուներից, որոնց մի ճյուղի ներկայացուցիչ է հանդիսանում հալաջերենը, որում գտնում ենք hala bula §խայտաբղետ՝ բառակապակցությունը²: Չենք կարծում, թե փոխառությունը անմիջական է, այլ ավելի իրական է անցումը ընդհանուր խոսակցական թուրքերենից:

2. Հայ. (բրբռ.) *փալախ* (< *բալախ*) < հե. *bó-

Քիչ չեն հայերեն բարբառային այն բառերը, որոնք բնիկ են (ունեն հնդեվրոպական ծագում), սակայն տեղ չեն գտել, կամ մասամբ են հանդիպում հայերենի ստուգաբանական բառարաններում³: Աճառյանի «Արմատական»-ում, օրինակ, հայ. *բալախ* «անապատային վայրի խոտ. փշաբույս» (իմաստի նշանակումը՝ Աճառյանի) համարվում է փոխառյալ վրաց. *բալախի* «խոտ» (և նրանից կազմված, ընդ որում միայն գրականում լեզվում գործածվող բուսանուններ՝ *բալախկվերցիա* «հոռոմ սամիթ», *բալախիկիչվա* «կվենի» և այլն), որն այնքան էլ համոզիչ չէ մի քանի պատճառներով:

¹ «Հայոց լեզվի բարբառային բառարան», հ. Ա, Ե., 2001, էջ 11: Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, էջ 90: Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 24:

² Տե՛ս Դ. Դեբբեր, О состоянии исследования халаджской группы языков // «Вопросы языкознания», 1972, 1, էջ 95:

³ Տե՛ս Ն. Մ. Միտոնյան, Հայ բարբառների հնդեվրոպական հնաբանությունները // «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», 1, Ե., 1979, էջ 188-250:

1) Վրացերենի որևէ բարբառում այդ բառը գործածված չէ, չունի լայն տարածում այդ լեզվի մյուս տարբերակներում (հմմտ. հայ. *մածուն* բառը, որ փոխառություն է հայերենից՝ վրացերենում. վրաց. *մացունի*, որ չի հանդիպում վերջինիս բարբառներում, այլ գործածվում է միայն գրականում, ընդ որում խուլի շնչեղացմամբ):

2) Բառը տարածված է հայերենի մի շարք բարբառներում (Ալշ., Բլ., Երև., Սուշ և այլն)՝ *փալախ* «մի տեսակ դաշտային խոտ, որից կեմ են պատրաստում» (իմա՝ Աճառյանի բացատրությունը), որից՝ *փալախոտ* (Բդ. բրբռ.). այս վերջինը, ի դեպ, կա՛մ բառասեղմման արդյունք է (*փալախոտ* < *փալախախոտ*), կամ *փալախ*-ի գործածություն, իբրև բառաբարդման բաղադրիչ՝ *բալ*- տարբերակով, որն ինքնին հետաքրքիր է:

3) Հայերեն գրավոր աղբյուրները, թեև մասամբ են հին, սակայն ունեն բառի ավելի նախնական գործածություն, ըստ ՆՀԲ-ի՝ *Վրք. հց.* (= «Վարք հարանց»), Բ, 590, *Ամիր. Բժշկ.* (= Ամիրդովլաթ Ամասիացի, «Բժշկարան»)⁴:

4) Եթե նույնը դիտենք, ինչ մյուս (Աճառյանի «Արմատական»-ի)՝ նախորդ բառահոդվածը՝ *բալախ* «սնոտի, չնչին, աննշան» (վկայություն՝ Ս. Գիրք՝ Եփր օրին., էջ 268, Եփր. Համար., էջ 93, Թիւք, ԻԱ, 5), ապա այդ երկուսը, կարելի է կարծել, որ նույնը պիտի լինեն, այս II-ի իմաստը լավագույնս համապատասխանում է բրբռ. *փալախ*-ի «ոչ կարևոր, երկրորդական (խոտ)» իմաստին. Նկատի ունենանք, որ հայ. (բրբռ.) *փալախ* (<*բալախ*) նշանակում է «ոչ կանոնավոր, այլ խառնիխուռն, վայրի աճած խոտ» [հմմտ. բրբռ.՝ *փրրչուփալախ* «(անկանոն՝ ի միջի այլոց) խոտ»]:

Այս ամենից հետո, կարծում ենք, որ հայ. *բալախ* (բրբռ. *Փալախ*) բառը բնիկ է, ամենայն հավանականությամբ ծագում է հե. *bō- (> *բալ*-. հմմտ. *բող*-, *բողկ*, *բողջ*, *բոյս* և այլն) արմատից՝ -*ախ* ածանցով (հմմտ. *սպանախ*, *մանանեխ* և այլն):

3. Հայ. *դրաւշ* – ուրարտ. *diruše* (// իրան. *drafš*)

Անվանի ուրարտագետ Ս. Հմայակյանը իր հոդվածներից մեկում անդրադառնում է ուրարտ. ^D÷aldine *diruše* «հասկացությանը», որում մեզ, տվյալ դեպքում, հետաքրքրում է երկբաղադրիչ կազմու-

⁴ Հմմտ. նաև՝ «Նոր հայկազյան բառարան», «Առձեռն բառարան», մանավանդ «Հայ Բուսակ. հայկական բուսաբառություն» (§ 278):

թյան երկրորդ՝ *diruše* $\mu^3\tilde{O}^{\text{a}}\tilde{n}\tilde{C}\tilde{a}\tilde{A}^5$:

Հոդվածում այն քննվում է հետևյալ վերլուծությամբ (բերում ենք ամբողջությամբ). §^D÷aldine *diruše*՝ հասկացությունը Բ. Մ. Դյակոնովը բացատրում է «Խալդիի ողորմածությունը» ձևով⁶, իսկ Մորդմանը *diruše*-ն ստուգաբանել է «դրոշ»՝ բառով (Ս. Հմայակյանը հղում է Հ. Աճառյանին - Վ. Հ.)⁷: Վերջինիս դիտողությունը չի ընդունվում գրեթե բոլոր ուրարտագետների կողմից: Բայց եթե նկատի ունենանք, որ այժմ հայտնի են բազմաթիվ ուրարտական դրոշների պատկերներ, նաև այն, որ Սարգոն II-ի արձանագրությունում ուղղակի հիշատակվում է Խալդեի տաճարում պահվող դրոշի (ստանդարտ) մասին⁸, ապա պիտի ընդունել, որ Ուրարտում եղել է «խալդյան դրոշ» հասկացությունը, որն անպայման, ինչպես բխում է Մհերի դռան արձանագրության բնույթից, պիտի հիշատակված լիներ այնտեղ, ստանալով զոհերի համապատասխան քանակ, հետևաբար կարելի է ^D÷aldine *diruše* արտահայտությունը թարգմանել «խալդյան դրոշին»՝ ձևով⁹:

Այս *diruše* ձևը, անկասկած, նույնն է, ինչ հայ. *դրաշ* բառը, որ, բնականաբար, համարվում է իրանական փոխառություն (< *drafš*). հմմտ. ավեստ. *drafš*, պրթ. *driš* (*drafš*), մպրսկ. *drafš*, պրսկ. *dirafš* «դրոշ», ընդ որում նաև՝ *դրաշակ* «դրոշ», «քղանցք. շորի փեշ»¹⁰:

Եվ ըստ այսմ՝ կարելի է մտածել, որ ուրարտերենին անցած լինելը հիմք է հանդիսանում ասելու, թե այն փոխառությամբ զուգահեռ ունի նաև նախագրային հայերենում, ընդ որում անցումը (փոխառությունը) պիտի եղած լինի, ըստ երևույթին, նախագրային հայերենի երրորդ՝ հայ-հյուսիսկովկասյան (խուռաուրարտական)-իրանական ինտենսիվ փոխազդեցության (մ. թ. ա. II հզր. վերջ - մ. թ. ա. I հզր. կեսեր) շրջանում¹¹:

4. Հայ. *տ* (նաև *ծ*) < հե. **g'* -

⁵ Ս. Գ. Հմայակյան, Ուրարտական դիցարանի Տարբերությունները՝ // *Պատմա-բանասիրական հանդես*, 1981, 3, էջ 203-210:

⁶ *И. М. Дьяконов*, Урартские письма и документы (УДП), М.-Л., 1963, стр 69, прим. 90:

⁷ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հ. 1, էջ 697:

⁸ Տե՛ս АВИИУ (= Ассиро-вавилонские источники по истории Урарту), 49 (367):

⁹ Ս. Գ. Հմայակյան, նշվ. աշխ., էջ 297:

¹⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 524:

¹¹ Հայերենի նախագրային ժամանակաշրջանի պատմության շրջանաբաժանման փորձ կատարվում է մեր հայոց լեզվի ընդհանուր պատմությանը նվիրված աշխատանքում (ձեռագիր):

Է. Հեմպը իր հոդվածներից մեկում¹² հե. *g' + նայ հնչյունախմբի հետ կապված, իր տարակուսանքն է հայտնում հետևյալ դեպքում (բերում ենք իր տողատակի նշած հղումների հետ միասին). §Ա. Մեյեն խոսում է art-oy (*արտ*) բառի հանելուկային t-ի մասին¹³, մինչդեռ Զոլտան առանց տատանվելու այս բառը կապում է սանսկ. ajrah, հուն. ἄγρος, լատ. ager, գոթ. akrs բառերի հետ¹⁴: Այս բառի *g' կիսաշփական արտացոլումը *r-ից առաջ հավանորեն ենթարկվել է փոփոխության՝ կորցնելով իր շփականությունը նախքան *Cr- ի փոփոխությունը, այսինքն՝ նախքան *Cr > rC վերածվելը: Ուստի հնչյունաբանորեն ավելի հավանական է, որ r-ն, լինելով ծայրալեզվային հնչյուն, ներառել է հենց այդ որակի s շփական հնչյունը: Նույն եղանակով կիսաշփականի ծայրալեզվային ելքը սխալմամբ դիտվել է որպես r- հնչյունի մաս: Պետք է ենթադրել, որ այս փոփոխությունը ընթացել է հետևյալ կերպ. *g' > *dz' (կամ *ts'θ) > *dr (կամ *tr) > *rd (կամ *rt) > r'¹⁵:

Ինչպես նկատում ենք, քննությունը տեղի է ունենում Ֆիսկանականի¹ և Ֆենթադրականի¹ սամաններում, ուստի այն այնքան էլ վերջնական չի կարելի համարել, իսկ հնչյունական անցումների շղթան թողնում է գերստուգաբանականի (hiperetymologica) տպավորություն:

Մենք ունենք երևույթի այլ բացատրություն հե. *g' > հայ. տ (նաև ծ) անցման վերաբերյալ, որ տարիներ առաջ հայտնել ենք մեր աշխատանքներից մեկում¹⁶: Հմմտ. *խաւարծի* [*խաւ-արծ-ի* (< *խաւ-արտ*) < հե. *khñu - [*(s)keu-] (?) + *ag'ro- (*g' > ծ)]. *խաւարտ* [*խաւ-արտ* < հե. *khñu - [*(s)keu-] (?) + *ag'ro- (*g' > տ)]. օր.՝ §Զարտախուր *խաւարտ* և գտից *խաւարծի*» (Խորենացի, էջ 84): Հմմտ. նաև *արածել* (բրբռ. *արձալ*), *արաւտ*, թերևս նաև *արտ* և այլն¹⁷:

¹² Է. Հեմպ, Մի քանի կիսաշփականների մասին հայերենի պատմության մեջ // *Պատմաբանասիրական հանդես*, 1983, 1, էջ 38-42:

¹³ A. Meillet, *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique*, Vienne, 1936, էջ 101:

¹⁴ G. R. Solta, *Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen*, Wien, 1960, էջ 132:

¹⁵ Է. Հեմպ, նշվ. աշխ., էջ 38:

¹⁶ Վ. Գ. Համբարձումյան, Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, 1, Ե., 1998, էջ 44-45: V. G. Hambardzumyan, *Armenian and Indo-European (Essays on Comparative Lexicology of the Armenian Language)*, Yerevan, 2014, էջ 121-126:

¹⁷ Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1973, էջ 351-352: Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 323-324. հմմտ.՝ ՀԱԲ, 2, էջ 351-352: Վ. Գ. Համբարձումյան, Ստուգաբանություններ. *արտորալ* «շտապել, փութալ», *արտոյտ* «ար-

5. Հայ. *ծամ* (նաև *կեմ*, *ճիմ* և այլն) < հե. *kem-

Ա. Պետրոսյանը աշխատանքներից մեկում §Մեպագիր kummi, kummanni, kummaḥa և կամախ՝ վերնագրի տակ, ի թիվս լեզվական տարբեր կարգի միավորների, այլև առանձին ժողովուրդների միֆական այլևայլ պերսոնաժների, քննական վերլուծությամբ հայերենի տվյալներից օգտագործվում է նաև *ծամ* ճիլուսված մագեր. գես՝ բառը¹⁸:

Այս առիթով նկատելի է այն, որ վերջինս (*ծամ*. ծագումն անհայտ) կարող է տարբերակային միավոր լինել հայ. *կեմ* (*կեմ* < *kem) բառի հետ, որ լայն տարածում ունի ոչ միայն հին և նոր գրական հայերենում, այլև մանավանդ վերջինիս բարբառների մի որոշակի մասում (Մուշ, Ալշ. և այլն): Նշենք նաև, որ դա կարող է սոսկ բացթողում լինել, իսկ ոչ լավագույն դեպքում՝ շրջանցում, եթե նկատի են առնվել միայն Հ. Աճառյանի տվյալները (ստուգաբանությունը)՝ բառի հունարենից փոխառություն լինելու վերաբերյալ (հուն. κημος)¹⁹:

Ստորև մեր դիտարկումը, ի լրացումն ուսումնասիրողների կողմից մինչև այժմ կատարվածի, վերաբերում է հենց Աճառյանի դիտարկմանը, որի վերաբերյալ արվում են վերանայման առաջարկություններ: Կարելի է ենթադրել, որ հայ. *ծամ*, այլև *կեմ*, *ճիմ* բառերը, որ հայերենի ինքնուրույն զարգացման ընթացքում տարբերակված (դիֆերենցված) ձևեր են, բնիկ պիտի լինեն, մանավանդ որ բարբառներում հանդիպում է նաև կիսաշփական շնչեղ խուլ ճ տարբերակով՝ *ճիմ* [եթե ոչ հայերենից այլ լեզուներից անցած (օր. թրք. *ջիմ*, *ջիման*, ուրիշ լեզուներ՝ *ջմջմայ* և այլն) (?)]:

Իբրև ընդհանուր արմատ՝ կարելի է վերականգնել հե. *kem- ձևը: Ըստ այդմ էլ ենթադրելի է հնչյունական հետևյալ անցումը՝ հե. *k > հայ. ծ (*կ/ճ*) և այլն:

6. Հայ. *ներ* // *ներն* - հուն. νῆρος (< շումեր. neru ?)

Հայերեն *ներ* §600-Մ³Ի (Ժամանակաշրջան)՝ (հմմտ. հուն. νῆρος, լատ. nerus և այլն), այլև *ներն* §(ուշ) εἶδοι Ø»εζ³՝ - հուն. νῆρος (<

տույտ (թռչնանուն)» // «Լեզու և լեզվաբանություն», 2018, 1, էջ 3-10:

¹⁸ Ա. Պետրոսյան, Արամազդ. կերպար, պաշտամունք, նախատիպեր, Ե., ՏՀԱՆ Արյան՝ հրատ., 2006, էջ 59-69:

¹⁹ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 571- 572:

շումեր. *neru* ?): Այս երկուսի կապակցումը միանգամայն հավաստի է, որ չեն նկատել նախկինում՝ ամենից առաջ երկրորդը կապելով Ներոն կայսեր (հուն. Νέρων, լատ. *Mero*) անվան հետ, նախորդ ուսումնասիրողների կողմից նա եղել է առարկելի: Մնում է լրացուցիչ մի քանի դիտարկում, որ գալիս է ամբողջացնելու նախկինում արվածը՝ իբրև ավելի հավաստի մեկնություն:

Հայ. *ներ*-ը գործածված է հայ հին գրական թարգմանական և ինքնուրույն հուշարձաններում («*ներ* մի ասէ *ի ներիցն*՝ է վեց հարիւր ամ» - լատ. «*nerus una, inquit, ex neris, sexcentum*»)²⁰: Հայ. *ներ* // *են*(ն) ձևերը տարբերակային են, որ գալիս են վաղնջական ժամանակաշրջանից, իսկ հետագայում, հատկապես արտալեզվական հատկանիշների ներառումով (առաջին հերթին՝ խոսակցական լեզվի ընկալմամբ կամ մեկնաբանմամբ) տեղի է ունեցել բազմիմաստության վերածում համանունության, մանավանդ քրիստոնեական ընկալման պայմաններում: Բառը, թերևս, փոխառություն է լեզվի նախագրային ժամանակաշրջանում, որ ունի ավելի լայն քննարկման կարիք:

В. Г. Амбарцумян.- Этимологические заметки. В статье дается этимология следующих слов, имеющие либо и.-е. происхождение, либо являются заимствованиями из разных языков: арм. *ալաբուլա* [alabula] 'пестрый; необычный' < *халадж.* *hala bula* 'пестрый', арм. (диал.) *փալախ* [p^halax] (< *բալախ* [balax]) 'дикое растение' < *и.-е. *bō-*, арм. *դրաւշ* [drawš] 'флаг, флажок' – урарт. *diruše* 'флаг, флажок' // иран. *drafš*), арм. *ծաւ* [cam] 'коса' (а также *կեւ* [kēm] 'кудель', *ճիւ* [čim] 'дерн, газон' и т. д.) < *и.-е. *kem-*, арм. *ներ* [ner] // *ենն* '600 летний период: вторично- Антихрист' [neĭn] – греч. *νῆρος* (< шумер. *neru*). В одном разделе дается поправка к соответствию арм. *տ* [t] (а также *ծ* [c]) < *и.-е. *g'*.

V. G. Hambardzumyan.- Etymological Reviews. The article gives the etymology of the following words having either i.e. origin, or are borrowing from different languages: Arm. *ալաբուլա* [alabula] 'spotted, dappled; strange, whimsical' < Chalaj. *hala bula* 'spotted, dappled', Arm.. (Dial.) *փալախ* [p^halax] (< *բալախ* [balax]) 'glass; wort' < IE *bō-, Arm. *դրաւշ* [drawš] 'flag; standard' – Urart. *diruše* 'flag; standard' // Iran. *drafš*), Arm. *ծաւ* [cam] 'hair' (also *կեւ* [kēm] 'flax', *ճիւ* [čim] 'sod, turf' etc.) < IE *kem, Arm. *ներ* [ner] // *ենն* '600 year period' [neĭn] – Greek . *νῆρος* (< Sumer. *neru*). In one of the articles an amendment to the correspondence Arm. *տ* [t] (also *ծ* [c]) < IE *g' is given.

²⁰ Եւսեբի Պամփիլիայ Կեսարացոյ Ժամանակականք, Վենետիկ., 1818, էջ 11: Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1913, էջ 13, 145 և այլն: Հմմտ. Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Ե., 443:

ՈՒՐՈՒՈՐԴԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՏԵՐՄԻՆԱՐԱՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՓՈՐՁ

*Բանասիր. գիտ. թեկնածու Հ. Վ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ,
Ն. Ա. ԹՈՌՈՒՆՅԱՆ*

Հասարակական կյանքի զարգացման ու փոփոխությունների անմիջական անդրադարձը երևում է տվյալ ժողովրդի լեզվում և բառապաշարում: Այդ փոփոխությունները հատկապես դրսևորվում են այն դեպքում, երբ տվյալ ժողովուրդը ապրում է վերափոխումների ու արմատական տեղաշարժերի հերթական փուլը: Այդ վերափոխումների արդյունքում վերափոխվում է ժողովրդի մտածելակերպը, աշխարհաճանաչողությունը, հասարակական, տնտեսական հայացքները, հաստատվում են նոր հարաբերություններ. այս ամենն ուղեկցվում է նոր իրողություններով, գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված նոր առարկաներն ու երևույթները, հետևաբար և նոր գիտաբառերն ու եզրույթներն անվանելու պահանջով:

Ներկայումս ազգայնացման գործընթացը հայապահպան բազմաթիվ խնդիրներից բացի, ներառում է նաև գիտության տարբեր բնագավառների մասնագիտական լեզուների հայացման հարցը: Գաղտնիք չէ, որ դեռևս խորհրդային տարիներից ուսումնական դասագրքերը մեծ մասամբ թարգմանվում էին ռուսերենից՝ հայերենի վրա թողնելով ռուսաբանության ազդեցությունը: Ներկայումս խնդիրն այլ է. դեռևս չթոթափած ռուսաբանության բեռը, հայերենը ազդեցություններ է կրում նաև անգլերենից, որը մեծապես ազդում է հայերենի շարադասության, քերականական առնչությունների և ուղղագրության, մասնավորապես հատուկ անունների ուղղագրության վրա:

Ըստ վերջին տարիների մեր դիտարկումների՝ բժշկագիտական մասնագիտական խոսքում օտարաբանությունները ոչ միայն ավելացել են, այլև կառուցվածքային-քերականական առումով բազմաթիվ են դարձել: Մեկ-երկու տասնամյակ առաջ մեծ մասամբ ռուսերենից անցած օտարաբանությունները հիմնականում առնչվում էին կապերի գործածությանը, խնդրառությանը, որոշ չափով նաև համաձայնությանը: Ներկայումս բժշկագիտական խոսքում

օտարաբանությունները թափանցել են բայերի, ածականների, դերանունների, մակբայների գործածության, անգամ դարձվածաբանության ոլորտներ: Լեզվական բազմաբնույթ աղավաղումներով ու անճշտություններով մասնագիտական լեզուն հարկադրված և անուղղակիորեն յուրացնում է նոր սերունդը՝ սովորելով դասագրքերում առկա թերություններով լեզուն: Կտրուկ ավելացել է հայալեզու գիտական գրականության քանակը, որը, անկասկած, պայմանավորված է կրթական և մասնագիտական կրթական համակարգի հայացմամբ: Փոխվել են նաև սովորողների պահանջները. եթե նախկինում ուսանողները յուրացնում էին տերմինների օտար եզրը՝ որպես մասնագիտական բառ, ապա ներկայումս, յուրացնելով օտար տերմինները, սովորողներն ուզում են իմանալ նաև դրանց հայերեն համարժեքները: Կրթական և գիտական ոլորտներում անփոխարինելի են մասնագիտական բառարանները թե՛ մասնագետների, թե՛ սովորողների համար: Դրանց անհրաժեշտությունը պայմանավորված է նախնառաջ բառապաշարից ճիշտ օգտվելու պահանջով, և վերջապես բառարաններում տրվում են բառերի հոմանիշային իմաստները, որոնք իմանալով և յուրացնելով բառարանից օգտվողը հնարավորություն է ստանում ընտրելու խոսքաշարին ամենահամապատասխան, դիպուկ և ճիշտ տարբերակը: Խնդիրն այն է, որ երբ խոսքը հայերեն մասնագիտական տեքստերին է վերաբերում, բժիշկների քննարկման առարկան դառնում է միայն տերմինը, այսինքն՝ մասնագիտական բառը: Այն տպավորությունն է ստեղծվում, թե բժշկագիտական խոսքը միայն տերմին է և ուրիշ ոչինչ: Իհարկե, դա այդպես չէ, քանի որ բժշկագիտական ոլորտը հիվանդությունների, հիվանդի գանգատների, վիճակի, զարգացող կլինիկական ընթացքի, նախավիրահատական, վիրահատական և հետվիրահատական իրողությունների, դեղերի բաղադրության և այլնի մասին նկարագրություններով հարուստ գիտական ոլորտներից մեկն է: Հասկանալի է, որ վերոհիշյալ նկարագրությունները, բացատրությունները, եզրակացությունները սերունդներին հանձնվում են գրավոր և բանավոր խոսքի միջոցով, որոնք միայն տերմիններով արտահայտելն անպատկերացելի է: Գիտական լեզուն էլ սնվում է մայր լեզվի բառապաշարից, քերականական ու բառակազմական օրինաչափություններից, կանոններից, և դրանք պարզապես անհնար է չպահպանելը կամ անտեսելը: Այս ամենը նկատի

ունենալով՝ բառարան-տեղեկատուում որպես նմուշ տրվում են նաև մասնագիտական սեղմ տեքստեր՝ դրանցում ցույց տալով մասնագիտական խոսքի՝ հայերենով սահուն և դիպուկ շարադրանքը¹:

Առաջին էջերից իսկ հանրագիտարանային տվյալներ են տրվում միգասեռական և միգարտադրության համակարգերի մասին, որոնք ներկայացվում են անատոմիական նկարներով: Ուրոլոգիայի վերաբերյալ առկա գրականության մանրակրկիտ և բազմակողմանի ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ շահեկան ու օգտակար է բառարան-տեղեկատուն բաժանել ենթաբաժինների, որոնք, ինչ խոսք, կհեշտացնեն տեղեկատուից օգտվելը:

1. Ուրոլոգիայի բնագավառում գործածվող տերմինների հայերեն համարժեքներ, որոնք կիրառվում են բժշկագիտական խոսքում և վիճաբանության տեղիք չեն տալիս, օր.՝ *աննրիզմ – անոթալայնանք, հիպոպլազիա – թերաճ, դիստոպիա – տեղաշարժ, կիստա – բուշտ, օբստրուկցիա – խցանում, հիպերտենզիա – գերլարում, ռեցիդիվոզ – կրկնվող* և այլն:

2. Տերմիններ, որոնց հայերեն համարժեքներն աննպատակահարմար և մերժելի են, օր.՝ *հեմանգիոբլաստոմա, ֆունկցիոնալ կրեատինին* և այլն:

3. Տերմիններ, որոնք չունեն հայերեն համարժեքներ, և է գործածել օտար տերմինը, օր.՝ *կրեատինին ինվազիվ* և այլն:

4. Տերմիններ, որոնք արտահայտվում են միայն բառակապակցությամբ կամ բացատրությամբ, օր.՝ *պիելոեկտազիա – ավազանի լայնացում, հիպովոլեմիա – շրջանառու արյան ծավալի նվազում, տախիպնոե-շնչառության հաճախացում, էլաստիկ կոնսիստենցիա – առաձգական կազմություն ունեցող* և այլն:

5. Ուրոլոգիայի բնագավառում գործածվող հասկացությունների, զննամիջոցների, գործիքների, սարքավորումների և բուժամիջոցների անվանումներ, որոնք ունեն կամ չունեն հայերեն համարժեքներ, օր.՝ *անգիոգրաֆիա – անոթագրություն, պինգետ- ունելի, կոմպյուտերային տոմոգրաֆիա – համակարգչային շերտագրություն, նեֆրոտոմոգրաֆիա – երիկամաշերտագրություն, ցիտոսկոպ-բջջադիտակ, պալպացիա – շոշափում* և այլն:

¹ «Ուրոլոգիա. բառարան-տեղեկատու» կազմելիս օգտվել ենք «Հանրամատչելի բժշկական հանրագիտարանից» (2001թ.) և ուրոլոգիայի բնագավառի հեղինակավոր մասնագետների դասագրքերից:

6. Ուրուլոգիայի բնագավառում գործածվող օտար տերմինների, տերմինատարրերի և գիտաբառերի տառադարձությունը, օր.
ուրուլոգիա, հիպերտենզիա, սֆինկտեր, պարէնտերալ և այլն:

7. Տերմինների և տերմինատարրերի հայերեն համարժեքների ուղղագրությունը, օր.
գալարակծկանք, հյուսվածքաբանական, հետորովայնամզային, շագանակագեղձ, մանրէագերծ և այլն:

Այս ենթաբաժանումը նպատակային է նաև այն առումով, որ բավարարելով օգտագործողի հետաքրքրությունն ու փնտրած բառը գտնելու անհրաժեշտությունը՝ դյուրին ու մատչելի է դառնում բառարան-տեղեկատուից օգտվելը:

Հատկապես կարևորվում է թարգմանական ենթաբաժնի դերը. բժշկին անհրաժեշտ է տերմինի եռալեզու՝ լատիներեն-հայերեն-ռուսերեն հարաբերությամբ միաժամանակյա իմացությունը: Իհարկե, այս բաժնում տեղ են գտել միայն այն տերմինները, որոնց հայերեն համարժեքներն ընդունելի են և վիճաբանությունների տեղիք չեն տալիս: Կարծում ենք, որ այս ենթաբաժինը հատկապես կհետաքրքրի բժշկության բնագավառի սկսնակներին: Ներկայիս սերունդը, ստիպված լինելով օգտվելու ռուսալեզու գրականությունից կամ յուրացնելով օտար տերմինը, անհրաժեշտություն է զգում դրանք նախնառաջ հայերենով հասկանալու, մայրենիով ընկալելու, յուրացնելու, ապա գործածելու ու կիրառելու բժշկագիտական խոսքում:

«Ուրուլոգիայի բնագավառում գործածվող օտար տերմինների, տերմինատարրերի և գիտաբառերի տառադարձությունը» ենթաբաժինը վերաբերում է հունալատիներեն տերմինների տառադարձության կանոններին: Գիտական եզրաբանության բնագավառում տառադարձումը կիրառվում է, երբ օտար եզրույթը չի հաջողվում թարգմանել: Քանի որ օտարալեզու տառադարձված տերմինների ուղղագրությունը գիտալեզվի բառապաշարի կարևոր ճյուղերից մեկն է և մասնագիտական գրավոր խոսքի անառարկելի բաղադրամաս, ուստի «Ուրուլոգիայի բնագավառում գործածվող օտար տերմինների, տերմինատարրերի և գիտաբառերի տառադարձությունը» բաժնում այբբենական հերթականությամբ տրվում են օտարալեզու տերմինների տառադարձված բառաշարքերը:

Բաժիններից մեկն էլ վերաբերում է միզասեռական օրգանների հիվանդությունների ու ախտաբանական պրոցեսների դեպ-

քում օգտակար դեղաբույսերի հայերեն-ռուսերեն-լատիներեն անվանումներին՝ խնդիր չդնելով անդրադառնալ դեղաբույսերի բուսաբանական առանձնահատկություններին, ցեղակցությանը կամ բույսերի համակարգում դրանց օգտագործմանը: Օր.՝ *Arctostaphylos uvas-ursus* (Folia) – արջախաղող սովորական (տերև) – толокняка обыкновенная (лист), *Vaccinium vitis-idaea* (Folia) – հապալասենի սովորական (տերև) – брусника обыкновенная (лист), *Betula verrucosa* (Gemmae) – կեչի (բողբոջներ) – береза (почки), *Orthosiphon stamineus* (Folia) – երիկամային թեյ կամ առեջային (մատղաշ տերև) – почечный чай (флеш) և այլն:

Որոշ դեղաբույսերի դեպքում նշված են նաև դրանց ժողովրդական անվանումները, իսկ մի քանի անվանումների դեպքում նախապատվությունը տրվում է ամենատարածվածին: Բույսերի անունները ներկայացնելիս օգտվել ենք «Բուսաբանական բառարանից» (Պ. Ա. Ղանդիլյան և ուր., Ե., 1975):

Բժշկագիտությունն անընդհատ զարգացող և հզորացող գիտաճյուղերից է: Բժշկության բնագավառում նորանում են հիվանդությունների բուժման միջոցներն ու մեթոդները, տեխնոլոգիաները, գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված՝ ստեղծվում են նոր գործիքներ ու սարքավորումներ, ուստի օր օրի նորանում ու համալրվում են նաև դրանք անվանող բժշկագիտական եզրույթները: Հայոց լեզվի արդի փուլում արդիական խնդիր է լեզվի բառապաշարի հարստացումը նորաստեղծ բառերով: Բառարան-տեղեկատուի բաժիններում ներառվում են թե՛ ժամանակակից բժշկական և ուրոլոգիական սարքավորումների և գործիքների անվանումները, թե՛ ուրոլոգիայի բնագավառում գործածվող օտար տերմինների, տերմինատարրերի և գիտաբառերի տառադարձությունը, թե՛ ուրոլոգիայի բնագավառում գործածվող տերմինները, որոնք արտահայտվում են բառակապակցությամբ կամ բացատրությամբ, թե՛ ուրոլոգիայի բնագավառում գործածվող տերմինների և տերմինատարրերի հայերեն համարժեքների ուղղագրությունը. դրանք ներկայացվում են խոսքաշարում, անհրաժեշտության դեպքում տրվում են համապատասխան նկարներով՝ կարևորելով բառարան-տեղեկատուի նպատակային օգտագործումը:

Г. В. Сукиасян, Н. А. Торунян. Опыт составления отраслевого тезауруса в области урологии- «Урология – словарь – справочник» предназначен для урологов, студентов и в целом для работников медицинской сферы. Словарь-справочник состоит из нескольких разделов, в которых представлены имена современных медицинских аппаратур и инструментов, используемых в урологии. Используются термины, терминологические элементы и транскрипции, научных слова, которые в армянском языке выражаются только словосочитанием или объяснением, а также провописание армянских эквивалентов. Они используются в текстах, а также представленны соответствующие рисунки, которые подчеркивают целевое использование словаря-справочника.

G. V. Sukiasyan, N. A. Torunyan. Experience in compiling a sectoral thesaurus in the field of urology.-Urology Dictionary and Directory is for urologists, medical students, and healthcare workersin general.Encyclopedic informationis providedabouturo-genital and excretorysystems. Dictionary and Directory consists of several subchapterswhich contain: names of modern medical equipments and tools in the field of urology,foreign terms used in language,transcription of foreign words, termo-elements and scientific words, terms which are expressed by word combinations or by explanations, spelling rules of Armenian equivalent terms and termo-elements, theseare given in context, if necessary the corresponding images arepresented:emphasizing the targeteduse of Urology Dictionary and Directory.

**ԼԱՏԻՆԵՐԵՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ ԵՎ
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ԱՂԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԴ. ՄԱՐԱՂԱՑՈՒ
«ԴԻԱԼ ԵԿԵՏԻԿԱՅԻ» ԿՐԱ**

Բանասիր. գիտ. թեկնածու Տ. Ղ. ՄԻՐՈՒՆՅԱՆ

Միարարական միջավայրում ստեղծված թարգմանական գրականության մեջ բնագրային ձևակերպումները հաճախ արտացոլվում են ուղղակիորեն՝ ի հայտ բերելով անսովոր, հիմնականում ոչ կայուն կաղապարներ: Սա առավելապես ճշգրիտ թարգմանության հետևանք է և չի առնչվում ավելի ուշ՝ ԺԷ դարում, ծագած լատինաբան հոսանքին, որը փորձում էր գրաբարը հղկել օտար կաղապարներով, պատշաճեցնել ավելի կանոնիկ համարված լատիներենին: Թարգմանական այդ երբեմն անհարկի ճշգրտությունն արտահայտվել է նաև միարարական գործիչ Բարդուղիմեոս Մարաղացու տրամաբանական հայտնի երկի՝ «Դիալեկտիկայի» մեջ¹: Այն բանաբաղությամբ ստեղծված, մասամբ թարգմանական աշխատանք է, որ ամփոփում է տրամաբանության հին և նոր՝ արիստոտել-բոեթիուսյան ուսմունքներն ու դրանց հետագա ըմբռնումը եվրոպական սխոլաստիկայում²: «Դիալեկտիկայի» չորս մասերի՝ ներածություն, «Յաղագս հաւաքաբանութեան», «Յաղագս պատրանաց գրոցն», «Յաղագս տրամաբանական տեղեացն», անմիջական աղբյուրը ԺԳ դ. փիլիսոփա Պետրոս Իսպանացու "Summule Logicales"-ի³ I, IV, V, VII համանուն տրակտատներն են՝ "De introductionibus", "De syllogismis", "De fallaciis", "De locis"⁴:

¹ Հաւաքումն համառօտ և յոյժ օգտակար ի դիալեկտիկէն, որ է տրամաբանութիւնն. Կարգեալ և թարգմանեալ ձեռամբ Բարդուղիմէոսի ֆռանկ եպիսկոպոսի, ՄՄ 69, 266ա-346բ, ՄՄ 2382, 339ա-370, նաև՝ ՄՄ 1685, 88ա-178բ. այս ձեռագրերից հետագա մեջբերումների էջերը կտրվեն շարադրանքում:

² Հաւաքումն համառօտ և յոյժ օգտակար ի դիալեկտիկէն, որ է տրամաբանութիւնն, կարգեալ և թարգմանեալ ձեռամբ Բարդուղիմէոսի ֆռանկ եպիսկոպոսի // ՄՄ 69, 266 ա-346 բ, ՄՄ 2382, 339 ա-370, նաև՝ ՄՄ 1685, 88 ա-178 բ. այս ձեռագրերից հետագա մեջբերումների էջերը կտրվեն շարադրանքում:

³ St u *Peter of Spain*, Tractatus, called afterwards Summule Logicales, First Critical Edition from the Manuscripts with an Introduction by L. M. De Rijk, 1972, p. LXXXVIII-LXXXIX (այսուհետև՝ PH - Petrus Hispanus, T - Tractatus):

⁴ St u Տ. Ղ. *Միրունյան*, Բարդուղիմեոս Մարաղացու տրամաբանության լատիներեն աղբյուրները. «Դիալեկտիկա» և «Summulae Logicales» (ձեռագիր. տպագրության մեջ):

Մխուլաստիկայի այս նոր բովանդակությամբ նաև մեծապես համալրվեց հայկական տրամաբանության տերմինաբանությունը: Սակայն պետք է նշել, որ այդ նոր տերմինները յուրացվել են հիմնականում հասկացական մակարդակում, քանի որ տերմինաստեղծման, այսինքն՝ լեզվական աշխատանքի փորձերը խիստ սակավ են, և օտար բառերը վերարտադրվել են ուղղակիորեն՝ փոխառության միջոցով:

Ա. Լատիներեն բնագրերի ազդեցությունը «Դիալեկտիկայի» բառապաշարի վրա⁵:

Պետրոս Իսպանացու "Summule Logicales"-ի վերևում հիշված տրակտատներից բազմաթիվ տերմիններ-գործածվել են Բարդուղիմեոսի «Դիալեկտիկայի» մեջ: Ընդ որում՝ նկատելի է, որ փոխառություններն-արվել են արտասանական հիմքով՝ *ե-թ, ց-ջ, ր-փ*, միջձայնավորային *ս-զ* ևն, ինչից կարելի ենթադրել, որ «Դիալեկտիկան» խմբագրվել է նաև բանավոր ցուցումներով⁶:

«Դիալեթիկայ». "dialectica"- ուշագրավ է գրությունը՝ «դիալե[կ]տիկա»՝ առանց *կ-ի*, որ կայուն ձև է երկու տեքստերում էլ. «Դիալեթիկայ է արհեստ արհեստից առ ամենայն մեղոդաիցն, այսինքն գիտութեանց սկսբունս ճանապարհ ունել:» (ՄՄ 69,266ա). "Dialectica est ars [artium] ad omnium methodorum principia viam habens." (P.H.,TI,1), նաև՝ «դիալեթիկոս». "dialecticos"- «...ոչ ընթանայ, որ ոչ է բայ առ դիալեթիկոսքն, այլ է անորոշելի բայ:» (ՄՄ69, 276ա). "...non currit', quod non est verbum secundum dialecticos, sed verbum infinitum." (P.H.,TI,2): «Քաթեգորիկայ». "categorica"- դատողության ստորոգական տեսակը. «Քաթեգորիկայն է, որ ունի ենթակայ և ստորոգեալ զնախկին մասունս իւր, որպէս մարդն է կենդանի:» (ՄՄ, 69,280ա). "Categorica est illa que habet subiectum et predicatum principales partes sui, ut 'homo currit'." (P.H.,TI,3-4): «Իփօթեթիկայ». "ypotetica"- դատողության ենթադրական տեսակը. «Նախադասութիւն իփօթեթիկայ է այն, որ ունի բ քաթեգորիկա նախկին մասունք իւր, որպէս թէ մարդն կու ընթանայ, մարդն կու շարժի:» (ՄՄ69,289ա). "Propositio ypotetica est illa que habet duas propositiones

⁵ Նկատի են առնվել նաև լատիներենի միջոցով փոխանցված հունարեն բառերը:

⁶ Հայտնի է, որ Բարդուղիմեոս Մարաղացին հայերենով աշխատություններ էր գրում Հովհաննես և Հակոբ Քոնեցիների օժանդակությամբ. տե՛ս *Յովհաննէս Քոնեցի*, Յաղագս քերականին, ներածություն, էջ 30-31:

⁷ Բնագրի այլ տարբերակում՝ "Dialectica est ars artium..." (Peter of Spain, անդ):

categoricas principales partes sui, ut 'si homo currit, homo movetur'." (P.H., TI,8-9):

«Բարբարա». "barbara"- մտահանգման ա եղանակի մենմոնիկական բանաձևը (ՄՄ69,307ա. P.H.,TIV,52):

«Սելարենդ». "celarent"- մտահանգման բ եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Դարիի». "darii"- մտահանգման գ եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Ֆերիո». "ferio"- մտահանգման դ եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Բարալիփ». "baralipton"- մտահանգման ե եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Յելանթես». "celantes"- մտահանգման զ եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Դափիթիս». "dabitis"- մտահանգման է եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Ֆափեսմո». "fapesmo"- մտահանգման ը եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Ֆրիսեմորում». "frisesomorum"- մտահանգման թ եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Չեզարե». "cesare"- մտահանգման ժ եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Յամբեսթիես». "cambestres"- մտահանգման ժա եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Ֆեսթինո». "festino"- մտահանգման ժբ եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Բարոչո». "barocho"- մտահանգման ժգ եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Դարափթի». "darapti"- մտահանգման ժդ եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Ֆելափթո». "felapto"- մտահանգման ժե եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Դիսամիս». "disamis"- մտահանգման ժզ եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Դաթիսի». "datisi"- մտահանգման ժէ եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Բօքարդո». "bocardo"- մտահանգման ժը եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Ֆերիսոն». "ferison"- մտահանգման ժթ եղանակի մենմոնիկական բանաձևը (անդ):

«Ռեդարգուսիօ». "redargutio"- սովետական տրամաբանության տեսակ, այս և մյուս տեսակների առնչությունը բնագրային սահմանումներին հիմնականում իմաստային է. «Ռեդարգուսիօ է, յորժամ պատասխանօղն բացասէ զայն, ինչ զոր յառաջագոյն ստորասեաց, և կամ ստորասէ, զոր յառաջագոյնն բացասեաց:» (ՄՄ69, 316ա). "Redargutio est preconcessi negatio vel prenegati concessionin eadem disputatione vi argumentationis." (P.H.,TVII,94):

«Ինօփինաբիլէ». "inopinabile"- սովետական տրամաբանության տեսակ. «այն, ինչ որ անհաւանական է և անախորժ մարդկային մտաց» (ՄՄ69,316բ). "Inopinabile est quod est contra opinionem omnium aut plurium aut sapientum, et horum vel omnium vel plurium vel maxime notorum." (անդ):

«Սօլօէսիզմոս». "solecismus"- սովետական տրամաբանության տեսակ. «Սօլօէսիզմոս, յորժամ ոք խոսի ընդդէմ կանոնական յայտնապէս արհեստի քերականութեան:» (ՄՄ69,316բ-317ա). "Solecismus est vitium in contextu partium orationis contra regulas artis gramatice factum." (անդ):

«Նուգասիօ». "nugatio"- սովետական տրամաբանության տեսակ. «Նուգասիօն է անօգուտ կրկնաբանութիւն ի համայն և ի նոյն կողմանէն, զոր օրինակ ասիցէ ոք՝ մարդ մարդ ընթանայ:» (ՄՄ69,317ա). "Nugatio est eiusdem et ex eadem parte inutilis repetitio, ut 'homo homo currit'." (անդ):

«Անֆիբօլիայ». "amphibolia"- մոլորեցնող կամ «պատրանքներ» պարունակող դատողության տեսակ. «Անֆիբօլիայն է սկիզբն խաբման ի բանէն բոլորովին նոյն զբազում նշանակող:» (ՄՄ69,326բ). "Amphibolia autem est principium fallendi ex oration simpliciter eadem plura significante." (P.H.,TVII,106):

«Էլենքոս». "elenchus"- մոլորեցնող կամ «պատրանքներ» պարունակող դատողության տեսակ. «Էլենքոսն է հակասական հավաքաբանութիւն միոյ և նոյնի, ոչ միայն անուան, այլ իրին և անուան, ոչ բազմանուանն ի յայսցանէ, որ տուեալ են ի հարկէ, ոչ խնդրելով զայն, որ ի սկզբանէն էր, առ նոյնն ըստ նոյնոյն, նմանապէս և ի նոյն

ժամանակի:» (ՄՄ69,336ա). "Elenchus est sillogismus contradictionis unius et eiusdem, non nominis tantum, sed rei et nominis, non sinonimi, sed eiusdem, ex hiis que data sunt ex necessitate, non connumerato quod erat in principio, secundum idem, et ad idem, et similiter, et ineodem tempore." (P.H.,TVII,161-62):

«Արգումենթասիո». "argumentatio"- առարկության իրացումն ու ծավալումն իբրև ամբողջական դատողություն. «Արգումենթասիո է ծավալումն արգումենթին բանի, այսինքն թե՛ արգումենթասիո է բան ծավալող գառարկութիւն:»(անդ). "Argumentatio est argumenti per orationem explicatio, idest oratio explicans argumentum."(անդ), «Դիալեկտիկայի» ուշ շրջանի՝ ԺԷ դարի ձեռագրում "argumentatio"-ն թարգմանված է «առարկայատություն» (ՄՄ1685,158բ):

«Ինդուքսիո». "inductio"- տրամաբանության անկատար գործիքի տեսակ. «Ինդուքսիայն է, յորժամ ի մասնականացն [բաւականապէս թուեալ] եզրակայանայ ընդհանրական առաջարկութիւնն, որպէս Սոկրատէս ընթանայ, Արիստոտէլ ընթանայ, յայսպէս և այլոցն, ապա ուրեմն ամէն մարդ ընթանայ:» (անդ). "Inductio est progressus a particularibus ad universale. UtSortes currit, Plato currit, Cicero currit, et sic de singulis ergo omnis homo currit'."(անդ):

«Ենթիմեմայ». "entimema"- տրամաբանության անկատար գործիքի տեսակ. «Իսկ իէթիմեմայն է հաւաքաբանութիւն անկատար, յորժամ եղեալ մի ռաջարկութեամբ միայն եզրակայանայ շտապական եզրակացութիւն, որպէս այս՝ ամէն կենդանի ընթանայ, ապա ուրեմն մարդիկ ընթանան:» (ՄՄ2382,343բ,345ա). "Entimema est sillogismus imperfectus, idest oratio in quanon omnibus antea positis propositionibus infertur festinate conclusio. Ut'omne animal curritergo omnis homo currit'." (անդ):

«Տեղի իդիսփարաթէ». "locus a disparatis"- փաստարկում կառուցելու պարագա՝ «տեղ» (ՄՄ2382,360բ). այս տեսակը բացակայում է Իսպանացու քննական տեքստում և իբրև հետագա ընդմիջարկություն՝⁸ նշված է տողատակում (P.H.,TV,73):

«Սինքաթեգրամաթայ». "sincathegoremata" (տառադարձումը՝ մասամբ սխալ)- ոչ լիիմաստ խոսքի մասերը բնութագրող հունական քերականության հասկացություն, որ լատինացրել է Պրիսցիա-

⁸ Տե՛ս անդ, էջ LXIII-IV:

նուր⁹, իսկ հետագայում՝ ԺԳ դարից դիտարկվել է սխոլաստիկայի մեջ. «Իսկ գիտելի է, զի դիալեթիկոսն դնէ միայն բ մասունս բանին, այսինքն՝ անուն և բայ, ...զայլ զմասունսն կոչէ սինքաթէգրամայ, որ է առնշանական:» (ՄՄ69,276ա-բ,278բ). "Et sciendum est quod dialeticus ponit duas partes orationis tantum, scilicet nomen et verbum, alias vero partes appellat sincathegoremata, idest consignificativa." (P.H.,TI,2-3):

«Ֆալսիգրաֆուս». "falsigrafus"- ճշմարիտ սկզբունքներով կազմված ապացուցողական սիլլոգիզմին հակադիր կեղծ սիլլոգիզմ. «Բայց ընդդէմ այսմ հաւաքաբանութեանս է այլ իմն հաւաքաբանութիւն, որ կոչի հաւաքաբանութիւն ֆալսիգրաֆուս, այսինքն ստապատում, և արդ հաւաքաբանութիւնս այս է ի նոյն սկզբանցն, յորմէ և ապացուցականն, բայց ստաբար իմացեալ:» (ՄՄ69,313ա). "Et contra istum sumitur alius, qui nominatur falsigrafus et est ex eisdem principiis falso modo sumptis." (P.H.,TVII,90) նն:

Որոշ տերմիններ գործածված են կրկնակ ձևերով՝ տառադարձությամբ և հայերեն համարժեքով.

«Լօճիկայ», «տրամաբանութիւն». "logica"- «լօճիկայն ուսուցանէ զկերպ ընթեանուր գիտելոյն:» (ՄՄ 69, 268ա), նաև՝ «տրամաբանութիւն» (ՄՄ 69, 268բ նն):

«Սիլլօջիզմուս», «հաւաքաբանութիւն». "sillogismus"- դեդուկտիվ մտահանգում, «սիլլօջիզմուս, որ է հաւաքաբանութիւն» (ՄՄ69,299բ):

«Թեմթաթիվա», «փորձողական». "temptativa"- սիլլոգիզմի տեսակ. «զ տրամաբանութիւն է թեմթաթիվօ» (ՄՄ69,312բ), որ թարգմանված է «փորձողական»(անդ) կամ «փորձող». «Իսկ փորձող հաւաքաբանութիւն է, որ յառաջ գայ ի հաւաստականաց առաջարկութեանց պատասխանողացն, այլ երբեմն փորձողն յառաջ գա ի հարկաւորաց առաջարկութեանցն, և երբեմն ի հաւաստականաց առաջարկութեանցն բոլորովին, և երբեմն ի սուտ առաջարկութեանց:» (ՄՄ69,314ա). "Temptativus autem sillogismus est qui est sillogizatus ex probabilibus respondenti. Unde si est aliquando ex necessariis, vel ex falsis, vel ex probabilibus simpliciter." (P.H.,TVII,90-91):

«Արգումենթումն», «առարկութիւն». "argumentum"- փաստարկում կառուցելու միջոց, բացի տառադարձված փոխառված ձևից

⁹ Prisciani Institutionum Grammaticarum Libri I-XII, ex recensione Martini Hertzii, Lipsiae, 1859, էջ 55.

(ՄՄ2382,344ա)՝ ունի հայերեն տարբերակ, որը և տրված է սահմանման մեջ. «Առարկությունն է բան առնող զհաւատն ի կարծելի իրաց:» (ՄՄ2382,340բ). "Argumentum est ratio rei dubie faciens fidem." (P.H.,TV,55):

«Էքսէմփլում», «գաղափար». "exemplum"- տրամաբանության անկատար գործիքի տեսակ, որը գործածված է փոխառությամբ (ՄՄ69,312բ) և հայերեն կրկնակով. «Դ տեսակ արգումենթասիին է գաղափարն, որ է այս՝ յորժամ միով մասնականաւն հաւաստի միւս այլ մասնականն վասն նմանութեան ինչ, որ գտանի ի նոսին:» (ՄՄ2382,345ա). "Exemplum est quando per unum particulare probatur aliud particulare propter simile repertum in ipsis." (P.H.,TV,58) նն:

Բ. Քերականական լատինաբանություններ «Դիալեկտիկայում»:

Առհասարակ լատինաբան գրականության մեջ բավականին կենսունակ են շարահյուսական օտար դարձվածները¹⁰, ուստի չկենտրոնանալով այդ կաղապարների մանրամասն քննության վրա, որոնք բնագիրը կրկնելու պարագայում, կարելի է ասել, սպասելի շեղումներ են, միայն մատնանշենք «Դիալեկտիկայում» դրանց առկայությունը վկայող մի քանի օրինակներ: Այսպես՝ բացառականի նշանակությամբ մասնական սեռականը (genetivus partitivus), որ նաև հունաբան հայերենից սերող հատկանիշ է¹¹, թարգմանվել է անփոփոխ՝ իբրև բուն սեռական. «Իսկ արդ գիտելի է, զի ամէն հաւաքաբանութիւն լինի յերից սահմանաց և յերկուց առաջարկութեանց, որոց նախադասութեանցն (այս և մյուս ընդգծումները՝ S.U.-ի) առաջինն կոչի մեծ և բ փոքր:» (ՄՄ69,300ա-բ), "Omnis autem sillogismus constat ex tribus terminis et duabus propositionibus. Quarum propositionum prima vocatur maior propositio, secunda minor." (P.H.,TIV,43-44), պատճենվել է լատիներենի կրավորական սեռի անորոշ դերբայով դարձվածը. «Եզական սահմանէ այն, որ բնաւորեալ է միայն ի միոյ ստորոգիլ:» (Բ.,69,280ա-բ). "Terminus singularis est qui est aptus natus de uno solo predicari." (P.H.,TI,4-5) նն:

Առավել հետաքրքրական են լատինատիպ նորամուծությունները ձևաբանության մեջ: Լատինաբան, նաև հունաբան տեքստերում ձևաբանական ընդօրինակություններն արված են ներքին մի-

¹⁰ Տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, Ե., 2010, էջ 305-16:

¹¹ Տե՛ս Վ. Գ. Մորադյան, Հունաբանությունները դասական հայերենում, Ե., 2010, էջ 135-37:

ջոցներով՝ հայերենի բառակազմական նյութի հիման վրա, և սա օրինաչափ է, քանի որ ձևաբանությունը, ինչպես հայտնի է, ֆորմալ փոխադրություններից հնարավորինս զերծ է, և եթե օտար ձևեր ներմուծելու դիտավորություն չկա, բառացի թարգմանության պարագայում ևս փոխառություններ այս մակարդակում չեն կատարվում: Այնուամենայնիվ, մի ուշագրավ կիրառություն ենթադրել է տալիս, որ նման փորձ արվել է: Լատիներենի "ab" նախդիրը թարգմանության մեջ տրված է «աբ» տառադարձությամբ, ընդ որում՝ ոչ եզակի օրինակով, որ կարող էր ակամա կիրառություն դիտվել. այս ձևը որոշակի կայունություն ունի, գործածվել է մի քանի տեղ՝ տարբեր բառերի հետ.

«Եւ իփօթեթիկայն ասի յունարէն *աբ իփhouէ*, որ է ի ներքոյ, և ի թեզիսէ, որ է եղումն, այսինքն ի ներքոյ եղումն:» (ՄՄ69,289ա). "Et dicitur ypoteticaab 'ypos', quod est sub, et 'thesis', quod est positio, quasi suppositiva." (P.H.,TI,8-9): «Առաջարկութիւն է բան ստորասական կամ բացասական՝ ումեմն գումեմնէ կամ ումեմն *ապ ումեքէ*:» (ՄՄ69,297բ). "Propositio est oratio affirmativa vel negativa alicuiusde aliquo vel alicuius *ab aliquo*." (P.H.,TIV,43), իսկ շարունակության մեջ, որը թարգմանություն չէ, այլ հասկացության լրացուցիչ բացատրություն, նույն ձևը տրված է անփոփոխ. «Բանս այս մարդ է կենդանի, է ստորասական ումեմն գումեմնէ, իսկ բանս այս՝ մարդն ոչ է էշ, է բացասական ումեմն *ապ ումեքէ*:» (անդ):

Սակայն փաստերը հակասական են օրինաչափություն ակնկալելու համար. մի կողմից ակնհայտ է, որ այդ նախդիրը գիտակցված գործածվել է որպես բացառականի կազմիչ՝ *աբ/պ + է*, մյուս կողմից բազմաթիվ են և միանգամայն իշխող համարժեք նախդրի (*ab > ի/յ*) օրինակները (վերևի օրինակում՝ փոխառյալի հետ կողք կողքի՝ *աբ իփhouէ, ի թեզիսէ*): Այս անկասկած գիտակցված, բայց նաև մասնակի և ոչ հետևողական կիրառությունը, կարծում ենք, փոխառության զգուշավոր փորձ է, այսպես ասած՝ ստուգողական առաջարկ, որը կարող էր հետագա կրկնությամբ ընդունվել՝ հավակնելով օրինավորության, կամ մերժվել՝ մնալով անսովոր և մեկուսացած ձև:

Ձևաբանական մեկ այլ շեղում. լատիներենի ներկա դերբայը երբեմն փոխանցվել է «կու» մասնիկով, ըստ երևույթին՝ դրա ան-

կատար կերպը ընդգծելու համար, չնայած որ հայերեն համարժեքը ինքնին, առանց հավելյալ մասնիկի, նույն կերպանիշն ունի.

«Ընդունելութիւնս այս, որ է *կու աշխատող*, ինքնըստինքեան լատինացոցն զներկա ժամանակ նշանակէ» (ՄՄ69,324ա): "*labo-rans... dicitur presentis temporis.*" (Р.Н.,TVII,104), նաև՝ «կու նստողն»- "sedens" նն:

Т. Г. Сирунян, Латинизмы в “Диалектике” Бартоломео Марагаци. “Диалектика” Бартоломео Марагаци, будучи отчасти переводным сочинением, в значительной степени находится под влиянием латинских источников: в статье показана устойчивость латинских форм на лексическом и грамматическом уровнях армянского языка, на примерах из первоисточника продемонстрированы заимствования терминов, необычные стилистические формы и, что особо примечательно, морфологические варваризмы.

T. Gh. Sirunyan. The Latinisms in the “Dialectics” of Bartholomew Maraghatsi. The work “Dialectics” by Bartholomew Maraghatsi, being a partly translated work, is largely influenced by Latin sources. The article shows the stability of Latin forms at the lexical and grammatical levels of the Armenian language; using examples from the original source, borrowings of terms, unusual stylistic patterns and, most notably, morphological barbarisms are demonstrated.

**ՇՐՋԱՍՈՒԹՅԱՄԲ ՈՃԱՎՈՐՎԱԾ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Բանասիր. գիտ. թեկնածու Հ. Զ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ազատ և կայուն կապակցությունների վերաիմաստավորման ուղիներից մեկը շրջասությունն է, որը անձերի, երևույթների, առարկաների նկարագրական բնութագրումն է՝ ուղղակի անվանման փոխարեն նկարագրական արտահայտությունների օգտագործումը: Շրջասությունների թվին են պատկանում մեղմասությունները, որոնք հասարակաբանությունների կամ արգելված հասկացությունների նկարագրական արտահայտությունն են:

Նշված դարձվածքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած դիտարկված դարձվածքների մեծ մասը հատուկ է այս կամ այն լեզվին, նրանց շարքում հանդիպում են նաև այնպիսիք, որոնք ունեն իրենց համարժեքները մյուս լեզուներում: Այդ համարժեքները վկայում են նշված լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների մասին, որոնց ուսումնասիրությունը կարող է նպաստել դարձվածաբանության ոլորտում լեզվաբանական ընդհանրությունների բացահայտմանը:

Առանցքային բառեր. դարձվածաբանություն, շրջասություն, մեղմասություն, դարձվածքային միավոր, արտահայտություն, այլաբանություն, փոխաբերություն, համարժեք, լեզվամտածողություն:

Ելնելով իր դարավոր դիտարկումներից ու սեփական փորձից, ժողովուրդը փորձել է բացատրել մարդու օրգանիզմում տեղի ունեցող երևույթները, ապա լեզվի զարգացման ավելի բարձր մակարդակում կատարել լեզվական ընդհանրացում և երևույթի բնախոսական նշանակության ըմբռնումից հասել նրա բարոյական նշանակության գիտակցմանը: Նշված դիտարկումներն ու պատկերացումները հաճախ իրենց արտահայտությունն են գտել ոչ միայն առանձին բառերում, այլ նաև դարձվածային միավորներում: Վերջիններս

ավելի դիպուկ ու պատկերավոր են դարձնում լեզուն՝ հաղորդելով նրան ավելի մեծ հուզարտահայտչականություն ու հյութեղություն:

Ցանկացած լեզվի ազատ և կայուն կապակցությունների իմաստային փոխակերպման ամենատարածված ձևերից մեկը դրանց բաղադրիչների վերաիմաստավորումն է, որը կարող է կատարվել ոճական տարբեր հնարներով՝ փոխաբերությամբ, փոխանունությամբ, շրջասությամբ, համեմատությամբ և այլ հնարներով: Հոդվածում ուսումնասիրվում և զուգադրվում են հայերենի, ռուսերենի և անգլերենի շրջասություն-դարձվածքները, որոնք լայնորեն կիրառվում են ժողովրդախոսակցական լեզվում և գեղարվեստական խոսքում:

Շրջասությունը (պերիֆրազ - հուն. *periphrasis* – նկարագրական այլաբանական) երևույթների, առարկաների և անձերի նկարագրական բնութագրումն է, որի դեպքում ուղղակի անվանման փոխարեն օգտագործվում են նկարագրական արտահայտություններ: Շրջասության մեջ նշվում են առարկայի, երևույթի կամ անձի էական կողմերը, հատկանիշները, և այդպես հասկանալի է դառնում, թե խոսքն ում կամ ինչի մասին է: (ԳՀ, 53): Շրջասությունը կարող է ունենալ ուղղակի կամ փոխաբերական իմաստ: Փոխաբերական շրջասության մեջ բառակապակցության ուղղակի իմաստը ետին պլանում է: Երբեմն նրա ուղղակի իմաստով հասկացությունն օգտագործվում է որպես երգիծանք:

Ինչպես փոխաբերությունները, այնպես և շրջասությունները լինում են ուժեղ և քնարական: Նկարագրական հասկացությունների դեպքում դրանք առաջ են բերում յուրօրինակ պատկերներ:

Ոճական այս հնարով բազմաթիվ դարձվածքներ են ձևավորվում: Ինչպես մյուս բոլոր դարձվածքները, այնպես էլ սրանք պետք է ունենան կայունություն, մյուս կողմից՝ դրանք չպետք է օժտված լինեն անվանողական դերով (ԲԺ, 102):

Իրենց բնույթով շրջասությունները լինում են նկարագրական և այլաբանական: Նկարագրական շրջասությունները հասկացության պարզ անվանումներն են՝ այլ բառերի միջոցով, օր.՝ *Գլխին-նոտին անել*, - 1. Ձեռք ու ոտքով խոսել, ակնարկներով բան հասկացնել: *Հերդ ծառի տակից գլխին-նոտին էր անում, ես չհասկացա* (ՍԳՀ, 148): 2. Զուգվել, զարդարվել, պճնվել: *Ղորդ ա, մի քիչ ոտին-գլխին արեց, ամա էն էլ բարեկենդանի հունարն էր* (ՍՎ, 24): *Բե-*

բանը ցամաքել, - Սաստիկ ծարավ զգալ, պապակել, լեզուն ցամաքել: “Տո լերդս կպավ՝ է՛, բերանս հո ցամաքեցավ. էդ զահրըմարը մի ածա, որ տեսնինք՝ ինչ համ ունի է, ա՛յ տնաշեն” (ԱՎ, 35): Ունքերը բացել / բացվել, - Մռայլ տրամադրությունն անցնել, ուրախանալ: Սյդ լուրը լսեց, ունքերը բացվեցին: Հոնքերն իրար տալ, - Հոնքերը կիտել: Մկրտումն հոնքերն իրար տվավ ու գլուխը թեթելով Եգորի կողմը, կանչեց (ԲԵ, 472): Մազերը սպիտակեցնել / ձերմակեցնել, - Ծերացնել՝ չարչարելով, տանջելով, վիշտ պատճառելով: Համբերանք չմնաց, դուրս պիտի ելլա, դու թա չեմ ուզեր, մազերս ձերմակցուց (ԹՎԵ, I, 99): Գլխին ձյուն թափվել/նստել – Ծերանալ, մազերը սպիտակել: Թափվեց տիեզերքի ձյունը նրա գլխի վրա (ԹՎԵ, I, 522): Կարմիրը / սպիտակը դուրս անել, սեր՝ ներս, - Տխրությունը ցույց չտալ: Ու ամբողջ օրն աշխատում էր կարմիրը դուրս, սեր՝ ներսն արած: Գրի սեն ու սպիտակը ջոկել, - Փոքր-ինչ գրագետ լինել: Ինքն էլ աչքաբաց երեխա, մեր գեղական շկոլումն էլ գրաճանանչ ա էլել, գրի սեն ու սպիտակը ջոկում ա (ԹԵ, V, 39): Աչքի սեն ու սպիտակը դեղնել, - Ուշագնաց լինել: Արյուն տեսնելիս նրա աչքի սեն ու սպիտակը դեղնում էին:

Ударить в голову, - Հարբե(ցնել) (խմիչքի մասին): *Да кроме того, выпил эти полстакана вина, и уже капельку в голову ударило* (ДФП, 451). *Тут на ухо*, - Վատ լսող: *Ничего, ничего, она немного на ухо тут, не услышит* (КАС, II, 33). *Чесать язык*, - Դատարկախոսել, շաղակրատել: *Болтал кое-что; язык почесать захотелось. Take to one's heels* (բառացի՝ վերցնել մեկի կրունկների մոտ), - Փախչել: *If he had seen that dreadful thing, he would at once have taken to his heels.*

Do a hot foot (ամեր. ժ.) (բառացի՝ անել տաք ոտք), - Արագ փախչել: *Seeing that man as he was coming out of the room he went on the hot foot.*

Այլաբանական շրջասությունը մի կողմից՝ այլաբանորեն անվանում է հասկացությունը, մյուս կողմից՝ ունենում է նաև փոխաբերական իմաստով օժտված բառեր: Օրինակ՝

Ձեռքը գրպանից խռով լինել, - Չքավոր լինել, փող չունենալ: *Ձեռքը գրպանից խռով է, բայց էլի մեծ-մեծ բրդում է* (ՄՀ, II, 316): *Ոտք տալ* (խսկց.), - 1. Խրախուսել, ոգևորել: *Նրան ոտք տվողը եղբայրն էր, որ կատարում էր նրա բոլոր քմահաճույքները*: 2. Խան-

գարել, խոչընդոտել: Մտքերով տարված խոհուն քայլելիս Դավադրաբար ոտք էին տալիս (ՄԵ, IV, 153):

Пропускать мимо ушей, - Ուշադրություն չդարձնել, չլսել: *Ну, и пушай она говорит, а ты мимо ушей пропускай* (ՕԱՍ, 112). *Не щадя / не жалея живота* (հնգ.), - Կյանքը չխնայելով: *Бойцы нашей родины боролись против врага не щадя живота. Показать нос*, - Գալ, երևալ: *Прячешься иногда, прячешься, боишься нос подчас показать куда бы там ни было* - (ԴՓԲ, 57).

A swelled head (բառացի՝ ուռած գլուխ), - Ինքնագոհություն, կարևորության զգացում: *"In case you're getting a swelled head we'll get half an hour off and I'll beat you at piquet"* (ԿԱԿ, 148). *Give it mouth* (բառացի՝ բերան տալ դրան), - Պերճախոսել: *What I say in respect to speeches always is, give it mouth* (ԿԱԱ, 517). *A bag of bones*, - Շատ նիհար: *There, get downstairs, little bag of bones* (ԴՇՈ, 31).

Շրջասություններն առաջանում են ոճական կամ արտահայտչական նպատակներով կիրառվող բառակապակցություններից ու այլ ձևերից կամ ժողովրդի դարավոր դիտումներից ու փորձից: Դարձվածքներն առաջանում են ընդհանրացման հետևանքով, օրինակ՝ երբ մարդ մոայլվում է, հոնքերը կիտվում են: Այս դիտարկման հիման վրա առաջացել է *աչք ու ունքը կիտել* դարձվածքը՝ մոայլվել, տխրել նշանակությամբ: Երբ մարդու դեմքին դժգոհության արտահայտություն է երևում, ասում են, որ նա դեմքը թթվեցրել է - *Չեմ հասկանում՝ ինչ է պատահել, դեմքը թթվեցրել է, ոչ մեկի հետ չի խոսում, հոնքամեջը/ունքամեջը բացել/բացվել/ ետ գնալ* (ուրախացնել, տրամադրությունը բարձրացնել) - *Տեսնում են, որ իրենց հերը շատ է տխուր, սիրտը չի բացվում, ունքամեջը ետ չի գնում* - (ԹԵ, V, 398), *մի աչքը լալ, մյուսը՝ ծիծաղել* (վիշտը ցույց չտալ, խորը չզգալ) - *Ամուսնու մահից հետո Հայկուհին ապրում էր թոռների համար. մի աչքով լալիս, մյուսով՝ ծիծաղում էր*:

Ոտքերը քոր գալ, - 1. Ծեծի արժանի գործ բռնել: *Ոտքերդ քոր են գալիս, որ ծառը քարջարդ էս անում, հայրդ գա՛ հոգիդ կառնե* (ՄՀ, II, 523): 2. Սաստիկ փափագել մի բան անել: *Ոտքերը քոր են գալիս պարելու ցանկությունից: Ոտքերը ձգել/ տնկել* - Մեռնել: *Գնամ, էն ցավին մի դեղ ու դիր անեմ, թե չէ սատանեն հակառակ է, ոտներս չձգենք էս ձմեռվա կեսին* (ՍԳՀ, 477), *Մատը կծել/խածնել*, - 1. Գլխի ընկնել, կռահել: *Ավետիսին մահեն հետո ամբողջ Խարբերդ*

մատ խաճավ (ԹՎԵ, I, 120): 2. Ջարմանալ, հիանալ: *Մատները կծում են հսկաներն ու մնում են տեղները սառած* (ԹԵ, V, 1994, 240): *Մատը բերանում մնալ*, – Ջարմանքից ապշել, շվարած մնալ: *Ցիրկ էի գնացել, այնպես համարներ էին անում, որ մատս բերանումս մնաց նայելիս* (ՄՀ, II, 428): *Աչքերը բաց մնալ*, – Խիստ զարմանալ, ապշել: *Աչքները մնաց բաց, չունքի նրանց երկրումը էնպես արմաղան բաներ չկային* (ԱՎ, 106): *Կրունկները ցույց տալ*, – 1. Փախչել, փախուստի դիմել: *Իմացիր, եթե ձեռքդ դողաց մարտում կամ կրունկն ցույց տվիր, ապա կմորթվես առաջին զինվորի ձեռքով* (ԽՄ, II, 23): 2. (անարգ.) *Հեռանալ: Դուրս կորեք, անասուններ, որտեղ էք գտվում: Ապա ցույց տվեք ձեր կրունկները* (ՍԳՀ, 335): *Պատն երեսին*, – Բոլորովին մենակ: *Հիմա տունս քանդվեցավ և ես ալ ասանք պատի երեսին մնացի* (ՕԵ, 566): *Թաթ ու կրունկ* (բբբ), – Հարբած: *Ամբողջ օրը խմել թաթ ու կունկ էր դարձել:*

Open one's eyes (բառ.՝ բացել աչքերը), – Ջարմանալ, ապշել: *If Oliver had been attired in his charity-boy's dress, there might have been some reason for the Jew opening his eyes so wide* (DChO, 358).

Հարկ է նշել, որ որոշ դարձվածքներում, ինչպես *աչք ու ունքը կիտել*-ը օգտագործվում է նաև այն դեպքում, երբ ունքերը կիտված չեն: Նման դիտարկումների և ընդհանրացումների արդյունք են նաև *մատը խաճնել* կամ *բերանում մնալ* (հիանալ, զարմանալ) և *աչքերը բաց մնալ* (ապշել), *open one's eyes* (խիստ զարմանալ):

Երբեմն երևույթների անուղղակի անվանումն ավելի տպավորիչ է: Շրջասությունները այս կամ այն հասկացությունն արտահայտում են իմաստավոր պատկերավորությամբ, օրինակ՝ *կրունկները ցույց տալ* (փախչել), *казать / показать нос* (գալ, երևալ), *a bag of bones* (շատ նիհար) և այլն:

Մյուս կողմից՝ ոճական այս հնարն օգտագործվում է տպավորությունը մեղմացնելու, վիրավորանքի զգացումը թուլացնելու համար: Այս ձևով մարդիկ փորձում են խուսափել անպարկեշտ բառեր գործածելուց: Շրջասություններ են օգտագործվում նաև երկյուղից, նախապաշարմունքից կամ իրենց իմացածը ուրիշին չհայտնելու նպատակով: Այսպիսի շրջասությունները ծածկաբանություններ են: Էթիկական նպատակներով գործածվող ծածկաբանությունները էվֆեմիզներ են (հուն. euphemia – մեղմասություն, գեղասություն), որոնք անհարմար, տհաճ, կոպիտ համարվող բառերի և արտահայ-

տությունների փոխարինումն է վայելուչ հոմանիշներով: Մա խոսքի կառուցման մի եղանակ է, երբ քաղաքավարական կամ այլ նկատառումներով նվազեցվում, մեղմացվում են բացասական հասկացությունները դրանց ոչ ուղղակի արտահայտման միջոցով: Որպես ոճաբանական դարձույթ՝ մեղմասությունը գործադրվում է գրավոր խոսքում և հարում շրջասությանը:

Մեղմասական խոսքը հաճախ աչքի է ընկնում քաղաքավարական, հորդորական, մեղմասական բնույթի բառերի առատությամբ: Մեղմասությունը հատուկ է նաև ժողովրդական լեզվամտածողությանը: Այն կարող է նաև լինել արգելաբանության (տաբու) հետևանք, երբ սնոտիապաշտական, ավանդական կամ այլ պատճառներով արգելքի ենթարկված առարկայի անվան փոխարեն գործածվում է մեղմասական ձևը: Երկյուղի և զգուշացման շրջասությունները ծածկաբանություններ են (*սպիտակ ջուր* – օղի, *blue bottle* – թույն): Բերենք մեղմասությունների և ծածկաբանությունների մի քանի օրինակներ դիտարկվող լեզուներում. *Բերան հանել*, - Մի գործ հաջողեցնել, գլուխ բերել: *Մինչ այս գործը բերան չհանեմ, չեմ հանգստանա* (ՄՀ, I, 237): *Գլուխը հաստանալ*, - Բթամիտ դառնալ, ապուշանալ, կոպտանալ: *Բանը էն չի, որ մարդ ծեքը տալիս գնա ժամը, մեկ, երկու ծունդը դնի, ուտի, խմի, քեֆ անի, փորն ու գլուխը հաստացնի ու գնա մեր ջանին ընկնի* (ԱՎ, 30): *Ափը յուղոտել*, - Մեկին դրամ պարգևել, կաշառել: *Թե որ տեր պապայի ափը յուղոտենք, գործը մեր օգտին կանի* (ՕԵ, 387): *Սև սրտի տղա*, - Սատանա: *Էդ սև սրտի տղեն դրա խելքը լրիվ կերել է: Սև ոտքով (ծածկ.)*, - Տավար: *Հարևանը մի սև ոտքով ուներ, գիշերը հասել տարել են, մորթել* (ՍԳՀ, 523): *Ոսկոր ու կաշին մնալ*, - Նիհարել: *Խեղճ աղջիկը տկար ինկած էր, կաշին ու ոսկորը միայն մնացած, քալելու, շարժվելու կարողություն չուներ* (ՕԵ, 134): *Կոկորդը թրջել*, - Մի քիչ կոնծել, մի փոքր ոգելից խմիչք խմել: *Հավ ես երգում, Դանիել ախպեր, համեցեք, համեցեք: Եկ, կոկորդը թրջիր* (ՇԵ, 419): *Փորը լցնել*, - Կուշտ ուտել, խմել: *Գնա գիրի բեր, էս գայլերի փորները լցնենք, աղջիկ ջան, թե չէ սրանք հոգիս կհանեն* (ԽՄ, I, 80): *Աչքերը փակել*, - Մեռնել: *Մի գիշեր էլ անկողին մտավ և մի քանի օր հետո աչքերը հավիտյան փակեց* (ՍԳՀ, 121):

Промочить горло, - Մի քիչ խմել: *Братцы! Я ноги промочил! – Иди Алешка, промочи горло, только и всего* (КДР, 143). *Живот к*

позвонкам прилипает, - Շատ քաղցած, փորը դատարկ: *Я уж думал, у меня живот к позвонкам прилипнет...* (КДР, 143). *Протянуть ноги* (ժղվրդ.), - 1. Մեռնել: *Другой бы, и зрелее его годами и силой, давно бы ноги протянул.* (КДР, 382). *Унести ноги*, - Փախչել, փախչելով փրկվել: *Лишь бы вам удалось ноги отсюда до ночи унести подброду-поздорову* (КДР, 383).

Crow's feet (բառացի՝ ագռավի ոտքեր), - Կնճիռներ (հատկապես աչքերի անկյուններում): *His eyes were bright and steely, but there were crow's feet on either side* (DThJ, 326). *Close one's eyes* (բառացի՝ փակել աչքերը), - Մահանալ: *After the prayer he relaxed and his eyes closed forever* (KAA, 250). *Go off one's head* (Å.) (բառացի՝ գլխից գնալ), - 1. Խելագարվել, ցնորվել: *No, but, honestly Chris. I feel like going off my head when I think about it* (CAC, 17). 2. Գլուխը կորցնել մեկի պատճառով, խելագարվել: *She couldn't let her daughter go off her head about this dishonest young man. Touched in the head* (բառացի՝ ձեռք տված՝ գլխում), - Հիմարավուն, անխելք: *You're acting like you were touched in the head tonight* (KAA, 371).

Ինչպես նկատում ենք, մեղմասություններն աչքի են ընկնում ժողովրդական խոսքի նրբությամբ, արտահայտման զգույշ ձևերով:

Այսպիսով, ոճական այս հնարով կազմված առկա են դիտարկվող դարձվածքներ բոլոր լեզուներում, սակայն առավել հարուստ է հայերենը: Շրջասություն- դարձվածքները ոչ միայն նպաստում են խոսքի պատկերավորությանն ու արտահայտչականությանը՝ այն դարձնելով ավելի տպավորիչ, այլև բացահայտում են մարդկային բնավորության տարբեր գծեր, իրավիճակներ, գործողության տարբեր հանգամանքներ:

Նշված միավորները պատկանում են իմաստակառուցվածքային տարբեր խմբերի, դրանք մեծ մասամբ մենիմաստ դարձվածքներ են: Հազվադեպ հանդիպում են նաև երկիմաստները:

Ուսումնասիրված դարձնածքները հիմնականում օգտագործվում են ժողովրդախոսակցական լեզվում, բարբառներում: Նրանցով հարուստ է գեղարվեստական գրականությունը:

Չնայած երեք լեզուների դարձվածքներն ունեն տվյալ լեզվի լեզվական առանձնահատկությունները և հատուկ են այդ լեզուները կրող ժողովրդի լեզվամտածողությանը, սակայն հանդիպում են նաև այնպիսիք, որ ունեն իրենց համարժեքները մյուս մեկ կամ

երկու լեզուներում, և դա պատահական չէ, քանզի դիտարկվող լեզուները կրող բոլոր ժողովուրդներն էլ կարող են իրենց դիտարկումների, պատկերացումների և երևակայության հիման վրա ձևավորել նույնիմաստ շրջասույթներ: Եվ հենց այս հանգամանքով է պայմանավորված համարժեք դարձվածքների գոյությունը, ինչը վկայում է հիշյալ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների մասին, ինչն էլ իր հերթին, կարող է նպաստել դարձվածաբանության ոլորտում լեզվաբանական ընդհանրությունների բացահայտմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- ԳՀ - Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Ե., Երևանի համալս. հրատ., 1969:
 ԲԺ - Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., «Լույս» հրատ., 1973, 231 էջ:
 ՍԳՀ - Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևանի համալս. հրատ., 1975:
 ԱՎ - Աբովյան Խ., Վերք Հայաստանի, Ե., 1975:
 ԲԵ - Բակունց Ա., Երկեր, Մովսեսական գրող, հրատ., Ե., 1986:
 ԹՎԵ - Թորոպենց Վ., Երկեր 3 գրքով, Գիրք I, Ե., 1988:
 ԹԵ - Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1994:
 ԴՓՊ - Достоевский Ф.М. Преступление и наказание. М., 1983.
 ԿԱՏ - Куприн А.И. Сочинения. Том 2. М., 1981.
 ՄՀ - Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 1-4, «Հայպետհրատ», 1944-1945:
 ՄԵ - Մևակ Պ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ.4, Ե., 1973:
 ՕԱՊ - Островский А. Н. Пьесы. М., 1982.
 ԴՓԲ - Достоевский Ф.М. Бедные люди. Униженные и оскорбленные. М., 1974.
 ՏԱՏ - Cronin A.J. The Citadel. М., 1957.
 ԿԱԿ - Кунин А.В. Англо-русский фразеологический словарь. М.: Совет. энциклопедия, 1982.
 ԴՇՈ - Dickens Ch. Oliver Twist, "Prosvescheniye". М., 1981.
 ԽՄ - Խանգաղյան Ս., Մխիթար սպարապետ, հ. 2, Ե., 1964:
 ՕԵ - Օսոյան Ե., Երկերի ժողովածու, Ե., 1935:
 ՇԵ - Շիրվանզադե Ա. Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Պետ. հրատ., Ե., 1930:
 ԿԴՐ - Квеселевич Д.И. Русско-английский фразеологический словарь. М., 1998.
 ԴԺ - Dreiser Th. Jennie Gerhardt. М., 1972.

Ա. Յ. Կазарян. Фразеологизмы, образованные путем перифразы в армянском, русском и английском языках. Одним из самых распространенных способов переосмысления свободных и устойчивых словосочетаний является перифраз, представляющий собой описательное выражение, иносказание, описательно выражающее одно понятие с помощью нескольких. Частным случаем перифразы является эвфемизм – описательное выражение “низких” или “запретных” понятий.

Изучение данных фразеологизмов показывает, что, несмотря на то, что большинство указанных фразеологизмов свойственны тому или иному языку, среди изученных единиц существуют и такие, которые имеют свои эквиваленты в других

языках. Эти эквиваленты свидетельствуют о сходствах языкового мышления народов-носителей указанных языков, изучение которых может способствовать выявлению лингвистических универсалий в области фразеологии разных языков.

H. Z. Khazaryan. Armenian, Russian and English phraseological units formed by periphrasis.- One of the most widespread forms of semantic change of free and fixed collocations is periphrasis which is a device, denoting the use of a longer phrasing in place of a possible shorter and plainer form of expression. It is also called circumlocution due to the round-about or indirect way used to name a familiar object or phenomenon. A variety of periphrasis is the euphemism which is a word or a phrase used to replace an unpleasant word or expression by a conventionally more acceptable one.

The study of the mentioned phraseological units shows that although most of the considered phraseological units are peculiar to this or that language, among them can be found units which have their equivalents in the other one or two languages. These equivalents indicate the similarities between the linguistic thinking of the people speaking these languages. The study of these similarities will help reveal the linguistic universals in the sphere of phraseology.

ԳՈՒ ՍԱՆ ԱՇՈՏԻ ՏԱՂԵՐԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ՔՆՆՈՒ ԹՅՈՒՆ

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Ս. ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Գուսան Աշոտի ստեղծել է ինչպես գրական և ժողովրդախոսակցական տարրերի համադրմամբ, այնպես նաև ամբողջովին կամ մասամբ մայրենի խոսվածքով գրված տաղերի¹: Սույն հոդվածում քննել ենք այդ տաղերի բարբառային լեզվանյութը, որն ընդգրկում է Սյունիք-Արցախի բարբառային միավորների հարուստ բառազանձը:

Խոհն ու մտորումը, զգացմունքն ու ապրումը, բնականաբար, ավելի դյուրին է արտահայտել բարբառային բառերով, որոնք, ինչպես նշում է Ս. Մելքոնյանը, կա՛մ ձևով գրականից բոլորովին տարբեր են, կա՛մ գրականից տարբերվում են միայն մասնակի հնչյունական կազմով²: Գուսան Աշոտի գրական և բարբառային տարրերի զուգորդմամբ տաղերում, բարբառային իրողությունները սակավ են և ոճականորեն բարբառայնություն են ստեղծում: Հիշյալ գործերում առկա բարբառային բառամիավորները տարբեր ծագումն իմաստային դրսևորումներ են, որոնք հատկանշվում են նաև իրենց գործառական յուրահատկություններով: Ըստ այդմ՝ դիտարկել ենք այն բարբառային իրողությունները, որոնք վկայված էին և՛ գրաբարում, և՛ հնդեվրոպական նախալեզվում, որոնց մի մասը պահպանվել է նաև Սյունիք-Արցախի բարբառային գոտում: Ուշագրավ են նաև արևելյան լեզուներից անցած փոխառությունները, որոնք, կենսունակություն ունենալով Ղարաբաղի և Գորիսի խոսվածքներում:

Բարբառային որոշ բառեր սերում են հնդեվրոպական նախալեզվից. այսպես՝ *անում(ըն) // անըմ*(Ար., Ղրբ.) տարբերակում պահպանվել է հնդեվրոպական նախալեզվի **(a)nomn//*nōmn*³ արմատը,

¹ Դրանցից են «Չոլ չոլերը ծաղկալ են» (ԳՍ, էջ 134), «Իմ յարը մի դյան ա» (ՄԿ, էջ 114), «Ակներ յայլան Դադալունց» (ԼԿ, էջ 35), «Հռանանք վրեչ մըր ծորան» (ԼԿ, էջ 49), «Մհաջառի քեղուտում» (ԼԿ, էջ 88), «Մանամբաջի» (ԼԿ, էջ 90), «Տախծյուտի ջեյրան» (ԼԿ, էջ 105), «Կեծակն էլ ա երք պյուրում» (ԼԿ, էջ 113), «Մարյամ աքեր» (ԼԿ, էջ 98), «Նանի, նանի» (ԼԿ, էջ 172), «Ախր ցորտն ինձ հինչ կանի» (Մ, էջ 201), «Թոխպը-թխպին թև տված» (Մ, էջ 231), «Պեկակին»:

² Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 109-110:

³ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, էջ 209, Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 61:

ժամանակից սկսած մինչև այժմ»¹³ «օրան տէս», տ^{1/2}ս՝ «տեսնել-ի հրամայական»։ Գործիսի խոսվածքներում, *պէս* կապը ևս համապատասխանում է տէ/4/2ս հնչատարբերակները, ինչը վկայված է նաև Մարգարյանի կողմից՝ «Իշի հօքվի տէս..., Աշկի լծսի տէս ա յէշծմ քէզ»¹⁴։ Կարծում ենք, որ գուսանական հետևյալ բանատողում առկա է հենց կապային գործածությունը՝ «Սաս-սասի տանք, սրտեր պանանք կյուրունքվա տըես [տ^{1/2}ս]» (Հ, էջ 69) «գարնան պես»։ Ի դեպ՝ *պէս*-ի տ^{1/2}սձևը հազվադեպ է կիրառվում։

Միջին հայերենից է ավանդվել *էս չանք* դերանունը՝ «այսչափ, այսքան»՝ «*էս չանք* վարար թոռ կինի...այսչափք ձևը, որում «...*փ*-ն կա՛մ ընկել է (հմմտ. *տապք>տաք*), կա՛մ փոխարինվել ռնգային (մ, ն) ձայնորդով»¹⁵։ Ավելի հավանական է *փ*-ի անկումից հետո *ն*-ի հավելումը, օրինակ՝ Ղարաբաղի բարբառի *էսչա(ն)ք//էսչու(ն)ք*¹⁶ և միջին հայերենի *հանչափ//հանչաք//հանչանք* (<յայն չափ(ք)) «այնչափ, այնքան»¹⁷ տարբերակները։

Սյունիք-Արցախի խոսվածքներին բնորոշ բայաձևերի մի մասն ունի իմաստային յուրօրինակ կիրառություն, օր.՝ *սիլ՞րէլ* «թոշնել, թարշամել, թառամել»¹⁸՝ «...ախր սերտս *սիլարեզ*» (Ծ, էջ 201), *տազանէլ* «1. լռել, 2. սպասել, համբերել (բանատողում՝ «նեղանալ»)» (նաև՝ Ար., Ղրբ.)¹⁹՝ «Էտ խեյ ես թեհնց *տազըրար*» (Ծ, էջ 201), *ճոժկ//ճոշկ անէլ* «*բամբասել* (Թբ., Մշ, Բղշ, Սբ.²⁰)»։ «...*ճոշք* բառն ունի նաև Գորիսի բարբառը՝ *ճոշկ* և *ճոժկ* ձևերով, որոնք ևս *բամբասանք* են նշանակում»²¹՝ «Այ իմ նախշուն, *ճոժկ չանես* քու յարան» (ԼԿ, էջ 50)։ Այսպես նաև՝ *խտտէլ* (Ղրբ. Թբ. Մղր. Շիր. Խրբ.) «*գրկել*», *պըռնգընէլ* «տխրել, խեղճանալ», *մըռըզիլ* «1. *մթագնել*, 2. *խոժոռվել*, *նեղանալ*», *լուրսէլ* «*հյուսել*», *յէշիլ* «1. *նայել*, 2. *հետևել*» և այլն։

Գուսանի «Ծովաստղիկս» ժողովածուում այդ բայը հանդիպում ենք հետևյալ կառույցում՝ «Մեր եմ օգում քզանա, բա խե դարդ էս տյու պյուրում, Տեսնում չես վեր կուղվարած դիբա քեզ եմ *պյուն*-

¹³ Տե՛ս Ա. Յու. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 716։

¹⁴ Տե՛ս Ա. Մարգարյան, նշվ. աշխ., 1975, էջ 230։

¹⁵ Ա. Մարգարյան, նշվ. աշխ., 1975, էջ 163։

¹⁶ Ա. Յու. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 149։

¹⁷ Ռ. Մ. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե., 2009, էջ 407։

¹⁸ Տե՛ս Ա. Մարգարյան, նշվ. աշխ., 1975, էջ 470։

¹⁹ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 6, Ե., 2010, էջ 111։

²⁰ Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 3, Ե., 2004, էջ 410։

²¹ Ա. Մարգարյան, Ստուգաբանություններ, Ե., 2015, էջ 80։

այրուհուն [պօնպօն] (բնագրում *մ-ն ն է*, որը վրիպակ է)» (Օ, էջ 201). կարծում ենք, այս դեպքում ունի «դես ու դեն ընկնելով, կամաց-կամաց մոտենալու» իմաստը: Նշված օրինակում գործածված է բարբառային ևս մեկ բայ՝ *կըղվարել* «ցրտից կուչ գալ, կծկվել»²² *կուղվարել* ձևով, որ հանդիպում ենք նաև մեկ այլ բնագրում՝ «Հիշքան էլ վրեր չալղուն ինի, Նարգիզս, Սիմիս յիրա մանդրերս *կուղվարիլ չի*» (ԼԿ, էջ 49), որը, սակայն, «Հավերժություն»-ում համարվել է վրիպակ և «շտկվելով» փոխարինվել է «տուղվարիլ» (Հ, էջ 69) «տեղավորվել» բայաձևով, ինչն էլ, անկասկած, սխալ է: Գուսանը այս բայը կիրառել է՝ բարբառային *ը-ն* փոխարինելով *ու-ով* բարեհնչյունության նպատակով: Նշենք նաև, որ *կըղվարել* բայը ծագում է գրաբարյան *կաղաւել/կաղաւեմ* բայից, որը նշանակում է «հիբրթողով զկատաղութին, կաղանալ, թուլանալ, դալարիլ, թմրիլ»²³, ընդ որում՝ Գորիսի խոսվածքներում *կըղվարել/կուղվարել* բայը համապատասխանում է «թուլանալ, ուժասպառ լինել»-ուն: Իմաստային առանձնահատուկ գործածություն ունի *ախղ տալ* հարադրությունը՝ «Քամուն, թխպին, թոռ-թացին, չալղունին էլ *ախղ տվիր*» (ԼԿ, էջ 113). այս կազմությունը Ղարաբաղի և Գորիսի խոսվածքներում տարածված չէ: *Աղիս*-ի դիմաց Հ. Աճառյանի և Ստ.Մալխասյանցի բառարաններում գտնում ենք «*մետաղե շղթա, փականք*»²⁴, այս իմաստով վկայված է Գ. Ջահուկյանի բառարանում՝ արաբ. «yalaq, hqun. aylaq «փականք, կողպերք»»²⁵, Աճառյանը բարբառների համար նշում է նաև *ախլը* «գոց, կողպուած», *ախլանք* «դուռը կողպելու համար վրան անցուած շղթան»²⁶: Կարծում ենք՝ հիշյալ բանատողում բարբառային տարբերակը, ձևավորվելով նախ *լ>ղ* անցամբ, ապա՝ *ղ-խ* դրափոխությամբ, *տալ* բայի հարադրությամբ ունի *շղթայել, կողպել, փակել* իմաստը:

Գուսանի տաղերում կան քերականական այնպիսի կառույցներ, որոնք բնույթով և կազմությամբ բարբառային են, ինչպես՝ *ըռոնին թախկալ ա՝ «Էլ ծուն չիկյա, Մեծ ըռոնին թախկալ ա»* (ԳՄ, էջ 134), որում *ըռոնի* «քամուց կուտակված ձյան դեզ»²⁷ բառը Ալ.

²² Ա. Յու. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 355; Ա. Սարգսյան, նշվ. աշխ., 1975, էջ 414; Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 3, էջ 10:

²³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, էջ 1037:

²⁴ Մ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, էջ 45:

²⁵ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., 2010, էջ 38:

²⁶ Հ. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հ. 1, էջ 131-132:

²⁷ Ա. Սարգսյան, նշվ. աշխ., 1975, էջ 242, 386:

Մարգարյանը դասել է զուտ բարբառային բառաշերտում: Ենթադրում ենք, որ այն, հավանական է, սերում է հնդեվրոպական **er-* «շարժել, բարձրացնել»²⁸ արմատից, որից ծագել են նաև **or-n-*ը՝ գրաբարում՝ *ուռն* «մուրձ, կոան», Գորիսում՝ *օռնը*, **or-s-*ը՝ գրբ.՝ *ուռ* «1. ընձյուղ, 2. ուռած տեղ, պալար, 3. բարձ», որից նաև գրաբարում՝ *ուռոյց*, *ուռնուլ*, *ուռչիլ*, Գորիսում՝ *օռուսկ*, *օռէլ*, *օշէլ*: Կարծում ենք, որ նշված իմաստային անցումներով է պայմանավորված բարբառային բառի ձևավորումը, ինչին նպաստել է նաև վերջնահանգ *ն*-ի հավելումը: ՀԼԲԲ-ում *թախկէլ* (<թաղկիմ «թաղիքի պէս խիստ ըլալ, կծկիլ, թանձրանալ»²⁹) բառի դիմաց նշվում է. Մկս.«1. քշել, խոկել, հեռացնել, 2. հրել»³⁰, որը, մեր կարծիքով, տվյալ կառույցում արտահայտում է «1. կծկվել, 2. հեռանալ» իմաստները, որոնք աղերսվում, առնչվում են Ղարաբաղի և Գորիսի խոսվածքներում առկա *թըխկը հանէլ* բառին:

Ցանկացած բարբառի բառապաշարում որոշակի տեղ են զբաղեցնում օտար լեզուներից, մասնավորապես արևելյան, փոխառյալ բառերը, օր.՝ *վախտ* («արաբ.vakt»³¹)՝ «*Վախտը* վրեր կյա, հի՛նչ կտանես ըշխարքան» (ԼԿ, էջ 50), «Այ նախշուն հարս, խոխա *վխտանց* եմ ճանաչում...» (ԼԿ, էջ 90). բնագրերում հանդիպում ենք նաև *ն*-ի հավելմամբ, ինչը բնորոշ չէ Գորիս-Ղարաբաղ բարբառային զոտու խոսվածքներին, ուստի, կարծում ենք, հնչյունի հավելումը բացատրելի հանգիստության պահանջով՝ «Մեր ծորերնա մեր բախտը, Միշտ երթիլ տամ Ըշոտիս, Ըռավետվա լավ *նվախտը*» (Ծ, էջ 231), «Յայլա սարի *նվախտը* օրիշ պյան ա, այ ախպեր, Նրա տեղն հու կտա մըն արև, մըն հեր ու մեր» (Հ, էջ 20), *պիրիշակ*//*պըրիշակ* (պրս. *perišak*, *perisan*³²) «ավերակ»՝ «Հոքու տոնը *պիրիշակա*» (ԼԿ, էջ 98), *դ՞թ* (արաբ. *ā det*³³) «վաղեմի սովորություն»՝ «Խոսքն *ադաթը* նախշուն ա» (Ծ, էջ 231), *խուրդա* (պրս. *xurde*, թրք. *hurda*³⁴) «1. փոքր, մանր-մունր, 2. մանրուք»՝ «Մըն պենդ խտի փշաշեն, հենեմ *խուրդուն* կետն ինգած» (Ծ, էջ 201), *ախըր* (արաբ. *āxira*³⁵) «վերջապես»՝ «*Ախըր*

²⁸ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., 2010, էջ 751:

²⁹ Առձեռն բառարան հայկազեան լեզուի, էջ 318:

³⁰ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.2, էջ 66:

³¹ Մ. Յու. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 682:

³² Տե՛ս Մ. Մարգարյան, նշվ. աշխ., 1975, էջ 464; Մ. Յու. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 31:

³³ Մ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 5:

³⁴ Մ. Յու. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 287:

³⁵ Մ. Միքայելյան, Վասպուրականի տարածքի խոսվածքների՝ արաբերեն փոխառյալ բառերի ձևաիմաստային քննություն // Գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2016, էջ 236:

սերտս թոթոռումա թն առնում» (ԼԿ, էջ 172), *աշըղ* (արաբ. *āšiq* «սիրոդ, սիրահար»)՝³⁶ «արևելյան բանաստեղծ-երգիչ»՝ «*Աշըղ* ածի ուրախամըն թարաքյամա» (ԳՄ, էջ 134): Ղարաբաղի բարբառում հանդիպում ենք փոխառյալ *ղաշար*(թրք. *qəñşər*)³⁷ «բաց, երևացող, տեսանելի տեղ», Գորիսում՝ *ղա(ն)շար* տարբերակներով, որոնցից Գուսանը կիրառել է ներգոյականի հոլովաձևով՝ *ղընշարումը*՝ «Եկ նստենք Ղուրդա թիփի *ղընշարումը*» (ԳՄ, էջ 134) և այլն: Փոխառյալ բաղադրիչներից և հայերեն *-ում* վերջավորությունից է կազմված *գյուլ-բահար* («գարնանային վարդ»): Կարծում ենք՝ այստեղ նշանակում է «վարդաստան»)+*ում* բառաձևը՝ «Մըն կխտարաա կյուրունքվա *գյուլբահարումը*» (ԳՄ, էջ 134): Խնդրո առարկա տաղերում կան որոշ փոխառյալ բառեր, որոնք ենթարկվել են տվյալ լեզվական միավորի հնչյունական և հնչյունափոխական օրենքներին են, որոնք բառաձևան ժամանակ վերջընթեր շեշտի գործառությամբ շեշտանախորդ ձայնավորի փոփոխություն են կրում, ինչպես՝ *արան* (պրսկ. *aran*)³⁸ «հարթավայր, տաք տեղ» բառում *ա*-ն վերածվել է *ը*-ի՝ «Սերը սեր ա՝ սարումը, թե *ըրա՛նումը*» (ԳՄ, էջ 134): Հայտնի է, որ հայերենում հիմնականում *ռ*-ով և *ր*-ով սկսվող բառեր չեն եղել. դրանք սովորաբար ունեցել են նախահար ձայնավոր: Իբրև այդպիսիք՝ Գուսանի տաղերում հանդիպում են փոխառյալ (*ը*)*ռ՝մծգ* (թրք. *remiz*) «դեմքի արտահայտություն»³⁹ և *ըռըշնէլ* «շիկնել, շառագունել» բառերը՝ «Հու յեշում ա, *ռամուզը* փոխվում ա», «Շատ եմ սիրում *ըռընում* ա, պեծին տամ» (ՄԿ, էջ 114): Վերջինիս արմատը իրանական փոխառություն համարվող *ռռշն* (պիլ. *rōšn*)⁴⁰ «լուսավոր» բառն է, որը, Հրաչ Մարտիրոսյանի բանավոր հաղորդմամբ, հայերենում արտացոլվել է նաև *Առուշան* անձանվան մեջ: Նկատելի է, որ *ըռըշնէլ* բայում *ռ*-ն, բարբառային շեշտի տակ վերածվել է *ը*-ի: Ի լրումն սրան՝ նշենք, որ այս բայը Սյունիք-Արցախ բարբառային գոտում կիրարկվում է նաև հավելյալ *հ*-ով՝ *հըռըշնէլ*:

Հայտնի է, որ «... չափածո խոսքում բարբառային բառերի ու ձևերի գործածությունը կարող է պայմանավորվել այնպիսի հան-

³⁶Նույն տեղում:

³⁷Մ. Յու. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 451:

³⁸Տե՛ս Մ. Յու. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 73:

³⁹Տե՛ս նույն տեղում, էջ 166

⁴⁰Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 146, Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 658:

գամանքներով, ինչպիսիք են հանգավորումը, բարեհնչունությունը և տաղաչափական բնույթի այլ խնդիրներ»⁴¹:

Տաղերգուն հանգիտության պահանջով բարբառային բառին բարեհնչություն է հաղորդել, օր.՝ *ցալքուն*-ի փոխարեն գործածել է *ցոլքուն*՝ «Էն ճիրերի *ցոլքունը* իմ հավասս պյուրումա» (ԼԿ, էջ 89): Տաղերում առկա է բարբառային *լծսը/Յնգ*՝ բառի տարբեր կիրառություններ. մի դեպքում հեղինակը հարազատ է մնացել մայրենի խոսվածքին՝ «Թխպի տական *լուսինգյան* էն մեր սերավ տյուս կիկար» (ԼԿ, էջ 88), իսկ երբեմն էլ համադրել է բարբառային և գրական տարբերը՝ գրականացնելու միտմամբ, այսպես՝ «*Տյու լուսունգից* շող առար, Թյա էն նախշուն ըրևան» (ԼԿ, էջ 105):

Սյունիք-Արցախ տարածաշրջանի խոսվածքներում գործառվող ու կենսունակ բառակազմական տարբեր կադապարներով ձևավորված իրողությունները ևս արտացոլված են քննվող տաղերի լեզվանյութում: Բառաձանցման բարբառային հետաքրքրական օրինակներն են *տ՝խծ* «դաղձ» արմատից և *-ծտ* վերջածանցից կազմված *տ՝խծծտ* «դաղձով առատ վայր» բառաձևը՝ «Մեր *տախծյուտի* մեծ գյունում, քերծից քերծ թռչող ջեյրան» (ԼԿ, էջ 105), կամ՝ *քեղ + ուտ* կառույցը՝ «Էն բոյ քաշող *քեղուտում*, Ախպյուրներ են քլթթլթում» (ԼԿ, էջ 88): Սակավ չեն նաև բառաբարդմամբ առաջացած բարբառային բառաձևերը, որոնցից դիտարկել ենք հետևյալները, որոնցից է Գուսանի կիրառած *դունուղա՛տոն* «հյուրընկալ» բառաձևը՝ «*Ղունուղատոն* օջախ ա» (Ծ, էջ 231): Նշենք, որ, ձայնավորների շրթնային ներդաշնակության օրենքի համաձայն, նախ՝ *դոնաղ* տաճկ. *konuk*⁴²) բառումբառաբարդման ժամանակ *ա*-ն դարձել է *օ*, ապա՝ շեշտանախորդ ձայնավորները ենթարկվել են լրիվ առնմանության՝ վերածվելով *ու*-ի: Կարծում ենք, որ հեղինակային նորակազմություն է *ծծթ՞շաղ* բարդությունը՝ «Ամռան օր էր, թխպոտեց, մըն *քյութաշաղ* [*ծծթ՞շաղ*] մի⁴³կալավ [*նիլ՞լ՞վ*]» (ԼԿ, էջ 88): Այն, բաղադրված լինելով *ծծթ*(թուրք. *küt* «բութ» 1. Կոշտ, կոպիտ, հաստաբեստ, 2. Շատ վատ (հացի մասին)⁴⁴) և *շաղ* «բարակ անձրև»⁴⁵ բառերից, արտահայտում է «շատ վատ մանրահատիկ անձրև»

⁴¹ *Ս. Մելքոնյան*, նշվ. աշխ., էջ 128:

⁴² *Ս. Մալխասեանց*, նշվ. աշխ., հ.3, 1944, էջ 187:

⁴³ Բնագրային վրիպակ է. *մ*-ի փոխարեն պետք էլինին:

⁴⁴ *Ս. Մարգարյան*, նշվ. աշխ., էջ 542:

⁴⁵ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.4, էջ 192:

իմաստը: Գուսան Աշոտի տաղերի բարբառային լեզվանյութի տար-
 րերից են բաղիյուսական բարդությունները՝ *հէր ու մէր*՝ «Նրա տեղը
 հու կտա՝ մըն արև, մըն *հէրու մէր*» (ԼԿ, էջ 35), կամ՝ *կէր ու մէր*
 բաղիյուսականի հնչյունափոխ *կըռըմէր* տարբերակը՝ «Աստծո կա-
 րոտ չմնամ, Կեծաններին *կըռըմէր*» (Հ, էջ 20): Ղարաբաղի և Գորիսի
 խոսվածքներում գործուն են բաղիյուսական՝ *թօռ ու թաց* և դրա՝
 հնչյունափոխ *թուռլթաց* ձևերը, սակայն հետազոտության առարկա
 բանատողում՝ «Քամուն, թխպին, *թոռ-թացին*, չալղունին էլ ախղ
 տվիր» (ԼԿ, էջ 113) կիրառված է հարադրությամբ՝ *թոռ-թաց* «անձ-
 րևային», որն իմաստային խտացում և սաստկություն ունի: Բառա-
 կազմական տարբեր իրողություններից խնդրո առարկա լեզվա-
 նյութում զգալի կշիռ ունեն կրկնավոր համադրական և հարադրա-
 կան բարդությունները: Բարբառային բնույթ ունեն արմատական
 կրկնությամբ համադրական բարդություններ, որոնք ենթարկվել են
 տվյալ բարբառի հնչյունական-հնչյունափոխական օրենքներին՝
 «*Լղղղում* ա շորերս, էս հի՞նչ թոռ ա, տյուռնը պյաց» (Ծ, էջ 201),
 «Սասիտ մատաղ կանչի կյամ, քոլա *ծոցդ պլպլան*» (Ծ, էջ 201),
 «Ասեմ մըն տյու, մըն ծովակ, *Պլպլացող* գոհար ա» (ԼԿ, էջ 105),
 «*Փոփռացող* շորեր կեցած նարնջի» (ԼԿ, էջ 172), «*Տուրտուղում* եմ,
սրսրթում, աշկս տիռնիտ պռավեց» (Ծ, էջ 201), «Էդ հի՞նչ դարդ ա,
 հուշս քինաց, կլխիս միչան *խթխոթեց*» (Պելակին), «Ա՛յ պելակին,
 մըն ճար ըրա, ջանս էրեց *փոթոթեց*» (Պելակին), «Սերտս ծակեց,
 պոռշս ճաքեց, *խշփշորեց* ջիգյարս» (Պելակին) և այլն, ընդ որում՝
 վերջիններս նպաստում են իմաստի սաստկացմանը: Հայտնի է, որ
 ընդհանրապես հնչյունական և արմատական կրկնությունները մե-
 ղեդայնություն են հաղորդում խոսքին: Նույն և նկատելի է բար-
 բառային բնույթի հարադրություններում, օր.՝ «Յլանք իմ տամ մաշ-
 վում, ա՛խ, *խանչ-խանչ* եմ կյամ(արմատը կիրառվել է գրաբարում
խանչեմ՝ «կանչել, բղավել» բայում. Սյունիք-Արցախի խոսվածք-
 ներում՝ *խանչ-խանչ*՝ // *խընչխանչել* «1.հեծկլտալ, 2.տանջ(վ)ել»»,
 մաշվում ա՛խ» (Ծ, էջ 201), «Էլ քոն չոնեմ, դադար չոնեմ, *տըպկ-*
տապակ եմ միշտ կամ» (Պելակին), «Կմաշվի ու կհալվի *ծյուծյուն-*
ծյուծյուն կտյառնա» (ԼԿ, էջ 105) «*ջնջխվեղ*», «Էն մեծ կետն էլ
 կտաղեց, *օրկուն-օրկուն* էր անում» (ԼԿ, էջ 113) «*հեղեղուն, տեղա-*
տարափ», նաև փոխառյալ արմատից բաղադրված՝ «Սասըս լսեց,
յավաշ-յավաշ տես կյամ ա» (ԳՄ, էջ 135) «*կամաց-կամաց*», «Հու վեր

յարից հեռանա՝ *դիլիմ-դիլիմ* կոչառնա» (ԼԿ, էջ 105) (թրք.dilim)⁴⁶ «մաս-մաս, շերտ-շերտ»: Վերջինս բնագրում նշված է *դիդիմ-դիդիմ*, որը, թվում է, վրիպակ է, սակայն, կարծում ենք, որ հանգիստության պահանջով Գուսան Աշոտը կիրառության մեջ է դրել Գորիսի խոսվածքներում տարեց բարբառախոսների մոտ հանդիպող, ոչ տարածված *դիդիմ* տարբերակը, որը ձևավորվել է *դ*-ի առնմանությամբ՝ փոխազդեցական հնչյունափոխությամբ *լ*-ն դարձել է *դ*: Նմանատիպ կառույց է Գորիսի խոսվածքներում հազվադեպ կիրարկվող *ջիջիմ-ջիջիմ տոն՝լ*-ը «ջախջախվել»: Եթե փոխառյալ արմատով նշված կազմություններն ունեն գրական համապատասխան և համարժեք եզրեր, ապա բարբառային տարբերակները իմաստային և գործառական առումով հնարավոր չէ փոխարինել գրական հարադրություններով, ընդ որում՝ բանաստղը կգրկվի աշուղական երգարվեստին բնորոշ բնականությունից ու ժողովրդայնությունից: Նման իմաստային-գործառական առանձնահատկություն են նաև փոխառյալ արմատներից հարադրված կրկնավոր բարդությունները, օր.՝ *ըռանգ-ըռանգ((ը)ռոնգ՝*՝ պրս. rang, թրք. renk, նաև՝ *ռոնգ՝-ռոնգ՝*՝ պրս.rāngarāng, թրք. rengāreng)⁴⁷ «երփներանգ, խայտաբղետ»՝ «խաղեր-խաղեր *ըռանգ-ռանգ* անսեր մարթին սեր կպիրեն» (ԼԿ, էջ 90), *ջուռա-ջուռա* «թրք. cür»⁴⁸ «տեսակ-տեսակ»՝ «Էս խաղերը *ջուռա-ջուռա* ծաղիկների սուրփ ծոցանա» (ԼԿ, էջ 90), *թօզ-թօզ՝* (պրս.taza)⁴⁹ «նոր-նոր»՝ «Շոխկոտ սրտիս արեվ ա, *թյազա-թյազա* խաղեր ա» (Հ, էջ 69): Իբրև այդպիսին՝ անվանական կրկնավոր բարդություններից հետաքրքրական է *չան-չան*-ը «կույտ-կույտ», որը, կարծում ենք, հեղինակային նորաբանություն է՝ երևույթի նմանությամբ կազմված, քանի որ *չան* բառը «լայն բերանով տակառ»⁵⁰ իմաստով հանդիպում ենք Սյունիք-Արցախ բարբառային գոտում՝ «Աշուղ Աշոտ նրա ճամփին թյա վեր *չան-չան* թոխպ չպատի» (ԼԿ, էջ 99): Բարբառային ծագմամբ հեղինակային մեկ այլ նորակազմություն է «*լօկ-սօլօկ տոն՝լ*» (տառադարձությունը մերն է՝ Ս.Ս.)՝ «Ըրազիս վեր փախչում ես, *ալակ-սալակ* եմ տյառնում» (ԼԿ, էջ 99): *Սալակ* բառը Գորիսի և Ղարաբաղի խոսվածքներում նշա-

⁴⁶ Ա. Յու.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 126:

⁴⁷ Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 167:

⁴⁸ Նույն տեղում, էջ 648:

⁴⁹ Նույն տեղում, էջ 182:

⁵⁰ Հ. Աճառյան, Հայերեն գաղափարական բառարան, էջ 875:

նակում է «կեղևից գործված տափակ աման»։ կարծում ենք, այս պարագայում համաբանությամբ և փոխաբերաբար կազմված հարադրությունը ունի «նիհարել, մաշվել» իմաստը։ Ինչպես և փոխառյալ *ռոնգ*⁵¹ բառի համաբանությամբ կազմվել է *խանգ-ռանգ* հարադրությունը՝ «Խառնվեց *խանգ-ռանգին*, խոր ծյորի զանգ գրանգին» (ԼԿ, էջ 173)։ Բանաստեղծից նկատելի է, որ հեղինակային նորակազմության ստեղծումը պայմանավորված է հանգիտության պահանջով։ Մեկ այլ տաղում («Նանի-նանի» (ԼԿ, էջ 172-173)) իմաստային նոր դրսևորում է ստացել *թաղբանդ* միջնորդավորված փոխառությունը, որը Ղարաբաղի և Գորիսի խոսվածքներում ունի *թաղբոնդ* (պրս. tagbend)⁵² տարբերակը՝ «կամարաձև կառուցված՝ ծածկված շինություն» իմաստով։ Նույնը նշանակում է նաև *թաղկապ*-ը։ Նկատելի է, որ երկու բառաձևերի հիմքում ընկած է *թաղ* (թրք. tak «կամար») արմատը։ Տորք Դալայանի բանավոր հաղորդմամբ՝ *թաղբանդ* բառաձևը թուրքերենում օրինաչափորեն դարձել է *թալբանդ*, որից էլ, հավանական է, յ-ի սղման տարբերակն է նաև անցել վերոնշյալ խոսվածքներին։ Գուսան Աշոտի հիշյալ տաղում հանդիպում ենք հենց *թալբանդ* ձևը՝ «Մերը սերավ լավ կապրի, մըն նոր *թալբանդ* կկապի» (ԼԿ, էջ 173)։ Բովանդակության պլանում *թալբանդ կապել* հարադրության մեջ, փոխաբերաբար կիրառվելով, համապատասխանում է «պայմանավորվածություն, պայման» իմաստին։ Քննվող տաղերում հետաքրքրական է նաև *ջան* (պրս. gān (հոգի) թրք. can)⁵³ փոխառյալ բառի իմաստային տարբեր կիրառությունները⁵³։ «մարմին»՝ «Ա՛յ պելակին, մըն ճար ըրա, ջանս էրեց փոթոթեց» (Պելակին), «կյանք»՝ «*Ջանիդ* մատաղ, ես աշըղ եմ, ինձ սիրի» (ԳՍ, էջ 134), «իբրև փաղաքշական բառ»՝ «*Ջան-ջիգյարով* դարիբներին տոն կկանչի» (ԼԿ, էջ 90), Գորիսի և Ղարաբաղի խոսվածքներում նաև՝ «անձնավորություն»՝ «Ըշխարքավ մին չավ եմ ըրալ, լավ *ջան* ա» (ՍԿ, էջ 100), «Ա՛յ պելակին, գուդում ես թա աման մըն տեղ լավ *ջան* կա՞» (Պելակին)։

Գուսան Աշոտը չի խուսափել գործածել է նաև ժխտման արտահայտման խոսակցական ձևեր, որոնք նշված խոսվածքներում արտահայտվել են բային հետադաս ժխտական բառ-մասնիկներով,

⁵¹Տե՛ս Ս. Յու. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 186։

⁵²Նույն տեղում, էջ 643։

⁵³Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 5, Ե., 2008, էջ 155։

բացառությամբ ըղձականի և անցյալ կատարյալի, երբ չ-ն նախադաս է, այսպես՝ «Վեր տեսնում չեմ, սերտս տրկ-տիեր ա անում» (ՄԿ, էջ 114), «Մերս ծով ա, էս ձորում տղվարիլ չի» (ԼԿ, էջ 49), «Իշկի կյամ չի, էս խե՞ս հենց ինձ խանչում ա» (ԳՍ, էջ 134), բայց՝ «Յար, չքինաս էս թաղան, սիրտս քար չի՝ տիմանամ» (ԼԿ, էջ 105), «Խոսուցրի, միալ չրավ, մոզած էր, հինչան ա՞, Տեսնաս հուվա՞ ցորտ խոսք ասալ, ունքումեչը պաց չքրավ» (Պելակին) և այլն։ Ոչ ժխտականով գործածված են ինչպես անհնչյունափոխ, այնպես և բարբառային տարբերակով օրինակներ՝ «Չիմ ճարալ են, մընը կա ոչ դառումը» (ԳՍ, էջ 134), «Բա վեր կյա ոչ, թայթուշի մոտ հո՞նց կանեմ» (ԳՍ, էջ 134), «Հռանանք վրեչ մըրեր նշխարար էս ծորան» (ԼԿ, էջ 50) և այլն։ Կիրառել է Գորիսի խոսվածքներին հատուկ արգելական եղանակի երկու կազմություն. երբ մի արգելականը հաջորդում է անորոշ դերբային, օր.՝ «Ամաչիլ մի մեր էս ազատ դարումը» (ԳՍ, էջ 134), մյուս դեպքում՝ «եզակի թվում անորոշի լ-ն դրափոխությամբ անցել է արգելականին, իսկ վերջինիս մ-ն՝ նրա տեղը»⁵⁴, օր.՝ «Խոռվումիլ, խուռուխեթը լավ պան չի» (Ծ, էջ 202) և այլն։

Ամփոփելով նշենք, որ հոդվածում քննված բարբառային հասկացությունները, նպաստելով գուսանական խոսքի ոճավորմանը, «...տաղաչափական բնույթի խնդիրների լուծմանը...»⁵⁵, ստեղծում են միջավայրի ու ժամանակաշրջանի ընդհանրական կոլորիտ, ինչպես և ունեն քնարական կերպարներին անհատականացնելու նպատակային կիրառումներ։ Տաղերի՝ բարբառային այդօրինակ իրողությունները, լինելով կենդանի բարբառային միավորների անփոխարինելի և բնորոշ տարրեր, ոչ միայն խոսքին բնականություն և պատկերավորություն են տալիս, այլև համարվելով լեզվական փոխներթափանցումների արգասիք՝ բացահայտում են տվյալ ժողովրդի լեզվամտածողությունն ընդհանրապես։

Համառոտագրություններ

ԳՍ-Գուսան Աշոտ, Գուսանի սերը, Ե., 1955, 127 էջ։ Հ-Աշուղ Աշոտ, Հավերժություն, Ե., 2010, 192 էջ։ Ծ-Գուսան Աշոտ, Ծովասողիկս, Ե., 1989, 264 էջ։ ԼԿ- Գուսան Աշոտ, Լեռները կանչում են, Ե., 1988, 184 էջ։ ՄԿ-Գուսան Աշոտ, Միրո կրակներ, Ե., 1971, 131 էջ։

⁵⁴ Ա. Մարգարյան, նշվ. աշխ., 1975, էջ 213։

⁵⁵ Ս. Մելքոնյան, նշվ. աշխ., էջ 131։

С. С. Манучарян- Исследования диалектного материала в стихах Гусана Ашота. В статье рассматривали диалектную сущность языкового материала стихи Гусана Ашота. Достойно внимания языковые факты, которые характерны лексике диалектного единицы Сюник-Арцаха. В основном такие реали образовали диалектное лексическое наложение данного говора являясь исконным и заимствованным словам. Они интересны как на происхождение, так и для использования смыслового разного употребления.

S. S. Manucharyan -The study of the dialectical material of the verses by GussanAshot. The article refers to the linguistic material of some verses of a dialectical nature by GussanAshot. The linguistic facts being discussed are typical of the glossaries of the dialectical units of Syunik and Artsakh. Generally, such facts make up the dialectical layer of the given manner of speech though being native Armenian and borrowed word units. They are interesting not only from the point of their origin but from the various applications of their meaning as well.

**ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՇԱԳՐԱՎ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ**

Հայերենագիտության կարևորագույն ճյուղերից մեկը՝ բարբառագիտությունը, մշտապես եղել է ինչպես հայ և օտարազգի բազմաթիվ ուսումնասիրողների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ուշադրության ներքո: Հայ լեզվաբանության երախտավորներ Հրաչյա Աճառյանի, Արարատ Ղարիբյանի, Էդուարդ Աղայանի, Գևորգ Ջահուկյանի և այլոց գիտական մեծ վաստակի զգալի մասն են կազմում բարբառագիտական աշխատանքները:

Այսօր էլ շարունակում են արդիական մնալ հայերենի առանձին բարբառների համաժամանակյա և տարաժամանակյա քննության, մերձավոր խոսվածքների, բարբառների և բարբառային խմբերի համեմատական և պատմական ուսումնասիրության, բառապաշարի շերտերի, իմաստային խմբերի տարածագործառական բնութագրման, բարբառային հատկանիշների և զուգաբանությունների տարածման, ինչպես նաև հարակից մյուս հարցերը:

Լեզվի ինստիտուտն իր գոյության յոթուկես տասնամյակներում հսկայածավալ աշխատանք է կատարել հայերենի բարբառների ուսումնասիրության բնագավառում, սակայն դեռևս չկա այն համապարփակ աշխատանքը, որն ընգրկուն ներկայացնի մեր երկրի տարածքի արդի ողջ բարբառային համապատկերը: Հենց այս հանգամանքը հաշվի առնելով՝ ինստիտուտի բարբառագիտության բաժինը Հայաստանի բարբառային միավորների և հատկանիշների տարածման արդի պատկերի ձևավորման, բարբառային քարտեզների կազմման նպատակով իրականացնում է «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» համալիր ծրագիրը:

Հետազոտությունը, որի առաջին փուլը կատարվել է 2013-2015թթ.՝ ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանի և բարբառագիտության բաժնի աշխատակիցներ Հ. Խաչատրյանի, Ժ. Միքայելյանի, Գ. Մկրտչյանի կողմից, իրականացվել է Գեղարքունիքի մարզում՝ Հայաստանի Հանրա-

պետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Կատարված հավաքչական մանրակրկիտ աշխատանքների, համապատասխան գիտական գրականության և ինստիտուտում առկա՝ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով գրանցված նյութերի հիման վրա ձևավորվել են Գեղարքունիքի մարզի բնակավայրերի բարբառային բնութագրերը, դրանք համալրվել բարբառային և բանահյուսական հարուստ նյութով, ժողովրդագրական տեղեկություններով ու փաստական տվյալներով, որոնք էլ ձևավորել են տարածքի բարբառային միավորների և դրանց հատկանիշների տարածման համընդգրկուն պատկերը:

Բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Կատվայանի աշխատասիրությամբ է ամբողջացել «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» խորագրով ուսումնասիրությունների շարքի անդրանիկ՝ «Գեղարքունիքի մարզ» ժողովածուն, որը ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակել է «Ասողիկ» հրատարակչությունը: Պատասխանատու խմբագիրն է բանասիրական գիտությունների թեկնածու Նազիկ Հովհաննիսյանը:

Աշխատությունը, որ արձանագրում է բարբառային հայերենի արդի վիճակը Գեղարքունիքի մարզի շուրջ վեց տասնյակ բնակավայրերում, բաղկացած է երեք մասերից և յոթ գլուխներից:

Առաջին մասում ընդհանուր տեղեկություններով ներկայացվում են տարածքի բնակավայրերում այսօր գործառող Մշո, Բայազետի և Դիադինի բարբառները, Գանձակի միջբարբառը, Մակուի և Արծափի խոսվածքները:

Երկրորդ մասում այբբենական կարգով ներկայացվում են մարզի բնակավայրերը՝ իրենց բարբառային խոսքի գործառական հատկանիշներով և զարգացման միտումներով, բարբառային բնութագրերով, ինչպես նաև խոսվածքային առանձնահատկություններով: Բարբառային հատկանիշները համեմատական կարգով ներկայացվում են նաև Գևորգ Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման աղյուսակներով:

Երրորդ մասը ընդգրկում է գիտական տառադարձությամբ գրանցված բարբառային կենդանի խոսքի բազմաթիվ տարաբնույթ նմուշներ:

Աշխատության վերջում գետեղված է նաև մարզի տարածքի խոսվածքների բարբառային բառերի ցանկը, որտեղ յուրաքանչյուր բառային

միավոր նաև տարբերակված է ըստ բնակավայրերի:

Բարբառագիտական աշխատանքները լույս են սփռում ոչ միայն հայերենագիտության, ընդհանուր և համեմատական լեզվաբանության, այլև հայոց պատմության, ազգագրության, բանահյուսության, ձեռագրագիտության և հարակից այլ բնագավառների խնդիրներին: Նման առաքելություն ունի նաև հայ բարբառագիտական առկա գրականությունը ևս մեկ ուշագրավ միավորով համալրող՝ արժեքավոր այս աշխատանքը, որ ծնվել է տարիների աշխատանքով և նվիրումով:

Վիկտոր Կատվայանի «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. գիրք 1. Գեղարքունիքի մարզ» ուսումնասիրությունը նախատեսված է լեզվաբանների, բարբառագետների, ազգագրագետների, ուսանողների, ինչպես նաև ընդհանրապես հայագիտությամբ հետաքրքրվողների համար: Այն կարող է կարևոր նյութ մատուցել հայագիտական հետազոտություններին, նպաստել հայ բարբառագիտության, հայոց լեզվի պատմության հարցերի պարզաբանմանը, օգտակար կլինի նաև ժողովրդագրական, հանրագիտարանային-տեղեկատու աշխատանքներ կատարող մասնագետներին:

Հուսանք, որ աննախադեպ այս աշխատանքը նախադեպ կդառնա ոչ միայն Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի, Արցախի Հանրապետության և Զավախքի բարբառային համապատկերների ուսումնասիրության և հրատարակման գործում, այլև կունենա իր տրամաբանական շարունակությունը՝ հնարավորինս ընդգրկելով նաև մեր պատմական հայրենիքի կորուսյալ հատվածների բարբառները:

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ս. Ա. Միքայելյան, Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունները, Ե., «Աստղիկ» հրատ., 2018, 196 էջ: Հայերենի բարբառային միավորների համակողմանի, այդ թվում նաև նրանցում օտար ազդեցությունների վերաբերյալ հետազոտությունները ոչ միայն հայ լեզվաբանության, այլև ընդհանուր հայագիտության արդիական և կարևոր խնդիրներից են: Ս.Միքայելյանի «Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունները» գիրքը նվիրված է արաբերենի ազդեցության դրսևորումներին հայերենի բարբառների արևմտյան խմբակցության Անտիոքի կամ ծայրհարավարևմտյան բարբառախմբում:

Հայերենագիտության արդի փուլում, երբ բարբառային առանձին միավորների հավաքումը, նկարագրությունն ու ուսումնասիրումը արևմտյան տարածքներում, ցավոք, այլևս գրեթե անհնար է, բարբառագիտական հետազոտությունները հիմնականում հիմնվում են գրավոր վկայված համապատասխան նյութերի կամ էլ մենագրական առանձին հետազոտությունների տվյալների վրա: Բայց, բարեբախտաբար, դեռևս գոյություն ունեն տարածքային որոշ միավորներ, որոնք գոյատևում են իրենց պատմական տարածքներում կամ էլ այդ տարածքներին շատ մերձավոր վայրերում: Հայերենի այդպիսի միավորներից են Անտիոքի և նրա մերձակա տարածքների՝ Սվեդիայի, Քեսաբի, Արամոյի, Բեյլանի խոսվածքները, որոնց հետազոտողները դեռևս որոշ չափով հնարավորություն ունեն իրենց ուսումնասիրություններում համապատասխան լեզվական իրողությունների դրսևորումները ստուգել և ճշգրտել կենդանի բարբառակիրների միջոցով: Ներկայացված գրքի հեղինակը ևս ունեցել և հաջողությամբ օգտագործել է այդ հնարավորությունը:

Հարկ է նշել, որ Ս.Միքայելյանի «Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունները» գիրքը գիտական լուրջ հետազոտություն է, որը կարևոր ձեռքբերում է ո՛չ միայն հայերենագիտության, հայ լեզվաբանության համար: Հայտնի է, որ հայ արևելագիտությունը սկզբնավորվել է հարակից լեզուների և մշակույթների ուսումնասիրության միջոցով հայերենին առնչվող փաստերը և երևույթները հետազոտելու նպատակադրությունից: Այդ առումով այս աշխատանքը էական ներդրում կարելի է համարել նաև խնդրո առարկա հարցերի լուսաբանման, ինչպես նաև «հայ արևելագիտություն» մեթոդաբանական տիրույթում: Բացի այդ, աշխատանքի կատարման ընթացքում ուսումնասիրվող տարածաշրջանում տեղի ունեցող ողբերգական իրադարձություններն իրենց հերթին լրացուցիչ արդիականություն են հաղորդել հետազոտությանը. հայ բնակչության զանգվածային արտագաղթը լրջորեն վտանգել է Անտիոքի բարբառախմբի խոսվածքների կենդանի գոյությունը, և այդ առումով ուսումնասիրությունը ձեռք է բերում նաև լեզվաբանական եզակի նյութի պահպանման նշանակություն:

Գիրքն ունի կոռ կառուցվածք, բաղկացած է առաջաբանից, երկու գլուխներից, եզրակացություններից, համառոտագրություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Առաջաբանում շարադրված են առաջադրվող ընդհանուր հարցադրումները, անդրադարձ է

կատարված հայ-սիրիական պատմական փոխհարաբերություններին և հայ-արաբական լեզվական առնչություններին:

Գրքի առաջին գլուխը («Արաբերենի հնչյունական համակարգի արտացոլումը Անտիոքի հայերեն խոսվածքներում»), որն ունի երկու ենթաբաժիններ, ամբողջապես նվիրված է երկու լեզուների հնչյունական համակարգերի նկարագրությանը, քննվող տարածքների խոսվածքային միավորներում փոխատու լեզվի հնչյունական հատկանիշների արտացոլումներին, շեշտափոխական, դիրքային և փոխադեցական հնչյունափոխություններին: Կատարված են համապատասխան դասակարգումներ:

Նկատելիորեն հաջողված է նաև աշխատանքի երկրորդ գլուխը («Անտիոքի հայերեն խոսվածքներում արաբերենից կատարված փոխառությունների ձևաիմաստային քննություն»)՝ բաղկացած երեք ենթաբաժիններից, որոնցում հանգամանալից ներկայացված են արաբերենի և ուսումնասիրվող բարբառախմբի տիպաբանական բնութագրերը, վերհանված են երկու լեզվական համակարգերի (արաբերենի և հայերեն բարբառի) քերականական, բառակազմական սկզբունքային տարբերությունները:

Առանձնահատուկ խնամքով է կազմված նաև գրքի հավելվածը. այն արաբերենից փոխառյալ բառերի (ավելի քան չորս հարյուր բառային միավոր) իմաստաթեմատիկ բառարան է, որում բարբառային փոխառյալ բառերը ներկայացվում են իրենց նշանակությամբ: Միաժամանակ, նշված է, թե բարբառախմբի որ խոսվածքում (խոսվածքներում) են դրանք գործածվում, տրված են այդ բառերի արաբերեն համարժեքներն ու փոխատու լեզվում դրանք իմաստները:

Գրքի արժանիքներից է նաև այն, որ ներկայացված է հարուստ տեսական նյութ՝ քաղված ոչ միայն հայ լեզվաբանների բարբառային աշխատանքներից, բարբառային ձեռագիր նյութերի ընձեռած փաստերից, հայ արևելագետների ու պատմաբանների, այլ նաև՝ հանրալեզվաբանության առաջատար հետազոտողների՝ Ու.Վայնրայխի, Ռ. Բելլի, Վ.Շազալի և այլոց աշխատություններից:

Ս. Միքայելյանի «Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունները» գիրքը արժեքավոր է առաջադրված թեմայի արդիականությամբ, հարցադրումներով, դրանք քննարկելու և փաստարկված հիմնավորելու գիտական խորությամբ: Վստահաբար կարելի է ասել, որ հայագիտության և հայ արևելագիտության անհրաժեշտ մաս կազմող այս աշխատանքն ունի տեսական և գործնական կարևորություն:

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Բ. ԿԱՐԱԲԵԿՅԱՆ

**ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. КНИЖНОЕ ОБОЗРЕНИЕ.
BOOK REVIEWS.**

Սոֆյա Աճառյան, Իմ հուշերը Աճառյանի մասին, Ե., §Աստղիկ՝ հրատ., 2018, 284 էջ: Գիտության մյուս բնագավառների մեծերի համեմատությամբ լեզվաբանների մասին շատ քիչ են հուշեր գրվում: Նրանց մասին հիմնականում տեղեկանում ենք ծննդյան առիթով, երբեմն այս կամ այն միջոցառման բերումով, անհրաժեշտության դեպքում տարբեր գրքերում եղածով: Հայ լեզվաբանությունը ևս ունի իր անվանի դեմքերը, որոնք իրենց անուրանալի ավանդն ունեն հայերենի ուսումնասիրման մեջ: Նրանք երախտավորներ են, հիշատակի և անմոռացության արժանի:

Հ. Աճառյանի մասին նույնիսկ իր ժամանակին են լեզենդներ պատմելիս եղել, և դրա հիմքը նրա անընդմեջ և անսպառ, աներևակայելի աշխատասիրությունն է եղել, նվիրումն իր գործին, վերջինիս մեջ՝ անընդգրկելի բանիմացությունը: Նա հայերենի համար արեց այն, ինչ ոչ մեկին չէր հաջողվել նախկինում, հետագայի համար եղավ խրախույս՝ ունենալու հաջողություններ այդ ասպարեզում:

Այս դեպքում բարեբախտություն է, հայ լեզվաբանների մեծերից (պետք է ասել) մեծի մասին հուշերի տեղեկանալը, իսկ հեղինակն է նրա այրին՝ Սոֆյա Աճառյանը: Երախտապահ տիկնոջ՝ Սոֆիկի քրոջ դուստր Ամալյա Խաչատրյանը (Լեզվի ինստիտուտի երկարամյա աշխատակից Ամալյա Արտյոմովնան), Վ. Յա. Բրյուսովի անվան ինստիտուտի շրջանավարտ, ԳԱԱ լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի վարիչ, Բ. Գ. դ., տարիներ առաջ արտերկիր գիտական գործուղման մեկնած, վերջերս ձեռնամուխ եղավ հրատարակելու իր մորաքրոջից իրեն մնացած հիշյալ հուշերը՝ իր և լեզվի ինստիտուտի միացյալ հոգածությամբ: Շնորհակալ ձեռնարկում, որի համար ամենից առաջ հայերենի մասնագետներն են գոհունակություն հայտնելու:

Ասում են, ամեն մի սրտալի խոսք հեշտ է ասվում, հեշտ է պատմվում, հեշտ է գրվում: Սոֆյա Աճառյանի սույն հուշերի գիրքը, ահա այդպիսին է: Անվարան կարելի է ասել, թե ինչքան էլ շատ բան

գիտենք անվանի և մեծանուն Աճառյանի մասին, այս գրքում կա ավելին: Այդ գիրքը ձեռքը վերցնելիս ընթերցողը հազիվ թե քիչ հետո մի կողմ դնի, որովհետև նրանում ամեն ինչ հետաքրքիր է, գրված է հոգով, խնամքով. կան շտրիխներ, որոնք լրացնում են ընթերցողի պատկերացումները գիտության մասին, սովորական, պարզ ու շիտակ կենցաղի մասին, համալսարան գնալու և ուսանող կրթելու մասին: Իսկ իր տարեկից և կրտսեր գործընկերների, ասպիրանտների, Երևանի ժամանակի մտավորականների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ գրվածը, կարելի է ասել, ուսանելի է: Նեղություններ է կրել, սակայն իր գրելիքը երբեք մտքից չի հանել, ձեռք մեկնել է պետք, երբեք մի կողմ չի քաշվել:

Ընթերցելուց հետո մնում է, ասենք՝ հարգանք մեծ հայագետի այրու՝ Ս. Աճառյանի հիշատակին, այդքան նվիրված և այդքան լավ հուշեր թողած լինելու համար:

Հուշերի այս գիրքը շատ է մոտենում Հ. Աճառյանի «Կյանքիս հուշերից» գրքին, որ լույս տեսավ 1960-ական թթ., կարծես լրացնում են դրանք միմյանց, և ամբողջանում է անմահ անուն գիտնականի անբասիր կերպարը՝ սերունդների և հայերենով զբաղվելուն նվիրվողների համար:

Գիրքը լույս է տեսել լավ ձևավորումով, ուշագրավ նկարներով, որոնք Աճառյանի կենսագրականի պատկերային կողմն են ցույց տալիս, նրան մոտ եղած հայագետների, ուսուցիչների և սաների մասին են (կարելի էր նաև՝ Մեյեի և Հյուբշմանի՝ Աճառյանի պաշտելի ուսուցիչների նկարները):

Բ. Գ. Պ. Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ս. թ. հունիսի 7ին ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում իր աշխատանքներն սկսեց «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային ամենամյա գիտաժողովը: Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանը՝ ողջունելով մասնակիցներին և մաղթելով հետաքրքիր և արդյունավետ քննարկումներ:

Երկօրյա գիտաժողովին մասնակցում են շուրջ երեք տասնյակ գիտնականներ Հայաստանի, Արցախի, Ֆրանսիայի գիտակրթական տարբեր հաստատություններից: Զեկուցումներում արծարծվում էին հայոց լեզվի զարգացմանը, կառուցվածքին և գործառնություններին, բարբառագիտությանը, ընդհանուր և համեմատական լեզվաբանությանը, այլև կորպուսային լեզվաբանությանը վերաբերող հարցեր:

Գիտաժողովի աշխատանքները կշարունակվեն նաև հունիսի 8-ին:

Հունիսի 13ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում հյուրընկալվեցին Ռուսիայի գիտությունների ակադեմիայի Հարավարևելյան Եվրոպայի ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն Անդրեյ Թիմոթին և լեզվաբանության ինստիտուտի գիտքարտուղար Էմանուելա Թիմոթին:

Նրանք Հայաստան էին ժամանել՝ մասնակցելու ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կազմակերպած միջազգային գիտաժողովին՝ նվիրված ազգային բարերար, դիվանագետ և պետական գործիչ Մանուկ Բեյ Միրզայանին:

Հյուրերը հետաքրքրված էին մասնավորապես հայոց լեզվի պատմական զարգացման հիմնական ուղղություններով, հայ բարբառների ուսումնասիրության խնդիրներով ու հեռանկարներով: Լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանը խոսեց նաև Հայաստանի միջուկը հարաբերությունների, Ռուսիայի հայ համայնքի լեզվական ու մշակութային յուրահատկությունների և դրանց հետազոտման անհրաժեշտության մասին: Հյուրերն անդրադարձան իրենց երկրում հայ և ռուսին ժողովուրդների լեզվամշակութային առնչություններին:

Որոշեցին երկու երկրների ԳԱԱ ինստիտուտների միջև կնքել համագործակցության պայմանագիր, ձևավորել սերտ բարեկամական ու գործընկերային հարաբերություններ, ծավալել համատեղ հետազոտություններ, կազմակերպել գիտաժողովներ և փոխադարձ այցեր, իրականացնել տարաբնույթ ծրագրեր:

Հունիսի 15ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ սեմինար՝ «Արդի տիպաբանական լեզվաբանության հիմնախնդիրները» թեմայով: Սեմինարը վարում էր ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի ավագ գիտաշխատող Ս. Ավետյանը: Ըստ բանախոսի՝ ավանդական տիպաբանությունն ավելի շատ նկարագրական է, իսկ ժամանակակիցը՝ բացատրողական, այսպես կոչված, «ինչու»ի տիպաբանություն, որը փորձում է պարզել փաստերի այդպիսի վիճակի կամ պատմական զարգացումների պատճառները, շարժառիթները կամ այն գործոնները, որոնք հիմք են ծառայել նման երևույթների առաջացման համար: Նա գտնում է, որ «ավելի շատ շեշտը դրվում է տարաժամանակյա փոփոխությունների վրա, իսկ համաժամանակյա մոտեցումները դիտում ենք որպես տարաժամանակյա որոշակի փոփոխությունների զարգացման արդյունք»:

Նա նշեց, որ ժամանակակից տիպաբանական լեզվաբանությունը հիմնվում է ն՝ ճանաչողական լեզվաբանության, ն՝ բնական լեզվաբանության տվյալների վրա: Առաջինը ուսումնասիրում է լեզվի մտածական գործընթացները, որոնք տեղի են ունենում լեզվի յուրացման, լեզվագործածության և լեզվի պատմական փոփոխության ընթացքում, իսկ բնական լեզվաբանությունն ուսումնասիրում է լեզվի բնականության ձևաչափերը,

որոնք ունեն թե՛ նշանագիտական, թե՛ ճանաչողական պայմանավորվածություն:

Սեմինարի ավարտին զեկուցողը պատասխանեց մի շարք հարցերի տալով պարզաբանումներ:

Հունիսի 19ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժինը հյուրընկալեց Լիբանանահայ օգնության խաչի «Անի» մասնաճյուղի ատենապետուհի և ուսուցչուհի Մարալ Վարդապետյանին: Ողջունելով հյուրին՝ հայոց լեզվի պատմության բաժնի վարիչ Գ. Մխիթարյանը կարևորեց Հայաստանի և Սփյուռքի մտավորականության ջանքերի համատեղումը՝ Սփյուռքում հայ ինքնության պահպանմանը նպաստելու, հայ գրական լեզվի երկու տարբերակների ուսումնասիրության և զարգացման ուղղությամբ աշխատանքներ ծավալելու նպատակով:

Ծավալվեց զրույց լիբանանահայ համայնքի կրթական, մշակութային տարբեր հարցերի շուրջ, քննարկվեցին հայկական ամենօրյա և մեկօրյա դպրոցների առջև ծառացած մարտահրավերներին առնչվող հարցեր:

Հունիսի 22ին ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում քննարկում ծավալվեց հեռուստատեսության լեզվի վերաբերյալ: Ինստիտուտի աշ-

խատակիցների հետ քննարկմանը մասնակցեց նաև դերասանուհի, բեմադրիչ, սցենարիստ, ՀՀ վաստակավոր արտիստուհի, պրոֆեսոր Լալա Մնացականյանը:

Լեզվի ինստիտուտի տնօրեն Վ.Կատվայանը ընդգծեց հեռուստաթերում հայերենի անսխալ և գեղեցիկ գործածության կարևորությունը, առաջ քաշեց գրական լեզվին առնչվող մի շարք խնդիրներ սկսած ուղղախոսությունից մինչև շարահյուսական կառույցներ: Ներկաները նշեցին, որ բեմից և մանավանդ հեռուստաթերից ակընկալում են գրագետ և գեղեցիկ խոսք, որը մեծապես պետք է նպաստի ընդհանուր լեզվամշակույթի բարելավմանը: Լեզվաբաններն անդրադարձան հատկապես հեռուստաթերիալների և որոշ երգիծական հաղորդումների խիստ աղավաղված լեզվին, եղան իրավիճակը շտկելուն միտված ծրագրային առաջարկներ:

Մատնանշելով տարածված լեզվական մի շարք սխալներ՝ Լ.Մնացականյանը համոզմունք հայտնեց, որ հայերենը, որպես ազգային պետական բարձրագույն արժեք, կարիք ունի թե՛ պետական, թե՛ հասարակական հոգածության:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը սկսել է հրապարակային դասախոսությունների շարք՝ նվիրված հայոց լեզվին և հայագիտությանն առնչվող տարաբնույթ հարցերի: Ս. թ. հունիսի 28-ին տեղի ունեցավ առաջին հրա-

պարակային դասախոսությունը՝ նվիրված նշանավոր հայագետ Հ. Հյուբշմանի ծննդյան 170-ամյակին: Բանախոսն էր ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ, Վ. Գ.Համբարձումյանը:

Բացման խոսքով հանդես եկավ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը՝ շնորհավորելով ներկաներին և կարևորելով նմանատիպ միջոցառումների անցկացումը լեզվի ինստիտուտում:

Բանախոս Վ. Գ. Համբարձումյանը հանդես եկավ բավական ընդգրկուն դասախոսությամբ, ներկայացրեց հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության բնագավառում հայերենի բնույթի և առանձնահատկությունների պարզաբանման հարցում Հ. Հյուբշմանի ներդրումը: Դասախոսությունը սկսվեց կենսագրական ակնարկով, այնուհետև բանախոսն անդրադարձավ բուն նյութին՝ հետևյալ խմբավորմամբ. 1) հայերենի վերաբերյալ հետաքրքրության առաջացման նախադրյալները, 2) աշխատությունների բնույթը և բնագավառները, 3) հայերենի առանձնացումը իրանականից և ինքնուրույն ճյուղի լեզու կարգելը. Հիմնավորումներ, 4) աշխատությունների հրապարակումները, 5) հայերեն թարգմանությունները, 6) գիտական ժառանգության վերլուծությունները, 7) Միֆթարյանների դերը եվրոպացի հայագետների համեմատաբանական գիտելիքների հիմքի ապահովման մեջ, 8) Ք. Պատկանյանի անուղղակի նպաս-

տը եվրոպացի համեմատաբանների գիտական գործունեությանը, 9) գիտական մասնագետների («կադրերի») պատրաստում հայերենի մասին գիտության բնագավառի համար, 10) Հ. Հյուբշման և Հ. Աճառյան. վերջինիս «Հայերեն արմատական բառարանը», 11) նոր խնդիրներ, նոր անելիքներ:

Ամփոփելով բանախոսը նշեց. «Հայոց լեզվի համեմատական ուսումնասիրության բնագավառում ապագայում, ինչ խոսք, նույնպես կլինեն նոր աշխատանքներ, որոնք շատ հարցերում անպայման առնչվելու են Հյուբշմանի, այսպես ասած, գիտական խիզախության արդյունք հանդիսացող գործերին՝ ի նպաստ հայերենի վերաբերյալ գիտության առաջընթացի:

Հայերենին այսօր տրվում է համեմատաբար ավելի կարևոր, եթե ոչ որոշ դեպքերում առաջնային տեղ հնդեվրոպական լեզուների ուսումնասիրության մեջ: Նա անդրադարձավ նաև այդ հարցին՝ Հյուբշմանի ստեղծած գիտական անվարան ավանդույթի առնչությամբ:

Որքան էլ կարող է պարադոքսալ թվալ, անցյալ և նախանցյալ դդ. 70-ական թթ. կեսերը հայերենի համեմատական (այլև տիպաբանական) քննության համար շրջադարձային պահերը եղան. 1875 թ. լույս ընծայած հայտնի ծավալուն հոդվածով Հյուբշմանը ազդարարեց հայերենի բնույթի մասին՝ իբրև ինքնուրույն ճյուղով ներկայացող առանձին լեզու հնդեվրոպական լեզուների մեջ, իսկ 1972 թ. Թ.

Գամկրելիձեն և Վյաչ. Իվանովը հանդես եկան գիտական հատուկ զեկուցումով, որում առաջարկություն էր մտցվում վերանայելու հնդեվրոպական նախալեզվի բաղաձայնական համակարգը՝ ելնելով ամենից առաջ հայերենի տվյալներից (հայերենի պայթական բաղաձայնների արխաիկությունը հատուկ նշանակում ստացավ նրանց երկհատոր աշխատության մեջ):

Ըստ այսմ՝ հայերենի համեմատական ուսումնասիրության պատմությունը, ըստ ժամանակի և ըստ նյութի ընդգրկման ծավալի, կարելի է առանձնացնել երեք փուլերի մեջ՝ ա) հայերենը իրանական ճյուղի լեզու, որի տվյալները մասնակիորեն են ներառվում լեզուների համեմատության մեջ, դրանց չի տրվում որոշակի կամ վճռական կարևորություն (1837-1875 թթ.), բ) հայերենը առանձին (ինքնուրույն) ճյուղի լեզու, որի տվյալները բավարար չափով ներառվում են լեզուների համեմատության մեջ, դրանց տրվում է համեմատաբար մեծ, սակայն ոչ վճռական աստիճանի կարևորություն (1875 թ. մինչև օրս՝ իբրև ավանդական կամ դասական, այլ կերպ ասած՝ «հյուբշմանյան» համեմատաբանություն), գ) հայերենը (մեկերկուսի հետ) բացառիկ կարևորության լեզու, որի տվյալներին տրվում է լիարժեք կամ վճռական տեղ լեզուների համեմատության (այլև տիպաբանության մեջ), որն ամենից առաջ իր արխաիկությամբ հիմք է հանդիսանում նախալեզվի բաղաձայնա-

կան համակարգի վերանայման առաջարկության (1970ական թթ. Մինչև մեր օրերը՝ իբրև ավանդականի կամ դասականի վրա լիովին հենված նորագույն, այլ կերպ ասած՝ «ձայնածերպային» [=«գլոտալ»] տեսություն):

Այս վերջին փուլի մեջ գրանցված կարևորագույն ձեռքբերումները վճռական նշանակություն ունեն հայերենի հետագա, ավելի մանրամասն և ավելի ծավալուն համեմատականտիպաբանական ուսումնասիրության համար»:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 75ամյակը նշանավորում է հանդիսությունների շարքով՝ նվիրված հայերենագիտության երախտավորներին, որոնք կանգնած են եղել ակադեմիայի, լեզվի ինստիտուտի հիմնադրման ակունքներում և մեծապես նպաստել են հայերենագիտության առաջընթացին: Շարքի առաջին միջոցառումը, որ նվիրված էր Հ.Աճառյանին, տեղի ունեցավ ս.թ. հոկտեմբերի 5ին: Հիմնադրման 75-ամյակի կապակցությամբ լեզվի ինստիտուտին ողջունելու էին եկել ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոսքարտուղար Յուրի Սուվարյանը, Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը, ՀՀ սփյուռքի նախարարության, ԳԱԱ տարբեր հաստատությունների, բուհերի ներկայացու-

ցիչներ, մտավորականներ, ուսանողներ: Բացման խոսքում ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվայանը ներկայացրեց հաստատության անցած ուղին, ձեռքբերումներն ու անելիքները: Նա մասնավորապես նշեց, որ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը իր հիմնադրման օրվանից շարունակել է հայ լեզվաբանական մտքի զարգացման նախորդ փուլերի ավանդները, գիտական գործակցություն է ծավալում ինչպես հայաստանյան, այնպես էլ արտերկրյա հայերենագիտական կենտրոնների հետ և առաջ մղելով գիտական միտքը՝ դարձել է նոր շրջանի հայերենագիտության կարևորագույն կենտրոնը:

Բարձր գնահատելով հաստատության ավանդը հայերենագիտության զարգացման գործում և ողջունելով ու շնորհավորելով լեզվի ինստիտուտի աշխատակիցներին՝ ակադեմիկոս Յու.Սուվարյանը նշեց. «Հպարտությամբ պետք է փաստել, որ ինստիտուտում իրենց կոթողային աշխատանքներն են ստեղծել այնպիսի հզոր հայագետներ, ինչպիսիք են Հրաչյա Աճառյանը, Արարատ Ղարիբյանը, Գրիգոր Ղափանցյանը, Գևորգ Զահուկյանը և ուրիշներ, իսկ լեզվաբանների հետագա սերունդները նրանց ժառանգության արժանի շարունակողներն են եղել»: Դավիթ Գյուրջինյանը ընդգծեց հայերենագիտության զարգացման, լեզվի անաղարտության պահպանման, արևմտահայերենի ուսումնասիրության գործում ինստիտուտի աշխատակիցների դերը և հետագա

գիտական ձեռքբերումներ մաղթեց ինստիտուտի գիտական անձնակազմին: Ողջույնի խոսք ասաց նաև Հայկական հանրագիտարանի տնօրեն Հ. Այվազյանը: Նա անդրադարձավ Հ. Աճառյանի և Հ. Թումանյանի նամակագրությանը՝ ներկայացնելով երկու մեծերի մտահոգության առարկա դարձած խնդիրները կրթության, գրական լեզվի ու բարբառների գործառության վերաբերյալ:

Հ. Աճառյանի կյանքը և գիտական գործունեությունը ներկայացրեց ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնի վարիչ Գ. Մխիթարյանը: Նա հանգամանորեն անդրադարձավ Հ. Աճառյանի հիմնարար աշխատություններին՝ նշելով, որ հայագիտության և լեզուների համեմատական քննության բազմազան ոլորտներում դրանք ելակետ և ուղենիշ են եղել հայ լեզվաբանների ու բանասերների մի շարք սերունդների համար ու դեռ երկար պահպանելու են իրենց գիտական մեծ արժեքը:

Հաջորդիվ տեղի ունեցավ Սոֆյա Աճառյանի «Իմ հուշերը Աճառյանի մասին» գրքի շնորհանդեսը: Գիրքը ներկայացրեց Հ. Աճառյանի զարմուհին՝ Բ.Գ.Դ. Ամալյա Խաչատրյանը:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, ի նշանավորումն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 75-ամյակի, նախաձեռնել է միջոցառումների շարք՝ նվիրված ակադեմիայի և լեզվի ինստիտուտի հիմնա-

դրման ու զարգացման ակունքներում կանգնած մեծանուն լեզվաբաններին: Ս.թ. հոկտեմբերի 29-ին տեղի ունեցավ շարքի երկրորդ միջոցառումը՝ նվիրված ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Բեգլարի Զահուկյանին: Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվայանը, ներկայացրեց ինստիտուտի անցած ուղին, կարևորեց Գ. Զահուկյանի մեծ ներդրումը ինստիտուտի կայացման և զարգացման գործում:

Լեզվի ինստիտուտին շնորհավորելու էին եկել ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը, Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը, ՀՀ սփյուռքի նախարարության, ԳԱԱ տարբեր հաստատությունների, ՀՀ բուհերի ներկայացուցիչներ, մտավորականներ, ուսանողներ:

Ողջունելով ներկաներին՝ ակադեմիկոս-քարտուղար Յու. Սուվարյանը նշեց, որ նմանատիպ միջոցառումները շատ կարևոր են, լիահույս է, որ հայ լեզվաբաններին նվիրված միջոցառումները շարունակական կլինեն: «Այսօր մեր խնդիրն է ոչ միայն գնահատել նրանց վաստակը, այլև փորձել շարունակել նրանց մեծ գործը: Ես երջանկություն եմ ունեցել աշխատելու ակադեմիկոս Զահուկյանի

հետ Հայերենի բարձրագույն խորհրդում, մեծ է նրա ներդրումը ընդհանուր և համեմատական լեզվաբանության ոլորտում, նրա դիտարկումները արժանի են համաշխարհային ճանաչման: Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջիյանը պատմեց Գ. Ջահուկյանի հետ ծանոթության մասին. դեռևս ուսանողական տարիներից Գ. Ջահուկյանը անվիճելի հեղինակություն էր իր համար, հայագիտության հսկան: Շնորհավորելով լեզվի ինստիտուտի հոբելյանական 75-ամյակը՝ Դ. Գյուրջիյանը մաղթեց, որ Ջահուկյանի դրած բարձր չափանիշը երբեք չխաթիվի: Սփյուռքի նախարարի և նախարարության բոլոր աշխատակիցների անունից ողջույնի խոսքով հանդես եկավ Հայկ Ենգիբարյանը, շնորհավորեց ակադեմիայի և լեզվի ինստիտուտի 75-ամյակը, մաղթեց, որ իր բարձր առաքելության մեջ ինստիտուտը միշտ հաջողի, իսկ Սփյուռքի նախարարության և լեզվի ինստիտուտի փոխգործակցությունը կշարունակվի՝ ի նպաստ հայերենի տարածման և հայապահպանության: ՀՀ գրողների միության նախագահի, նախագահության վարչության անունից շնորհավորական խոսքով հանդես եկավ գրողների միության քարտուղար Պետրոս Դեմիրճյանը: Որպես Գ. Ջահուկյանի նախկին ուսանող՝ մի քանի դրվագ պատմեց իր ուսանողական տարիներից: Բ.գ.թ., պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանը ողջույնի խոսքում նշեց. «Լեզվի ինստիտուտը կայացած հաստատություն

է հանրապետությունում, իր գոյության 75-ամյակի ընթացքում ստեղծել է մնայուն արժեքներ, իսկ այդ ֆոնին լեզվի ինստիտուտի կենսագրության մեջ եղել են անձինք, որոնք ոչ միայն լուրջ գիտնականներ, այլև գիտության կազմակերպիչներ են եղել, գիտության բարձրագույն արժեքներ դավանողներ՝ բարոյական վսեմ կերպարով... Այդպիսին էր Գ. Ջահուկյանը»:

Միջոցառման բանախոսն էր ինստիտուտի գիտաշխատող, բ.գ.թ. Մերի Սարգսյանը: Նա հանգամանակից ներկայացրեց Գ. Ջահուկյանի կյանքը և գիտական գործունեությունը, հատկապես հետաքրքիր էր տվյալների ներկայացումը թվերով: Մ. Սարգսյանն անդրադարձավ Գ. Ջահուկյանի հետազոտության բոլոր ոլորտներին՝ հայերենի համեմատական քերականություն, հայ քերականական մտքի պատմություն, հայոց լեզվի պատմություն, հայ բարբառագիտություն, ժամանակակից հայոց լեզվի նկարագրություն, հնդեվրոպական և նոստրատիկ լեզվաբանություն, ընդհանուր լեզվաբանություն, լեզվաբանության պատմություն, լեզվաբանության տեսություն...

«Հարստացնելով լեզվաբանության բնագավառը նոր մտքերով, որոնք հանդես են գալիս որպես ամբողջական համակարգեր, փորձելով նպաստել հայ և համաշխարհային լեզվաբանական մտքի զարգացմանը՝ Գ. Ջահուկյանն իր աշխատություններում առաջ է քաշել լեզվաբանական գանազան

խնդիրների լուծման ճշգրիտ ուղիներ: Կարելի է անվերապահորեն ասել, որ Գ. Ջահուկյանի շնորհիվ մի նոր բարձունքի է հասել հայ և համաշխարհային լեզվաբանական միտքը: Բանախոսը ելույթը եզրափակեց Գ. Ջահուկյանի բանաստեղծություններից մեկով:

Միջոցառման երկրորդ հատվածում ներկաներից ոմանք հանդես եկան ելույթներով, շնորհակալական խոսքեր հայտնեցին միջոցառման կազմակերպիչներին և բանախոսին, պատմեցին դրվագներ ու հուշեր Գ. Ջահուկյանի մասին, ևս մեկ անգամ արժևորեցին մեծ գիտնականի վաստակը: ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ. Լավրենտի Հովհաննիսյանը նշեց. «Ովքեր ծանոթ են Ջահուկյանին, կփաստեն, որ նա, ինչ մասնագիտություն էլ ընտրեր, լինելու էր առաջինը այդ ասպարեզում, երջանիկ ենք, որ առիթ ենք ունեցել մոտիկից ծանոթ լինելու նրան, շփվել նրա հետ, լսել նրա խորհուրդները: Նա համաշխարհային մեծ ճանաչում ունեցող գիտնական էր, մեծերի շարքում էր»: ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյանն ընդգծեց, որ համալսարանում ևս վառ է պահվում Գ. Ջահուկյանի հիշատակը, նրա անունով են անվանակոչել լսարաններից մեկը: Ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ Վազգեն Համբարձումյանը հուշեր և կյանքի դրվագներ պատմեց Գ. Ջահուկյանի աշխատանքային առօրյայից: Բ.գ.դ. Ռոբերտ Թոխմախյանը խոսեց Գ. Ջա-

հուկյանի գիտակազմակերպչական գործունեության մասին:

Միջոցառումը եզրափակվեց «Ջահուկյանական ընթերցումներ» մատենաշարի 13-րդ պրակի շնորհանդեսով: «Ջահուկյանական ընթերցումներ» մատենաշարի ստեղծման պատմությունը ներկայացրեց ինստիտուտի գիտական քարտուղար, բ.գ.թ. Անահիտ Աբրահամյանը: Նշեց, որ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի 75-ամյա բազմաթիվ հրատարակությունների շարքում առանձնանում է «Ջահուկյանական ընթերցումները». այն հարգանքի ու գնահատանքի յուրատեսակ դրսևորում է վաստակաշատ գիտնականի, դեկավարի, ավագ գործընկերոջ և մեծ ուսուցչի հանդեպ: Գ. Ջահուկյանի մահից մեկ տարի անց Լ. Շ. Հովհաննիսյանն առաջարկեց հրավիրել գիտաժողով՝ նվիրված Ջահուկյանի հիշատակին: 20062018 թվականների ընթացքում մատենաշարի պրակներում հրատարակվել է 380 հոդված, դրանց մի մասը նվիրված է Ջահուկյանի կյանքին և գործունեությանը: Մատենաշարը թեմատիկ լայն ընդգրկում ունի՝ արդի հայերեն, հայոց լեզվի պատմություն, բարբառագիտություն, ընդհանուր և կիրառական լեզվաբանություն, համեմատական լեզվաբանություն, բառարանագրություն... Ա. Աբրահամյանը նշեց, որ երախտագիտության խոսք պետք է ասել մատենաշարի խմբագրական խորհրդին, հատկապես ընդգծեց ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն Նազիկ Հովհաննիս-

յանի աշխատանքը՝ մատենաշարի յուրաքանչյուր ժողովածուի խմբագրման, սրբագրման և հրատարակության պատրաստելու գործում: Ամփոփելով խոսքը նշեց. «Լեզվաբան-հետազոտողները յուրաքանչյուր միտք թղթին հանձնելիս նորից ու նորից պետք է մտածեն. տեսնես՝ Ջահուկյանը ինչ կասի»...

2018թ. նոյեմբերի 1011-ը Մոսկվայի հայկական առաջնորդանիստ համալիրում կայացավ «Հայ մշակույթի ոսկեդարը. Համաշխարհային նշանակության նվաճումներ» խորագրով գիտաժողով, որը կազմակերպել էր Հայ Առաքելական Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմին առընթեր գործող Հայագիտության կենտրոնը՝ հոգածությամբ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի: Գիտաժողովին մասնակցում ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ տնօրեն, բ.գ.դ. Վ. Լ. Կատվայանը, ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ, բ.գ.դ. Վ. Գ. Համբարձումյանը, փոխտնօրեն, բ.գ.թ. Ն. Գ. Հովհաննիսյանը (հեռակա մասնակից), ավագ գիտաշխատակից, բ.գ.դ. Հ. Հ. Մեսրոպյանը, հայոց լեզվի պատմության բաժնի վարիչ, բ.գ.թ. Գ. Մ. Մխիթարյանը, բ.գ.թ., բ.գ.թ. Ս. Մ. Գրիգորյանը, Տ. Ս. Դալայանը, Գիտաժողովին մասնակցում էին նաև ՀՀ ԳԱԱ այլ ինստիտուտների գիտաշխատողներ,

այլև տարբեր երկրներից ժամանած մասնագետներ: Ոսկեդարի հայ մտածողների ստեղծագործական ժառանգությունը այսօր էլ կարևոր աղբյուրագիտական

նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի, ինչպես նաև հարևան երկրների ու ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար: Այդ տեսանկյունից գիտաժողովը խիստ արդիական էր:

Լիագումար և մասնաճյուղային նիստերում լսվեցին մոտ 50 զեկուցումներ և հաղորդումներ, որոնք նվիրված էին հայագիտության զարգացման հիմնական ուղղություններին ու գիտական նորություններին՝ արտացոլելով հայագիտական հետազոտությունների արդի մակարդակը: Պատահական չէ, որ մասնաճյուղային նիստերն ընթանում էին կարծիքների և տեսակետների բուռն քննարկումներով:

Զեկուցումներն աչքի ընկան տարաբնույթ թեմատիկայով՝ ընդգրկելով V դարի հայոց մշակույթի արժեքային բազմազանությունը՝ ինքնուրույն և թարգմանական գրականությամբ ներկայացված հայ դարբնություն, լեզվական, հոգևոր-մշակութային, ազգային-ժողովրդագրական և սոցիալքաղաքային առանձնահատկություններով բնութագրվող պատմական իրողություններից մինչև քաղաքակրթական միջմշակութային կապերի զարգացման հարուստ ավանդույթներ:

Գիտաժողովը կարևոր էր նաև ճանաչողական տեսանկյունից. Հայագետները եղան Սուրբ Պայծառակերպության մայր տաճարում, Սուրբ Խաչ եկեղեցում, համալիրի տարածքի «Տապան» թանգարանում, որտեղ ներկայացված էին հնատիպ գրքեր, Աստվածաշունչ մատյաններ, տարբեր բարերար հայորդիների՝ թեմին նվիրաբերած հայ անվանի նկարիչների կտավներ ու քանդակներ, Նարեկացու անվան դպրոցում, այցելեցին Ռուսիո մայրաքաղաքի պատմամշակութային վայրեր ու հուշարձաններ:

«Հայ մշակույթի ոսկեդարը. Համաշխարհային նշանակության նվաճումներ» գիտաժողովն ամփոփեց վերջին տարիներին հայագիտության ասպարեզում ձեռք բերած աշխատանքների արդյունքները՝ ակնհայտ դարձնելով այն փաստը, որ զգալիորեն աճել է ինչպես հանրապետական, այնպես էլ օտարերկրյա հետազոտողների գիտական հետաքրքրությունը հայ մշակույթի ոսկեդարի նկատմամբ:

Ս. թ. դեկտեմբերի 17ին և 21ին ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հիմնադրման 75-ամյակին նվիրված եզրափակիչ միջոցառումները՝ նվիրված մեծանուն լեզվաբաններ Գ. Ղափանցյանին և Ա. Ղարիբյանին: Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվալյանը, ներ-

կայացրեց ինստիտուտի կայացման ճանապարհին Գ. Ղափանցյանի և Ա. Ղարիբյանի մեծ ներդրումը: Մասնավորապես նշեց, որ Ա. Ղարիբյանը եղել է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի առաջին տնօրենը, կարևոր է նրա դերը ոչ միայն գիտության, այլև ինստիտուտի զարգացման մեջ: Հավելեց. «Կարծում եմ՝ դեռևս ըստ արժանվույն գնահատված չէ Ա. Ղարիբյանի գիտական ժառանգությունը, ժամանակն է նրա հայացքների վերաբնորման և համակողմանի ուսումնասիրության: Նմանատիպ միջոցառումները այդպիսի նպատակադրում ունեն, ոգևորում ու նոր լիցքեր են հաղորդում հետազոտողներին»:

Լեզվի ինստիտուտի գիտական անձնակազմին շնորհավորելու էին եկել ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը, Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը, Հայկական հանրագիտարանի տնօրեն Հ. Այվազյանը, ԳԱԱ տարբեր հաստատությունների, ՀՀ բուհերի ներկայացուցիչներ, մտավորականներ, ուսանողներ:

Գ. Ղափանցյանի կյանքը և գիտական գործունեությունը ներկայացրեց ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ Բ.Գ.Դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը: Նա հանգամանորեն անդրադարձավ Գ. Ղափանցյանի հիմնարար աշխատություններին՝ ներկայացնելով դրանց համակողմանի քննությունն ու վեր-

լուծությունը: Հաջորդիվ տեղի ունեցավ ԳԱԱ թղթակից անդամ Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն (III մաս). Խաղողագործություն և գինեգործություն» գրքի շնորհանդեսը: Գիրքը ներկայացրեց խմբագիրը՝ բ.գ.թ. Գ. Մխիթարյանը:

Ա. Ղարիբյանի գիտամանկավարժական գործունեությունը ներկայացրեց ինստիտուտի գիտաշխատակից, բ.գ.դ. Գ. Գևորգյանը: Բանախոսի ելույթից հետո ներկաներից մի քանիսը հանդես եկան ելույթներով: ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, բ.գ.դ. Արծրուն Ավագյանը շնորհավորեց ինստիտուտի աշխատակիցներին, խոսեց ինստիտուտի և համալսարանի սերտ համագործակցության մասին, որ տարիների պատմություն ունի: Ելույթը եզրափակեց

ԵՊՀ ռեկտորի ուղերձով՝ ուղղված ԳԱԱ լեզվի ինստիտուտին: Հուշեր և կյանքի դրվագներ պատմեցին Ա. Ղարիբյանին աշակերտած պրոֆեսորներ Ա. Դուլիսանյանը և Լ. Խաչատրյանը:

Միջոցառումը եզրափակվեց Վ. Կատվայանի «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր, Գիրք 1, Գեղարքունիքի մարզ» գրքի շնորհանդեսով: Գիրքը ներկայացրեց ինստիտուտի գիտաշխատակից, բ.գ.թ. Հ. Խաչատրյանը: Եզրափակիչ շնորհավորական ելույթով հանդես եկավ Հայկական հանրագիտարանի տնօրեն Հ. Այվազյանը, նշեց. «Բարբառագիտական կարևորագույն ուսումնասիրություն լինելուց բացի՝ այս գիրքը բանահյուսական լուրջ գանձարան է: Սա մեծ հաղթանակ է: Կեցցե՛ք»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոբելյանական

Գ. Մ. Մխիթարյան, Հրաչյա Աճառյան. կյանքը և գիտական գործունեությունը	3
--	---

Հ Ո Ղ Վ Ա Ծ Ն Ե Ր.

Ա. Կ. Բարլեզիզյան, Ֆրանսերեն դարձվածքների հայերեն թարգմանության մասին	17
Լ. Գ. Բրուտյան, «Ինչպե՞ս էք (ես)». որպիսության մասին խոսողական ակտը միջմշակության հաղորդակցման համատեքստում	25
Ս. Ա. Միքայելյան, Ձևաբանական և բառակազմական դիտարկումներ միջին հայերենի արաբական փոխառությունների վերաբերյալ	34

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վ. Գ. Համբարձումյան, Ստուգաբանական դիտարկումներ	41
Հ. Վ. Սուքիասյան, Ն. Ա. Թոռունյան, Ճյուղային տերմինարան կազմելու փորձ ուրուլոգիայի բնագավառում	47
Տ. Ղ. Միրունյան, Լատինաբանություններ Բարդուղիմեոս Մարադացու «Դիվելկտիկայում»	53

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Հ. Զ. Ղազարյան, Շրջասության ոճական հնարով ձևավորված դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում	62
Ս. Ս. Մանուչարյան, Գուսան Աշոտի տաղերի բարբառային նյութի քննություն	71

Գ Ր Ա Խ Ո Ս ՈՒ Թ Յ ՈՒՆ

Բարբառագիտական ուշագրավ մատենաշարի առաջին գիրքը	83
Ս. Ա. Միքայելյան, Անտիոքի հայերեն բարբառախմբի արաբական փոխառությունները, Ե., «Աստղիկ» հրատ., 2018, 196 էջ	86

Գ Ր Ք Ե Ր Ի Տ Ե Ս ՈՒ Թ Յ ՈՒՆ

Վ. Գ. Համբարձումյան, <i>Մոֆյա Աճառյան</i> , Իմ հուշերը Աճառյանի մասին, Ե., «Աստղիկ» հրատ., 2018, 284 էջ	88
ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ	90

СОДЕРЖАНИЕ

Г. М. Мхитарян, Р. Ачарян, Жизнь и научная деятельность.-3:

С т а т ь и: А. К. Барлезизян, Особенности перевода французских фразеологических единиц на армянский язык - 17: Л.Г. Брутян. “Как дела?”: речевой акт осведомления о делах в контексте межкультурной коммуникации - 25: С. А. Микаелян - Морфологические и словообразовательные особенности среднеармянских арабских заимствований-34: **Д и с к у с с и и о б с у ж д е н и я:** В. Г. А м б а р ц у м я н, Этимологические заметки- 41: Г. В. Сукиасян, Н. А. Торунян – “Урология – словарь – справочник” предназначен для урологов, студентов мед. учреждений и в целом для работников медицинской сферы-47: Т. Г. Сирунян. “Латинизмы в “Диалектике” Бартоломео Марагаци” - 53: **С о о б щ е н и я:** А. З. Казарян, Фразеологизмы, образованные путем перифразы в армянском, русском и английском языках -62: С. С. Манучарян,- Исследования диалектного материала в стихах Гусана Ашота -71: **Рецензии.** с. - 83: **Книжное обозрение.** 88: **Научная жизнь.** - 90

C O N T E N T S

G. M. Mkhitharyan, H. Acharyan: Life and Activity- 3 :

A r t i c l e s. A.K. Barlezizyan, About the Armenian Translation of the French Idioms - 17 : L. G. Brutian. “How are you?”: the speech act of inquiries about affairs in the context of intercultural communication - 25: S. A. Mikayelyan - The morphological and word-formative manifestations of Arabic borrowings of Middle Armenian period -34: **D i s c u s s i o n:** V. H. H a m b a r d z u m y a n, Etymological Reviews-41: H. V. Sukiasyan,N.Torunyan. Urology Dictionary and Directory is for urologists, medical students, and healthcare workersin general - 47: T. Gh Sirunyan, “The Latinisms in the “Dialectics” of Bartholomew Maraghatsi” -53: **R e p o r t s:** H. Z. Khazaryan . Armenian, russian and english phraseological units formed by periphrasis - 62: S. S. Manucharyan-The study of the dialectical material of the verses by GussanAshot.-71: **R e v i e w s.** 83 : **Bookreviews:** -88. **Science News.** - 90.

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան եզգվի նստիտուտը վերստին հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսել 2003 թ.:

Հոդվածները պետք է ուղարկել տպված և համակարգչային տեսքով (դիսկետով կամ կրիչով), 8-10 էջի սահմաններում, տողերի միջակայքը՝ 1.5, տառաչափը՝ 12 և Sylfaen տառատեսակով (ամփոփումները ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman): Վերևում նշվում է հեղինակի անունը, ազգանունը, հաստատության անվանումը, հոդվածի վերնագիրը:

Հղումները և գրականության ցանկը պետք է համապատասխանեն:

Խնդրում ենք գրախոսական հոդվածներն ուղարկել գրախոսվող գրքի հետ:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքէջ՝ www.language.sci.am

Էլ.փոստ՝ inslang@sci.am

Հանդեսի պատասխանատու քարտուղար՝ meri-sargsyan@mail.ru

К С В Е Д Е Н И Ю

НАН РА институт языка имени Р. Ачаряна заново издает журнал “Язык и языкознание”, первый номер которого был издан в 2003г.

Статьи следует присылать в виде распечатки и компьютерного набора (на дискете), объем - в пределах 8-10 машинописных страниц, интервал - 1,5, размер шрифта - 12, шрифт- Sylfaen (резюме на русском и английском - TimesNewRoman). В начале указываются имя, фамилия, наименование учреждения, заглавие статьи.

Ссылки и список литературы должны соответствовать друг другу.

Просим статьи с отзывом или рецензией прислать с рецензируемой книгой.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: inslang@sci.am

Ответственный секретарь: meri-sargsyan@mail.ru

ACKNOWLEDGEMENT

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.

Please, send articles in hard and soft (on diskette) copies, within 8-10 pages, line spacing- 1,5, font size- 12, fonts- Sylfaen (the summary in Russian and English - Times New Roman). Author's name, institution and contact data should be placed in the upper right corner of the title page.

References or footnotes should be adequate to the list of bibliography.

Please, send reviews with the corresponding book.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yerevan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: inslang@sci.am

Editorial secretary: meri-sargsyan@mail.ru

ԼԵԶՈՒ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ

LANGUAGE AND LINGUISTICS

2 (19)

2018

Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 936

Ստորագրված է տպագրության 03.04.2019թ.:

Չափսը՝ 70 x 100 ¹/₁₆, 6,5 տպագր. մամուլ:

Տպաքանակը՝ 200 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: